


ՄԵԾԱՊԱՏԻՒ

ՄՈՒՐԱՅՎԱՆՆԵՐԸ



Յ. Յ. ՊԱՐՈՆՅԱՆ



ՅՈՒՆԻ
ՏԱՐԱՊՈՒԹԻՒՆ • ՄԱՍԻՆ •
1953

30 JUL 2010

891.99

Դ-34

ՄԱՏԵՆԱԴԱՐ “ՄԱՍԻՍ”, ԹԻՒ 2

Յ. ՊԱՐՈՒԵԱՆ

ՄԵԾԱՊԱՏԻՒ

ՄՈՒՐԱՅԿԱՆՆԵՐԸ



Առաջին
Ժողովրդին «ՄԱՍԻՍ»
1933

8 JUL 2013

ՄԵԾԱՊԱՏԻՒ

ՍՈՒՐԱՑԿԱՆՆԵՐԸ



Ա.

Հազար ութը հարիւր եօթանասուն . . . չեմ չիշեր քանիին, Սեպտեմբերի երեսունը մէկին—ներեցէ՛ք, երեսունին պիտի ըսէի, վասն զի Սեպտեմբերն երեսուն օր միայն ունի—երկար և ընդարձակ թիկնոցի մը մէջ փաթուած միջահասակ և զիրուկ մարդ մը՝ որ Տրապիզոնի շոգենաւէն նոր ելած էր, Ղալաթիոյ նաւամատոյցին վրայ կայնած՝ նաւակէ մը իւր սնտուկները հանել կ'աշխատէր:

Կը տեսնէք, որչափ պարզութեամբ սկսայ: Պատմութիւնս հետաքրքրական ընելու ջանքով և անկից քանի մը հարիւր օրինակ աւելի ծափ ելու համար չըսի թէ նոյն օրն սաստիկ հով կար, թէ տեղատարափ անձրեւ կուգար, թէ խուռն բազմութիւն մը հետաքրքրութեամբ դէպի Ղալաթիոյ հրապարակը կը վազէր, թէ ոստիկանութիւնն աղջիկ մը ձերբակալած էր եւն. Խոսքեր, որով վիպասաններն կը սկսին միշտ իրենց վէպերը: Ես ալ կընայի ըսել այս ամէնը, ոչ ան-



2844-2010

ձրեւ, ոչ խուռան բազմութիւն և ոչ ալ ձերբակալուած
աղջիկ մը:

Ա'րդ, առանց կասկածելու հաւատացէք պատ-
մութեանս որ ժամանակակից դէպք մըն է:

Սյա ճամբորդն օժտուած էր զոյգ մը խոշոր և սե-
աչերով, զոյգ մը մեծ ականջներով և զոյգ մը քի-
թեր... չէ, չէ, մէկ քիթով թէպէտն բայց զոյգ քի-
թերու տեղ կրնան ծառայել. անոր մեծութիւնը որ-
խոլեցուց զիս: Ունէր այնպիսի նայուածք մը՝ որուն
եթէ պ. Յ. Վարդովեան հանդիպէր իւր աչերով կը
հարցունէր այդ մարդուն. «Փ՞նչ ամսական կ'ուզես
թատրոնիս մէջ ապուշի դեր կատարելու համար»:

Ենտու կներն և անկողինը որ քուրջի մը մէջ ներ-
փակուած էր, նաւակէն հանելուն պէս ճամբորդն քա-
շեց քսակն և նաւավարին իրաւունքը վճարելով՝ բեռ-
նակիր մը կանչեց: Հինգ բեռնակիրներ ներկայացան ի-
րեն: Տարակոյս չկայ որ եթէ հինգ կանչէր՝ քսան և
հինգ պիտի ունենար իւր առջեւ մայրաքաղաքիս սովո-
րութեանը համեմատ:

— Ո՞ր կողմ պիտի երթաք, աղա, հարցուց բեռ-
նակիրներէն մին՝ մէկ ստքը սնտուկներէն միոյն վրայ
կոխելով:

— Բերա, Ծաղիկ փողոց թիւ 2 պիտի երթամ,
պատասխանեց խոշոր մարդը:

— Շատ աղէկ, հասկցայ, Բերա, Ծաղիկ փողոց
... պատուական փողոց մըն է, ըսաւ հարցումն ընող
բեռնակիրն և սնտուկ մը շալկելով սկսաւ երթալ:

— Ծաղիկ փողոցն ես ալ զիտեմ, ըսաւ երկրորդ
բեռնակիրն և սնտուկին մէկն ալ ինք առնելուն պէս
Բերայի ճամբան բռնեց:

— Ես ամէն օր կ'երթամ Ծաղիկ փողոցն, ըսաւ
երրորդն և մարդուն անկողինն զետնչն վերցնելն կըռ-
նակին վրայ առնելն ու վազելն մէկ ըրաւ:

Այս գործողութիւններն այնքան արագութեամբ
կատարուեցան որ մարդը շուարելով սկսաւ չօրս կող-
մը նայիլ տեսնելու համար բեռնակիրներն որ բազ-
մութեան մէջ անյայտ եղած էին:

— Ի՞նչ խայտառակութիւն է աս, պօռաց վեր-
ջապէս ստքերը գետինը զարնելով, ո՞ւր տարին ան-
կողինս և սնտուկներս, ասոնք ի՞նչ իրաւունք ունին
իմ անկողնոյս և սնտուկներուն խառնուելու, ի՞նչ ա-
ներես մարդ են եղեր այս տեղաց մարդերը, ինչ որ
կը տեսնեն կ'առնեն կը տանին:

— Ծաղիկ փողոցը մենք ալ զիտենք, աղա, մե-
զի ալ բան մը տուր որ տանինք, ըսին միւս երկու
բեռնակիրները:

— Ծաղիկ փողոցն ալ զետնին տակն անցնի գուք
ալ, պատասխանեց մարդն որուն այտերն նեղութեանք
կարմրիլ սկսած էին:

Երկու բեռնակիրները խնդալով հեռացան. և
ճամբորդն ալ իւր սնտուկներուն ետեւէն երթալ կը
պատրաստուէր երր բարձրահասակ, թխաղէմ փոքր
աչերով մարդ մը՝ ուսերը տնկած ձեռները շիկելով և
րոնազգօսիկ ժափառվ մը մօտեցաւ անոր և քաղաքա-
վարական ձեռով մը ձեռները բռնելով հարցուց.

— Դո՞ւք էք Աբիսողոմ աղա, ե՞րբ եկաք, ո՞ր
շոգենաւով եկաք, ի՞նչպէս էք», ձեր եղբայրն ի՞նչպէս
է, ազգային զործերն ի՞նչպէս են Տրապիզոնի մէջ, հա-
ցին զինը քանի՞ է, հոն անձրեւ եկա՞ւ այս օրերս ձեր
քաղաքը... վայ, Աբիսողոմ աղա, վայ...

— Ես եմ Աբիսողոմ աղան, հիմայ եկայ, տաճ-
կի շոգենաւով եկայ, շատ աղէկ եմ, եղբայրս ալ ա-
ղէկ է, ազգային զործերն ալ աղէկ են Տրապիզոն,
հացին զինը մէկ դահեկան է, անձրեւ չեկաւ այ-
օրերս մեր քաղաքը, պատասխանեց փութով թիկնո-
ցաբնակն առանց ճանաչելու այս անձն:

— Ներեցէ՞ք, թողութիւն ըրէ՞ք որ չկրցի մինչև շոգենաւ գալ զձեզ դիմաւորելու համար։ Ինձի դրուած էր Տրապիզոնէն որ այս շաբթու անպատճառ հոս պիտի գաք……

— Ես ատանկ բաներու չեմ հայիր։

— Արդարև մայրաքաղաքս ի՞նքնի՞նքը բաղդաւոր համարելու է ձեզի պէս պատուական ազգային մը, շնորհալի երիտասարդ մը, ողջամիտ մէկը……

— Մնտուկներս……

— Ազնիւ սիրտ մը, վեհանձն հոգի մը……

— Բեռնա……

— Հայրենասէր անձ մը……

— ... կիրները……

— Ազգասէր, ուսեալ, կրթեալ……

— Մնտուկ……

— Դաստիարակեալ……

— ... ներս առին տարին……

— Ազնուասիրտ, ազնուախոհ, ազնուադէմ մէ.

Կը իւր մէջ ունենալուն համար։

— Մնտուկներուս մէջ ատանկ բաներ չկան, պատասխանեց Արիսողոմ աղան քալել սկսելով բեռնակիրները գտնելու համար։

— Թէպէտեւ գուք զիս չէք ճանչնար՝ բայց ես ձեր գերգաստանը խիստ լաւ կը ճանչնամ։ Ձեր լուսահոգի հայրն իմ լրազրոյս բաժանորդ էր։ Շատ բարի մարդ մըն էր աղքատներուն ողորմութիւն կուտար, աղքատ աղջիկներ կը կարգէր և իրեն դիմողներուն բարութիւն կ'ընէր։ Ասանկ սղորմած մարդերը շատ ապրելու են. բայց ի՞նչ օգուտ, անգութ մահը միշտ բարիները կ'առնէ և թող կուտայ որ չարերն աղջին չարութիւն ընեն։ Թողունք սակայն հիները և ուրիշ բանի վրայ խօսինք, Շոգենաւին մէջ հանգի՞ստ է իք։

— Շատ հանգիստ էի, պատուականապէս կերայ, խմեցի և պառկեցայ, պատասխանեց Արիսողոմ աղան քայլերն շուտ և մեծ առնել սկսելով։

— Եթէ հանգիստ չըլլայիք՝ վաղուան լրազրոյս մէջ պիտի զրէի և ընկերութեան ուշադրութեան պիտի յանձնէի, ըստ իմբազիրն ետեւէն վազելով։

— Շնորհակալ եմ։

— Կ'աղաչեմ, ըսէ՞ք ինձի, քանի՞ տարեկան էք։

— Քառասուն։

— Վաճառական էք, կարծեմ։

— Այո՛... եթէ անցազիր պիտի շինել տաք՝ հարկ չկայ, վասն զի հատ մը ունիմ։

— Զէ, վաղուան թերթիս մէջ պիտի զրեմ որ առջի օր Տրապիզո՛ւն մայրաքաղաքս եկաւ Մեծապատիւ Արիսողոմ աղան երեւելի վաճառականն որ իւր լեզուագիտութեամբն և վաճառականական հմտութեամբն ծանօթ է մեր ազգայիններուն։ Տաճկերէն պիտէք կարծեմ։

— Ո՛չ։

— Ֆրանսերէ՞ն։

— Ո՛չ։

— Անգլիերէ՞ն։

— Ո՛չ։

— Գերմաներէ՞ն։

— Ո՛չ։

— Վնաս չունի, ես լեզուագէտ պիտի ըսեմ ձեզի համար և ձեր վրայօք գովեստով պիտի խօսիմ։

— Ամէն Պոլիս եկողներուն անունները ձեր թերթին մէջ կը գրէ՞ք։

— Գրեթէ կը գրենք, եթէ ձեզի պէս պատուաւոր աղջայիններ ըլլան։

— Պոլիսէն գացողներն ալ կը գրէ՞ք։

— Գրեթէ կը գրենք, եթէ պատուաւոր աղջայիններ ըլլան։

— Շատ լաւ, իմ անունս ալ գրեցէ՞ք, ես ալ
պատուաւոր ազգային մըն եմ: Մեր քաղաքին մէջը ար-
տերու, եղերու, կովերու և ազարակներու տէր եմ...
Ասոնք ալ գրէ՛, բայ այնպիսի դէմքով մը որ կը
յայտնէր թէ մեծ շահ մը ունէր այս խօսքերուն հրա-
տարակութեանը մէջ :

— Հոգ մի՛ ընէք . խզի և արդարութեան պարտք
մը կատարելու համար անոնք ալ կը զբաժ :

— Երկու երեք հատ սպասաւոր ալ ունիմ . . . ա-
նընք ալ լրագրութ մէկ կողմբ կրնա՞ս անցունել:

— 184 —

— Ուսկիէ ժամացոյց և շդթայ ալ ունիմ , բայց շո-
գենաւուն մէջ չգողցնելու համար վրաս չառի . անոնք
ալ զրել պէտք է , հարցուց Արիստոլ աղան որ բո-
լորովին մոռցած էր անտուկները :

— Ատոնք զրելու հարկ չկայ :

— Շատ լաւ, բայց միւս ըստածներս լրադրոյդ է է
առևտնա առաջ դիր որ ամէնքը կարդան։

— Անականական միտք ունիմ :

— Խաղաղ գրեթե զբէ։

— չանգիստ եղէք, ամէնէն խոշոր զբերով :

— Հ ա յ ո ւ ն ա ս տ ա ս տ մ ա ր դ ե ր ո ւ ն գ ա լ ն և ե ր թ ա կ ա ռ է ր ։ ա ն ա է ս է ՞ :

— 119 —

— Եթէ աղքատ մարդերն ալ կը զրե՞ք՝ չեմ ուզեր
որ իմ անունս . . .

— Բնաւ երբեք, ստակ չունեցողներուն անուն
ները բնաւ չենք գրեր՝ նոյն իսկ եթէ հազար սսկի ալ
տուած բլլան դպրոցի մը շինութեան համար:

— Հսել է որ գուք ամէն իրիկուն հոս կ'սպասէք
Պոլիս եկող կամ անկից մեկնող հարուստները տեսնե-
լու և անոնց անունները հրատարակելու համար, որ-
պէս զի ժողովուրդն զիտնայ թէ ո'վ եկած է և ո'վ

զագած է . . . տարսակցյա չկայ որ վաղը իրիկուն իմ առունես պիտի կարդամ ձեր լրացրին մէջ :

— Այս՝ ձեր հասցէն տուէք որ տեղական թըգթատարով դրկեմ լրացիրը:

— Բերա , Ծաղիկ Փողոց թիւ 2 :

— Ծատ աղէկ, ըստու իսմրազիրն և գրպանէն
դթ մը հանելով բաժանորդներուն ցուցակին մէջ
ց Արխառոյմ աղան:

— Վաղը առտու, լուսը չնդքուած զրկէ որ կարդամ իմ անունս լրացրին մէջ :

— Իրիկուան գէմ կը զբկեմ. վասպի լրագիրս
իրիկուանները կը տպուի:

— Ո՞րչո՞վ ուրախ կ'ըլլայի եթէ ձեր վաղուան լը-
րազիրն առուան տպէիք . . . բայց վնաս չունի, իրիկ-
ուան թո՛ղ ըլլայ. բաւական է որ անունս խոշոր գի-
բերով գրուի:

— Այդ ժաման հանգիստ եղէ՞ք . վազը լրիկուն
անպատճառ կը դրկեմ լրացիրն ընկալազրագ :

— Տեղական թղթատարով պիտի դրէէիք համար . . . Ինկաւասե՞ն սովէ է, տունս գիտէ՞ . . .

— Ընկալազիբը թուղթ մըն է որուն մէջ կը զը-
րեմ. «Ընկալայ մեծապատիւ Արիսողոմ աղայէն...
լրագրոյ տարեկան բաժանորդագին մէկ ու կէս ոսկի-
և այդ թուղթը ձեզի կը յանձնեմ որով տարի մը ի-
ռաւունչը կ'ունենար իմ լրագիրս ընդունելու:

— Տարր սը չարուշակ պիտի գրէ ք Ի՞ւ —
— Զէ՛, բայց դուք բաժանորդ պիտի ըլլաք իւ
լրագրոյս, մէկ ու կէս ոսկի վճարելով ինծի:

— Մէկ ու կէս ոսկի՛ ։ Համար է ։ Երեք քառ

— կմբագիրները բաժանուրդագնոյն վրայ սահմանական էին, ու ի հայտ

— Շատ լաւ, զրկեցէք ձեր լրազիրն և այն թուղթը, բան մը կ'ընենք:

— Սակայն չկարծէք թէ ես բաժանորդ զրելու նպատակաւ զձեզ տեսնելու եկայ. քաւ լիցի, այդ պատիկութիւնը չեմ ընդունիր, բարեկամական պարտք մը կատարելու համար եկայ զձեզ տեսնելու:

— Յայտնի բան է:

— Բնաւ ձեր մաքէն չանցունէք թէ այս մարդը մէկ ու կէս ոսկի փրցնելու համար զիս տեսնելու եկաւ:

— Զեմ անցուներ:

— Վասնզի կան խել մը մուրացկան խմբազիրներ, որոնք Պոլիս եկողները կողոպտելու համար անոնց քովը կ'երթան և բաժանորդ կը զրեն զանոնք. ես այդ բանը չեմ կարող ընել, վասնզի բնութեանո մէջ չկայ... ես իբրեւ պատուաւոր մարդ կ'ուզեմ ապրիլ:

— Հասկցայ, իբրեւ պատուաւոր մարդ կ'ուզէք ապրիլ:

— Ինձի հետ ձեր այս ունեցած տեսակցութիւնն ալ ուրիշի մի՛ զրուցէք, վասնզի տեսակ մը բախաւախնդիր, չուառական անձեր կան, որոնք բանդագուշական կենսազրութիւններ կը զրեն և իմ անձնականութիւնս կը խծրեն:

— Կը հասկնամ, անձնականութիւնդ կը խծրը. ձեն:

— Օրինակի համար, սա պարագային մէջ յանցանք մը ունի՞մ ես. զձեզ դիմաւորելու եկայ և խոսացայ ձեր անունը լրագրուս մէջ հրատարակել. դուք ալ իբրեւ ողջամիտ ազգային մը, բաժանորդ գրուեցաք. կ'աղաչեմ, ըսէք, ձեր կոկո՞րդը սիսմեցի որ ինձ բաժանորդ գրուիք:

— Ամենեւին:

— Ատրճանա՞կ ցցուցի:

— Բնաւ երբեք:

— Դանա՞կ քաշեցի:

— Ո՛չ, բայց ուրիշ տեղեր ատրճանակ կամ դանա՞կ ցցունելով բաժանորդ կը զրեն:

— Առ ըսել չեմ ուզեր, սա ըսել կ'ուզեմ որ դուք ձեր յօժար կամքովը բաժանորդ գրուեցաք:

— Այո՛:

— Եւ ես վեհանձնաբար վարուեցայ այս պարագային մէջ:

— Տարակոյս չկայ:

— Զվարուեցայ այն խմբազիրներուն պէս որոնք օտարականի մը Պոլիս գալն իմանալնուն պէս՝ վազելով անոր տունը կ'երթան բաժանորդ զրելու համար:

— Այդ չուառականներն իրաւունք չունին քու անձնականութիւնդ խծրելու... դուն վստահ եղիր ինծի...

— Ծնորհակալ եմ ձեզմէ. մնաք բարով Արիսողոմ աղա, օր մը մեր խմբազրատունը հրամմեցէք խահուէ մը խմելու:

— Շատ աղէկ, օր մը կուզամ: Վաղուանին մէջ անցունելու չմոռնաք:

— Անհոգ եղէք:

Արիսողոմ աղան և խմբազիրն բաժանուեցան իրարմէ Բերայի քառուղւոյն առջեւ, ուր հասած էին խօսելով:

Արիսողոմ աղան առանձին մնալով, սկսաւ ճամբան շարունակել, ինքնիրեն հետեւեալ խորհրդածութիւնները ընելով.

«Ես ինքզինքս չէի կարծեր այնչափ մեծ մարդ, որչափ որ կը կարծէ այս խմբազիրն. բայց հարկաւ ան ինձմէ աղէկ զիտէ իմ որչափ մեծ ըլլալս, վասնզի խմբազիր մըն է և ուսումնական է... Վաղը լրազրի մէջ իմ անունս տեսնողները անշուշտ իրար պիտի

անցնին և հետաքրքրութիւն պիտի ունենան ինծի հետ
տեսնուելու . . . վաղը պէտք է որ կիրակի օրուան հա-
գուստներս հազնիմ և ոսկիէ ժամացոյցս ու շղթաս
ալ դնեմ . սպասաւորներս ալ հետո բերելու էի , ո՞վ
զիտէր . . . Ամէն մարդ պիտի իմանայ վաղը որ մեծ
մարդ մը եկած է կ . Պոլիս , ազնուախոն , ազնուա-
սիրտ , լեզուագէտ , ուսումնական , դաստիարակեալ ,
կրթեալ եւլն . մէկը , և իւրաքանչիւր կնիկ պիտի ր-
սէ իւր էրկանը . «Մեր աղջիկը սա Արիսողոմ աղային
տանք» ; էրիկն ալ պիտի պատասխանէ կնկանը . «Նա-
յինք Արիսողոմ աղան մեր աղջիկը կ'առնէ , անիկա
հարուստ տեղէ մը աղջիկ առնել կ'ուզէ հարկաւ . . . այս
պատասխանին վրայ էրկան և կնկան մէջ վէճ մը պի-
տի ծագի և իրարու զլուխ պիտի պատռեն . որո՞ւ
հոգ . . . Անունիս լրազրին մէջ անցնիլն սա օգուտն
պիտի ունենայ որ երկու օրուան մէջ հարուստ աղ-
ջիկ մը առնելով պիտի լմնցունեմ ամուսնութեան գոր-
ծըն՝ որու համար միայն եկած եմ հոս . . . այս ա-
մուս . . .

Աղիւս բեռցուած էշերու կարաւանէն էշ մը
բախուելով Արիսողոմ աղային դէմ , ընդմիջեց զայն
իւր խորհրդածութիւններուն մէջ , ուր ընկզմուած
ըլլալով ուշադրութիւն չէր ըներ առջեւէն եկող էշե-
րուն , որոնցմով իր է միշտ Բերայի մեծ փողոցը :

— Մէկդի կեցիր , ըսաւ իշավար Պարսիկն Արի-
սողոմ աղային , արդարացնել ուզելով իւր էշը .
— Ատ խօսքը առաջ ըսելու էիր որ զգուշանա-
յի , պատասխանեց Արիսողոմ աղան և ճամբան շա-
րունակեց :

Բ.

Բեռնակիրներն ոչ լսած և ոչ ալ տեսած էին
Մաղիկ փողոցն , բայց քաջալերուելով կարդ մը մար-
դերէ որոնք զիտնալ կը ձեւացունեն ինչ որ չեն . զի-

աեր և որոնք խիստ բազմաթիւ են մեր ազգին մէջ .
համարձակած էին ըսել Արիսողոմ աղային թէ շատ ա-
ղէկ զիտէին Մաղիկ փողոցը :

Բեռնակիրներուն այս յանդզնութիւնն այնքան
պարաւելի չէ որչափ այս մարդերունն որ խոհա-
րարութիւն ուսած են և բանադատութիւն . կ'ընեն
կամ քիչ մը երկրաչափութեան պարապած ըլլալով՝
սատղերուն շարժումներուն վրայօք կը ճառեն , կտմ
երկու սագ և չորս կով մեծցուցած ըլլալով՝ դաստի-
արակութեան խնդիր կը յուզեն կամ զաւակ մը ունե-
ցած ըլլալով առաջին մարդուն որ աշխարհի մէջ ծը-
նած ըլլալուն վրայ կ'ատեն արանեն կամ վերջապէս
անանկ նիւթի մը վրայ կը խօսին որ բոլորովին օ-
տար է իրենց . այո՛ , այս մարդերուն յանդզնութիւնն
տւելի պարսաւելի է , վասնզի բանադատութիւնը կամ
սատղագիտութիւնն կամ մանկատածութիւնն եւլն .
Մաղիկ փողոց չէ որ ուրիշներուն հարցնելով անմի-
ջապէս սորվի մարդ : Եւ արդարեւ բեռնակիրներն՝ ա-
մէն քայլափոխին՝ իրենց դէմը ելլողներուն հարցու-
նելով անմիջապէս զաան Մաղիկ փողոցն և թիւ 2 տան
դուոր զարկին , մինչեւ ես շատ տեսնաբաններ մը-
տիկ ըրած եմ որ եօթը ութը ժամ շարունակ խօսե-
լով չեն կարողացած իրենց փնտոած փողոցը զանել և
ստիպուած են ուրիշ փողոցներու մէջ թափառիլ և
թափառեցնել իրենց ունկնդիրներն անոնց քթէն բըռ-
նելով :

Բեռնակիրները դուոր զարնելուն պէս դուոր
բացուեցաւ և ներկայացաւ իրենց թուխ և երկար
դէմքով կին մը՝ որուն դէմքին վրայ յամանակն
այնքան զծեր զծած էր զայն սրբազրելու համար , որ-
քան որ կը գծէ Մասիսի խմբագիրն իւր չորս տող
մէկ ձեռագրին վրայ որ կամ մէկուն վախճանիլը կ'ի-
մացունէ և կամ ուրիշի մը կարգուիլը :

Բեռնակիրները դոնէն ներս մտնելով բեռները
զետինը ձգեցին և սկսան իրենց քրախնքը սրբել։
— Արիսողոմ աղային ըլլալու են առոնք, այն-
պէս չէ, հարցուց բեռնակիրներուն թխադէմ տիկի-
նը։
— Անունը չըսաւ մեղի, պատասխանեց բեռնա-
կիրներէն մին սեւ թաշկինակովն զլխուն քրախնքը
սրբելը շարունակելով։
— Ի՞նչ տեսակ մարդ էր։
— Խոշոր թիկնոց մը հագած էր։
— Ի՞նչ գոյնով էր, ճերմա՞կ թէ թուխ։
— Ոչ, սեւ էր։
— Սե՞ւ էր։
— Այո՛, սեւ բայց աղուոր, անոր փաթառողը
ձմեռը չմսիր։
— Աս ի՞նչ խօսք է փաթառելին ի՞նչ պիտի ըլ-
լայ . . . ես քու զիտցած կնիկներէդ չեմ, հասկցա՞ր,
ըսաւ տիկինը, իւր խօսքերը շեշտելով։
— Վնասակար բան մը չըսի, փաթառելով ի՞նչ
կ'ըլլայ եղեր, պատասխանեց բեռնակիրն աթոռի մը
վրայ փուելով իւր թաշկինակն։
— Ատկէ աւելի վնասակար ի՞նչ կրնայ ըլլալ։
— Շատ բարակ բաներու մեր խելքը չի պառկիր։
— Ես կը պառկեցնեմ դուն զիս կը ճանչնա՞ս . . .
— Փաթառելին ի՞նչ վնաս կուգայ։
— Ես էրիկ ունիմ, ինչո՞ւ պիտի փաթառեմ
եղեր անոր։
— Էրիկ ունեցողներն ալ կը փաթառեին, էրիկն
ուրիշ՝ աս ուրիշ. աս կը տաքցունէ։ Ըսենք որ ձը-
մեռը զիւեր մը դուրս ելար, փողոցին մէջ էրկանդ
չես կրնար փաթառել, բայց աս կոնակդ կ'առնես . . .
— Արիսողո՞մ աղան։

— Թիկնոցը, տիկին . . . Արիսողոմ աղան կանա-
կի վրայ կ'առնուի։
— Մինչեւ հիմայ թիկնոցի վրայ կը խօսէիր։
— Խօսքերնիս թիկնոցի վրայ չէ՞ր մի . . . հապա-
դուն ի՞նչ հասկցար։
— Ես հասկցայ որ Արիսողոմ աղային փաթառե-
լու է կ'ըսես։
— Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր Աստ-
ուած, ըսաւ բեռնակիրն թաշկինակը քաշելով աթո-
ռէն։
Տիկինն բեռնակիրն տուած բացատրութենէն զոհ
ըլլալով՝ հրամայական եղանակով մը ըսաւ։
— Սա անկողինն և սնառուկները վե՛ր հանեցէք։
Բեռնակիրներն հնազանդելով բեռներն նորէն վեր-
ցուցին, և հազիւ թէ սանդուխին առաջին աստիճա-
նին վրայ կոխած էին՝ տիկինը պօռաց։
— Լեռնէն եկաք դուք։
— Ոչ, մեծ փողոցէն եկանք։
— Գիտեմ որ մեծ փողոցէն եկաք, այդ ոտքի
ամաներով վեր կ'ելլուի, տեսէ՛ք ի՞նչ ըրիք տախ-
տակներս, և այսօր սրբեցի զանոնք և հոգիս բերա-
նըս եկաւ։
— Ի՞նչ ընենք, ուրիշ ոտքի աման չունինք։
— Ինչո՞ւ կայներ երեսս կը նայիք, չնանէ՞ք
տըւոնք։
— Մի՛ պօռար, տիկին, մի՛ պօռար, կը հա-
նենք։
Եւ հանեցին իրենց ոտներն։
— Այդ ոտքերով վեր պիտի ելլէք. կրկնեց տի-
կին։
— Ուրիշ ոտք ունի՞նք, այս ոտքերով պիտի ել-
լենք, պատասխանեցին պանդուխտներն այնպիսի
խեղձուկ կերպով մը որ կարծես թէ իրենց աղքա-

առ թեան պատճառաւ երկու ոտքէն աւելի չէին կը քած ունենալ, և որպէս թէ հարուստներն չորս, հինգ կամ վեց ոտք ունեցած ըլլային:

— Վա՞ր իջէք, չեմ ուղեր, գետինը ձգեցէ՞ք, ես կը տանիմ:

— Ատանկ աւելի աղէկ կ'ըլլայ:

— Ահ, ես ի՞նչ ըսեմ իմինիս որ զործի չերթար, և առառընէ մինչեւ իրիկուն սրծարանները կ'երթայ կը նստի, ազգային զործերու վրայ կը խօսի, զիս առնկ խեղճ կը թողու և ես ալ կը ստիպուիմ տունս մարդ գնելու, մոմոաց ինքնիրեն տիկինն և սանդուիրին առջեւ դրուած թաց լաթով մը սանդուիրին առաջին առտիճանը սրբել սկսու:

— Տիկին, մենք սպասե՞նք պիտի...

— Եթէ խելքը գլուխը մէկն ըլլար՝ շարունակեց տիկինն ի՞նքնիրեն, ես հիմա թաղուհիի մը պէս կեանք կ'անցունէի, զաւակ չունիմ, բան չունիմ. բայց ի՞նչ ընեմ որ խելքը միտքը թաղական ընտրելու և թաղական վար առնելու վրայ է: Աստուծմէ գտնան այն թաղականներն ալ որ ամէնուս խեղճութեանը պատճառ կ'ըլլան կոր: Ինչո՛ւդ պէտք քուկին, տնաշէ՛ն, ուղողը նստի, չուղողը չնստի, դո՞ւն միացիր այսպղին զործերը շակող...

— Տիկին, մեր իրաւունքը տուր որ երթանք, պարապ տեղը չսպասենք հոռ, ըսին բեռնակիրները:

— Վաղը եկէք, պատասխանեց տիկինն. և բեռնակիրներն, որոնք վաղը բառն ամէն օր լսելու վարժւած էին. տիկնոջ պատասխանին վրայ դոնէն դուրս ելան:

— Թաղականի մը ետեւէն է ինկեր, շարունակեց տիկինն դարձեալ, և ընաւ չմտմտար որ ուտելու համար հաց պէտք է, միս պէտք է, եղ պէտք է, բրինձ պէտք է, զանոնք եփելու համար փայտ պէտք

է, ածուխ պէտք է. ասոնք բնաւ չնարգուներ, առառըն լուսը չճեղքուած կ'երթայ և իրիկուան մութին կուգոյ: Ահա հիւրերն/ս այսօր եկած է, և ժամէ մը հոս պիտի գայ: Հարկաւ անօթի է մարդն, առջեւը բան մը հանելու է որ ուտէ և մենք բան մը չունինք, վասնզի իրիկունները տուն եկած ժամանակը կտոր մը մին կամ ձուկ չըերեր որ տունին մէջ կերակուր զանուի... թաղականէն ուրիշ բան չունինք տուններնուս մէջ, ամէն իրիկուն թաղաք կան...

Տիկինն զես զիտովութիւններն լմնցուցած չէր և ահա եօթանասունի մօտ մարդ մը որ բանալիով բացած էր զուռն՝ մալիտով ներս մտաւ և բարեւեց տիկինն: Այս մուրզը տիկնոջ ամուսինն էր: Իւր խորշ կունտ ճակատն չափէն աւելի դուրս ցցուած էր և այնպիսի զէմք մը ունէր որ կարծես թէ մէկն զայն կը խորտէր:

Այս մարդն հազիւ թէ զուսն սեմէն ներս ոտք կոխած էր՝ կինն առջեւն ելլնելով հարցուց անոր.

— Ուր էիր մինչեւ հիմայ, մարդ Աստուծոյ:

— Զես ըսեր, կինկ, թաղականին զործն ալ այսօր լմնցուցինք: Կիրակի օրը քուէարկութիւնը պիտի կատարուի, և բոլոր անդամները պատուաւոր մարդիկ պիտի ըլլան: Թորոս աղան ինծի քանի մը օղի խմցունելով ետեւէս ինկաւ որ իւր ուղած մարդոցը քուէ տամ: Բայց ես իմ մարդոցս տուի, վասնզի իմ մարդիկս ինձ ամէն զիշեր օղի կը խմցնեն և շատ բարի և շատ պատուաւոր մարդիկ են, ուրիշներուն պէս թաղին սնտուկէն ստակ չեն զաղնար, և դպրոցըն ալ...

— Այդ խօսքերուն ատենը չէ հիմայ, շուտ մը զնա՛, կտոր մը միս ա՛ռ:



— Թորոս աղան քիչ մը սրբողեցաւ և ասկից
վերջը հետո սխամպիլ չպիտի խաղայ , թո՛ղ չխաղա՞յ ...
— Ես քեզի ի՞նչ կ'ըսեմ կոր ... շուտ ըրէ՛ , գնա՛ :
— Ես ալ տիրացու Մարտիրոսին հետ տամա կը
խաղամ առկից ետքը :
— Այդ խօսքերը վերջն ալ կ'ընենք , Մանուկ ա-
ղա , գնա մսավաճառէն քիչ մը միս առ ու բեր :
— Տիրացու Մարտիրոսին զլխուն եկածը չես ր-
սեր , կնիկ . լսեզին կինը այս զիշեր մազ մնացեր է
որ մեռնի եղեր ...
— Ինչո՞ւ
— Մանչ մը բերեր է , բայց շատ դժուարու-
թեամբ . չորս դայեակ և տասն և վեց բժիշկ հազիւ
կրցած են տղան առնել :
— Խեղճ կնիկ ...
— Վաղը քիչ մը գնա՛ զինքը տե՛ս :
— Կ'երթամ , հիմա զուն գնա սա միսին դործը
լմիցո՛ւր :

— Այս զիշեր անպատճառ միս պէ՞տք է :
— Հապա , Արիսողոմ աղային անկողինն ու սըն-
տուկները բերին՝ ինքն ալ հիմայ կուգայ :
— Իրա՞ւ կ'ըսես , կնիկ ,
— Սուտ ինչո՞ւ պիտի խօսիմ :
— Շատ աղէկ ուրեմն . երթամ պատուական միս
մը առնեմ ու զամ :
— Մանուկ աղան անմիջապէս տունէն դուրս
ելաւ և հազիւ թէ քանի մը քայլ առած էր՝ կինը
ետեւէն պոռալ սկսաւ .
— Մանուկ աղա , Մանուկ աղա ...
Մանուկ աղան ետ դարձաւ .
— Միսը ինչո՞վ պիտի եփենք , հարցուց կինը ,
— Կուզես զետնախնձորով եփէ՛ , կ'ուզես
լուբիայով :

— Այտ չէ իմ ըստածու , ածուին չունինք , քիչ
մըն ալ ածուիս առնէիր :
— Շատ աղէկ , պատասխանեց Մանուկ աղա և
սկսաւ երթաւ :
— Մանուկ աղա , Մանուկ աղա , կանչեց տի-
կինը նորէն :
Ետ դարձաւ Մանուկ աղա :
— Աղէկ ա՛ , մինակ միսով չբլլար , քիչ մ'ալ
բրինձ ա՛որ ապուր մ'ալ չինենք :
— Աղէկ ըսիր , կնիկ , քիչ մ'ալ բրինձ առնենք :
Մանուկ աղան այս անդամ վազելով սկսաւ եր-
թաւ . փաղոցը զազնալու վրայ էր՝ երբ կինն բոլոր
ձայնովը զայն կանչեց .
— Մանուկ աղա , Մանուկ աղա ... Ման ...
Կանգ առաւ էրիկն և վերստին ետ դարձաւ , այս
անգամ դէմքին զուարթութեան վրայ քիչ մը զեղչ
ընելով :
— Ի՞նչ կ'ուզես ...
— Մարդ Աստուծոյ , չոզեկառքի պէս կը վա-
զես , ձայնս մարեցաւ : Սոխ չունինք , աղ չունինք ,
քիչ մըն ալ կազ կամ ճրագ առնելու է որ վառենք ,
մարդը մութի՞ն պիտի նստեցնենք :
— Աղէկ ա , ամէնը մէկէն ըսէ որ նպարավա-
ճառին երթամ և պէտք եղածներն առնեմ . հարիւր
անգամ ետեւէս կանչեցիր :
— Զուրի շիշ ալ չունինք ... զլուխս կապելու
ան մը չունիմ , ոտքս հազնելու կօշիկ չկայ . այս
վիճակին մէջ ի՞նչպէս Արիսողոմ աղային դէմը ելլեմ :
— Հիմա ուտելիքը առնենք , վազն ալ հազնե-
լիքը կը մտմանք , ըսաւ Մանուկ աղան և դուռն ու-
ժով մը քաշելով գուրս ելաւ :
— Մանուկ աղա , Մանուկ աղա ...
— Ուզածիդ չափ պոռա՛ , ալ ետ չեմ դառնար ,

մամուց Մանուկ աղան և ճամբան շարունակեց :

Մանուկ աղան քանի մը փողոց դարձած էր՝ երբ
կնկան ձայն մը առաւ որ զինք կը կանչէր .

— Գործ չունիս նէ պառալով ետեւէս վազէ , ը-
սաւ ինքնիրեն Մանուկ աղան , առանց վլուխն ետ
դարձնելու տեսնելու համար թէ ո՞վ էր զինք կանչո-
ւը :

— Մանուկ աղա , Մանուկ աղա , կրկնեց ձայնը ,
որ Տիրացու Մարտիրոսին տամանամեայ աղջկանն էր :

Մանուկ աղան շարունակեց իւր ճամբան , և Տի-
րացու Մարտիրոսին աղջկը՝ քայլերն փութացնելով՝
տառը քայլ հեռաւորութեամբ մօտեցաւ անոր : Իեղ-
ճին շունչը կտրած ըլլալով՝ անդամ մըն ալ կրցաւ
պոռալ .

— Մանուկ աղա :

Դարձեալ պատասխան չառաւ և ստիպուեցաւ
քիչ մըն ալ քալելով Մանուկ աղային հազուսաին
ծայրէն քաշելու :

— Թող տուր , կնիկ , ըստ Մանուկ աղան ա-
ռանց ետեւը նայելու :

— Բան մը պիտի ըսեմ :

— Մտիկ ընելու ժամանակ չունիմ , ըսածներդ
արդէն չեմ կրնար միտքս բռնել , հիմայ ելեր ուրիշ
բաներ ալ պիտի ըսես :

— Դայեակին տունը պիտի հարցունէի ...

Դայեակ բառը լսելուն պէս արթնցաւ Մանուկ
աղան և ետեւը Տիրացու Մարտիրոսին աղջկին տես-
նելով .

— Աղաւնի , գո՞ւն էիր ետեւէս վազողը , հար-
ցուց անոր :

— Ա...յո...ես.... պատասխանեց Աղաւնին
որ հեռաւէն ալ չէր կարող խօսիլ :

— Մայրդ ի՞նչպէս է :

Աղաւնին կը հեւար :

— Զըսե՞ս , մայրդ ի՞նչպէս է ... դժբախտու-
թիւն մը պատահեցաւ :

Աղաւնին բոլոր պատասխանն հեւալն էր ... :

— Հեւալու ժամանակ է հիմայ , մայրդ ի՞նչպէս
եղաւ :

— Մայ...րի...կա...ա...ղէկ...է բայց ... տը-
զան ... ծիծ ... չը...քո ... ներ ... կոր ... դայ ... եա.
կը ... սի ... տի ...

— Շատ լաւ , շատ լաւ , աղջիկս , դուն տուն
գնա' , դայեակն ես կը դրկեմ :

Աղաւնին բաժնուեցաւ Մանուկ աղայէն որ ճամ-
բան փոխեց դայեակին տունը վնասելու համար :

Զուգելով մեր ընթերցողին ձանձրոյթ պատճա-
ռել , կը թողունք Մանուկ աղան՝ որ ամէն քայլին բարե-
կամի մը կը հանդիպէր և անոր կը ծանուցանէր կամ
թաղականին ընտրութիւնը կամ տիրացու Մարտիրո-
սին կնկան մանչ զաւակ մը բերելն կամ Արիսողոմ
աղային դալը : Դառնանք հիմա Արիսողոմ աղային :

Չ.

Բաւական երկար տարիներէ ի վեր սովորու-
թիւն եղած է որ շատերը ուսումն առնելու համար
ֆրանսա կամ ֆերմանիս երթալէն ետքը մուրաքա-
ղաքս կուզան կին առնելու համար , և ընթերցողն ալ
զիտէ արդէն որ Արիսողոմ աղան ալ ուրիշ նպատա-
կաւ եկած չէր կ . Պոլիս : Ընթերցողն չմոռցաւ նաև
թէ այս ամուսնութեան խնդիրն ո՞րչափ միտքը զը-
րաւած էր Արիսողոմ աղային՝ որ առջեւէն եկող էշերը
չախնելով անոնց միոյն դէմ բախուեցաւ : Թերեւո
հարցուի թէ՝ Արիսողոմ աղային դէմ բախուող աւա-
նա՞կն ալ ամուսնութեան վերաբերեալ զործ մը ու-

նէր, որ իւր առջեւը չտեսաւ Արիսողոմ աղային պէս խռոր մարդ մք: Անոնք որ պատմութեան քիչ կամ շատ ծանօթութիւն ունին՝ գիտեն որ էշերը որո՞նց նախահայրերէն մին ժամանակաւ հրեշտակ տեսած է, բնաւ կարեւորութիւն չեն տար մահկանացուներուս, և կ'ուզեն որ միշտ մենք ճամբայ բանանք իրենց: Արիսողոմ աղան եթէ պատմութեան տեղեակ ըլլար՝ կամ կին առնելու խոդիրով միտքն չզբաղեցնէր՝ անշուշտ ճամբայ պիտի բանար այդ արարածներուն, ուրո՞նք իրենց ականջներով Միդաս թագաւորին ներկայացուցիչներն ըլլալու պատիւն ալ կը վայելեն:

Արդ, Արիսողոմ աղան էշերէն բաժնուելէն ետքը Սաղիկ փողոցը գտնելու համար անոր ասոր հարցումներ կ'ուզդէր. վասն զի ինքն առաջին անգամն էր որ Պոլիս կուզար և Տրապիզոն բնակող բարեկամներէն մին խորհուրդ տուած էր իրեն թէ հանգիստ ուտելու և պառկելու համար յիշեալ փողոցը յիշեալ թիւը կրող տունն իշնալու էր: Այդ բարեկամն շարաթ մը առաջ Մանուկ աղային ալ նամակով իմացուցած էր որ Արիսողոմ աղան ալ իրեն տունը պիտի բնակէր: Արիսողոմ աղան իրեն արուած տեղեկութիւններուն համեմատ մէկ փողոցէն կը մտնէր միւսէն կ'ելլէր, երբեմն ալ սխալմամբ անել փողոցներու մէջ կը մտնէր, կը բարկանար, ետ կը դառնար և մէկ կողմէն ալ կը կասկածէր որ բեռնակիրներն իր անկողինն և սնտուկներն առնելով չփախչէին, թէպէտ և անոնց հաւատարմութիւնն շատերէն լսած էր:

Ժամու մը չափ Բերայի փողոցները չափելէն ետքը, Արիսողոմ աղան յաջողեցաւ վերջապէս զտնել ծաղիկ փողոցն զոր չփոթելու չէ նոյն անունը կրող փողոցին հետ, որ Բերայի հրդեհէն մօխիր դարձած էր հաղար ութը հարիւր եօթանասունը չեմ յիշեր քանինք: Այս փողոցն Ծաղիկ փողոց կ'անուանուէր աս

պատճառաւ որ հոն բոլոր տուներուն պատուհաններուն առջեւ միշտ ծաղիկներ կը գտնուէին:

— Երկու թիւն ո՞րն է, հարցուց առանց գիտնալու՝ Մանուկ աղային կնոջը, որ դրան առջեւ իւր էրկանը զալստեան կ'սպասէր:

— Աս է, հրամմեցէք, Արիսողոմ աղա, պատասխանեց տիկիինը:

— Ան կողինս և սնտուկներս բերի՞ն:

— Ինքինն, Արիսողոմ աղա. վեր հրամմեցէք Արիսողոմ աղա, եթէ կ'ուզէք քիչ մը յոգնութիւն առնելու համար սա պղտիկ սենեակը նստեցէք, ըստ կինը զետնայարկի վրայ պղտիկ խուց մը ցոյց տալով:

— Շատ յոգնած եմ, քիչ մը հոս կը նստիմ:

— Ձեր կամքն ինչպէս որ կ'ուզէ այնպէս ըրէք, Արիսողոմ աղա. տունը ձերն է, Արիսողոմ աղա. ձեր տունին պէս հանգիստ ըրէք:

— Շնորհակալ եմ:

Արիսողոմ աղան պղտիկ սենեակը մտաւ, առաջնորդութեամբ տիկնոջ, որ զամբար մը բոնած էր որուն կաղը հատնելու վրայ էր:

— Ի՞նչպէս էք, Արիսողոմ աղա, տունէն ի՞նչպէս են, աղէ՞կ են:

— Աղէկ են:

— Թող աղէկ ըլլան. ձեր զաւակներն ի՞նչպէս են, Արիսողոմ աղա, զպրոց կ'երթա՞ն:

— Զաւակ չունիմ:

— Ձեր տիկինն ի՞նչ կընէ, աղէ՞կ է, Արիսողոմ աղա:

— Տիկին չունիմ դեռ:

— Կարգուած չէ՞ք, Արիսողոմ աղա:

— Չէ:

— Շատ լաւ, հոս աղուորիկ աղջիկ մը գտնենք ու պուսեցի ընենք քեզ, Արիսողոմ աղա:

— Անանկ միտք մը ունինք, պատասխանեց Արիսողոմ աղան, բայց աղջիկէն առաջ ես կերակուր կ'ուզեմ, վասն զի առտուընէ ի վեր բերանս բան դրած չեմ:

— Շատ աղէկ, Արիսողոմ աղա, շատ աղէկ, հիմայ կը բերեմ ձեր կերակուրն:

Տիկինը դուրս ելաւ և դուռը բանալով սեմին վրայ կայնեցաւ, սպասելու համար Մանուկ աղային, որ ինչպէս կը յիշեն ընթերցողները, դայեակ փնտուելու գացած էր:

Արիսողոմ աղան սենեակին մէջ մինակ մնալով՝ բարձի վրայ դրուած Զէն Հոգեւորն առաւ և թրդթատել սկսաւ զայն. բայց սրովհետեւ մարդս անօթի եղած ժամանակը զիրք չկրնար կարդալ, ինչպէս նաև չկրնար զիրք գրել՝ նորէն բարձին վրայ դրաւ Զէն Հոգեւորն վասնզի փորն կ'իմացունէր իրեն թէ Զէն Մարմաւորին պէտք ունէր, և սկսաւ սենեակին մէջ պաըտելու:

— Կ'աղաջնմ, Արիսողոմ աղա, որ ձեր տունին պէս հանգիստ ընէք, ըսաւ տիկինը սենեակ մտնելով:

— Անհանգստութեան պատճառ մը չունիմ, միայն թէ անօթի եմ և կերակուր ուտել կ'ուզեմ:

— Կերակուրդ պատրաստուելու վրայ է, հիմա պիտի բերեմ, ըսաւ տիկինը և դուրս ելաւ նորէն դրանը աւշեւ էրկանը սպասելու համար:

— Ի՞նչ տեսակ կնիկ է այս, ըսաւ Արիսողոմ աղան երբ առանձին մնաց, զիս անօթի կը պահէ և կը պատուիրէ որ հանգիստ ըլլամ, անօթի մարդը հանգիստ կրնայ ըլլալ...

— Սեակ' թէ ես ալ քու քոյրդ եմ կամ աղջիկդ եմ, ըսաւ վաթսունամեայ տիկինը դարձեալ ներս մտնելով, եթէ բան մը ուզես՝ մի քաշուիր, ըսէ ինձի որ բերեմ:

— Շնորհակալ եմ:
— Ես կ'ուզեմ որ իմ տունս եկող հիւրերը չնեղուին:

— Կը հասկնամ. հիմակուհիմայ կերակուրէն ոււրիշ բան չեմ ուզեր:

— Կերակուրը պատրաստուելու վրայ է, հոգ մի ընէք...

Տիկինը գեռ պիտի շարունակէր իւր բանակցութիւնն, բայց դուռը գարնուելով՝ դուրս վազեց շուտով, որպէսզի դուռը բանայ, էրիկը դիմաւորէ և բերած պաշարներն առնէ ու կերակուր եփէ:

— Ողջոյն, տիկին, ըսաւ մէկը դուռը բացուելուն պէս:

Հարկ չկայ ըսելու թէ եկողը կրօնաւոր մ'էր, ինչու որ անմնք միայն կը գործածեն ողջոյնը:

— Օրհնեա' տէր, պատասխանեց տիկինը:

— Ի՞նչպէս էք, աղէկ էք, տիկին:

— Փառք Աստուծոյ, Տէր Հայր:

— Մանուկ աղան հիմայ դէմս ելլելով իմացուց որ հիւր մը եղած է ձեզի այսօր, ես ալ եկայ որ հետը տեսնուիմ:

— Շատ աղէկ ըրեր էք, ներս հրամմեցէք, Տէր Հայր, ըսաւ տիկինն ցոյց տալով խուցն, որուն մէջ Արիսողոմ աղա իւր անօթութեամբը կը զբաղէր:

Քահանայն ներս մտաւ:

Արիսողոմ աղան ոտքի ելաւ:

— Ողջոյն, Արիսողոմ աղա:

— Օրհնեա', Տէր Հայր:

— Մեղաւորս ձեր բարեկալչութեան դալն իմանալով՝ աճապարանօք եկայ ձեր ջերմեռանդութեան պատուական որպիսութիւնը հարցնելու. ի՞նչպէս էք, Արիսողոմ աղա:

— Աղէկ անք:

— Միշտ աղէկ ըլլալք, Տէր Աստուծած ձեր մի-

ոելոց արքայութիւն և կենդանեաց աւուրս երկարս
պարգեւեսցէ :

— Շնորհակալ եմ . դուք ի՞նչպէս էք , Տէր Հայր :

— Մեր աղէկութիւնը մի՛ հարցունէք . . . ժամանակիս աղէկութիւնը . . . Տէր Աստուած զձեզ յամենայն փորձանաց և ի չարէ պատաստ պահեսցէ . ժողովուրդը երբ աղէկ ըլլայ՝ քահանաներուն ալ երեսը կը ինդայ :

— Այնպէս է , Տէր Հայր , պատասխանեց Արիսողոմ աղան իւր աչերն չզատելով բնաւ խուցին դըռնէն , ուսկից կերակուր կը յուսար :

— Օրհնա՞ծ , ժամանակը շատ գէշ է , ժողովուրդը շատ նեղութիւն կը քաշէ , այս պատճառաւ ջերմեռանդութիւնն ալ օր ըստ օրէ պակսելու վրայ է :

— Իրաւ է :

— Բայց ի՞նչ պիտի ընենք , ի՞նչ կուզայ մեր ձեռքէն համբերելէն զատ . . . Սուրբ գիրքը Կ'ըսէ . որ համբերեսցէ իսպառ նա կեցցէ :

— Այնպէս է :

— Եթէ չհամբերենք՝ բարկանալ պէտք է , և մարդարէն Կ'ըսէ . բարկանայք և մի՛ մեղանչէք :

— Ճիշտ է , պատասխանեց Արիսողոմ աղան , ուրուն ականջը բնաւ չէր մտներ քահանային խօսքերը , և որ քահանային ներկայութենէն նեղութիւն կ'իմանար . վասնզի , ինչպէս զիտեն ընթերցողները , կերակուրէն ուրիշ բանի պէտք չունէր :

— Զի ո՛չ միայն հացիւ կեցցէ մարդ , այլ բանիւ Տեառն :

Քահանան քթախոտի տուփը ծոցէն հանեց և երկու մատներովը քթախոտ լեցուց քթին ծակերուն մէջ , և յետոյ , տուփը Արիսողոմ աղային երկնցնելով :

— Հրամմեցէ՛ք , օրհնած , ըսաւ :

Արիսողոմ աղան շնորհակալութեամբ առաւ տու. փըն և քիչ մը քթախոտ քաշեց :

— Քիչ քաշեցիք , Արիսողոմ աղա , կ'աղաչեմ , անգամ մ'ալ քաշեցէք , քթախոտը վնասակար բան մը չէ :

Արիսողոմ աղան անգամ մ'ալ քաշեց , որպէսզի խօսքը չերկարի և հիւրը մեկնի :

— Ինչո՞ւ աղէկ մը չէք քաշեր , Արիսողոմ աղա , երկնեց քահանան , շատկեկ քաշեցէք :

— Շնորհակալ եմ , Տէր Հայր , սովորութիւն չու. շիմ :

— Կը խնդրեմ , մեղաւորիս խօսքը մի՛ կոտրեք , քիչ մ'ալ քաշեցէ՛ք :

— Ա՛լ չես քաշուիր , ըսաւ Արիսողոմ աղան մէ. կուսի և քիչ մըն ալ քաշեց :

— Դաւկիթ մարդարէն Կ'ըսէ որ՝ մարդոյ որպէս խոսոյ են աւուրդ իւր . . .

— Քթախոտին համա՞ր Կ'ըսէ :

— Զէ՛ , մեզի համար Կ'ըսէ . . . և մենք ալ աշխատելու ենք որ այս վաղանցուկ կեանցին մէջ ու. րիշներուն բարիք ընենք , աղքատ տնանկները խը. նամենք , և երբեմն ալ մեր ննջեցելոց հոգւոյն համար աղօթենք :

— Այնպէս է :

— Պատրաստ գտնուելու ենք որ կանչուելնուս պէս երթանք :

— Իրաւ է :

— Մեղաւորս պիտի համարձակիմ խնդիրք մը ընել ձեր բարեպաշտութեանը և կը յուսամ որ չէք մերժեր , վասնզի ձեր բարեպաշտութիւնը և ջերմեռանդութիւնը շատ աղէկ կը ճանչնամ մեղաւորս :

— Հրամմեցէ՛ք :

— Տէր Աստուած իւր անսպառ գանձը միշտ բաց պահէ կրամանողդ պէս ջերմեռանդներուն :

— Շնորհակալ եմ :

— Մէկուն տեղ հազար տայ, հազարին տեղ միւն տայ ի շինութիւն Ա. եկեղեցւոյ և ի փառս ազգին: Խնդիրքս սա է որ յառաջիկայ Կիրակի կ'ուղեմ ձեր ննջեցելոց հոգուն համար պատարագ մատուցանել: Ներեցէ՛ք համարձակութեանս, բայց իմ պարտքս է միշտ իմացնել որ ննջեցեալները մոռնալու չէ:

— Իրաւունք ունիս, Տէր Հայր:

— Արդ եթէ կ'ուղէ՛ք՝ ըսէք որ ես ալ անոր համեմատ կարգադրութիւն մը ընեմ: Զկարծէք թէ ծախքը մէկ մեծ բան մըն է, երկու սոկիով կը լմնայ: Նոյն օրը յատկապէս ծանուցում ալ կ'րնենք եկեղեցւոյ մէջ որ վասն հոգւոցն ննջեցելոց Արիսողոմ աղային է նոյն աւուր սուրբ և անմահ պատարագը:

— Ծնորհակալ կ'ուլամ:

— Բան մը չէ, մեր պարտքն է:

— Հրամմեցէ՛ք, երկու սոկի առէք, ըսաւ Արիսողոմ աղան, քսակէն երկու սոկի տալով քահանային:

— Թող այսօր մնար... ինչո՞ւ աճապարեցիք, պատասխանեց քահանան ձեռները բանալով:

— Զէ՛, առէ՛ք:

— Որսվհետեւ կը ստիպէք՝ ես ալ կ'առնեմ սիրաբը չկատրելու համար: Օրհնեալ րլլաք. Տէր Աստուած ձեր տունը միշտ չէն պահէ, ձեր քսակը միշտ լեցունէ, ինչ որ ունիս սրտիդ մէջ Տէր Աստուած կատարէ, զործերուդ յաջողութիւն տայ և ամէն փորձանքներէ աղատ պահէ:

Քահանան բարեմազթութիւնները լմնցունելուն պէս մնայք բարեաւ ըսելով գուրս ելաւ:

— Վերջապէս խալսեցայ, յսաւ ինքնիրեն Արիսողոմ աղան, սա մարդուն ձեռքէն. աս ի՞նչ փորձանքներ են կուգան իմ զլուիս այսօր՝ Պոլիս ոտք

կոխելէս ի վեր: Շոգէնաւէն հազիւ դուրս ելած էի՝ խմբագրին մէկր երկու ժամ զրուխս ցաւցուց. անկից զատուեցայ և մինչեւ որ տունը զատայ հազար նեղութիւն քաշեցի: Տուն եկայ որ քիչ մը շունչ առնեմ և կերակուր ուտեմ. տան տիկինը զիս անօթի կը պահէ և միշտ ներս կուգայ կ'ազաչէ ինձ որ բան մը հոգչընեմ և հանգստութեանս նայիմ: Աս ալ հէրիք չէր և ահա այս մարդը կուղայ՝ բանի քթախոտ քաշել կուտայ ինձի և Դաւիթ մարգարէէն խօսք բանալով երկու սոկիս կ'առնէ կերթայ, երթայ բարով: Այս ամէնը քաշեցինք առ օթի փորձաց. բայց սա կերտակուրս ինչո՞ւ համար չեն բերեր. այս զիշեր անօթի պիտի պահնեն զիս... աս ի՞նչ խայտառակութիւն է...

Այս հարցումներն կ'ուղղէր Արիսողոմ աղան և ահա կազն՝ որ արդէն հատած ըլլալով տկար լոյս մը կուտար՝ կը մարփ և մութի մէջ կը ձգէ հիւը:

— Բայց քաշուելու բան չէ աս, կը շարունակէ խոշոր մարդը, կամ ուրիշ տեղ մը երթալու է և կամ կինը կանչելով քանի մը խօսք բսելու է: Ես իմ քաղքիս մէջ երկու սպասաւոր ունէի որ դէմս բարեկ կը բանէին, սեղանը կանուի կը պատրաստէին և իմ զործերս կը տեսնէին. սպասաւորն երով վարժուած մարդ մը ինչո՞ւ այս նեղութիւնն քաշէ հիմայ:

— Աս ի՞նչ է, կազզ մարած է... հարցուց տիկինը սենեակին դուռը բանալով:

— Այս մարած է, պատասխանեց Արիսողոմ աղան զսպելով իւր զգացած նեղութիւնն որ աւելնալու վրայ էր:

— Դուն հանգիստ եղիր, Արիսողոմ աղան, այդ բաները նայիլը մեր զործն է:

— Այս, բայց ես անօթի հմ, և սպասելու կարողութիւն չունիմ:

— Ես ի՞նչ ըստ քեզի, դուն սիրտ մի՛ հատցուներ, ամէն բան ի՞նձի ձգէ՛, ես կը հոգամ:

Տիկինը շուտ մը դրացուհոյն տունը վաղեց և անոր կազն բերելով լուսաւորեց Արիսողոմ աղային խուցը:

Դ.

Այս լուսաւորութեան վրայ կէս ժամ չանցաւ և Արիսողոմ աղային ներկայացաւ երիտասարդ մը որ վաճառականի չէր նմաներ, սեղանաւորի ալ չէր նմաներ, արհեստաւորի ալ չէր նմաներ, գործաւորի ալ չէր նմաներ, և վերջապէս անանկ բանի մը կը նմանէր որուն նմանը չկայ: Հաղիս երեսուն երկու տարեկան կը թուէր: Կապոյտ աչքերով, դեղին մազերով զարդարուած ըլլալով, ունէր նաև երկու մատ մօրուք որ մայրաքաղաքիս մէջ կամ սզոյ հշան է և կամ չքաւորութեան: Հազուստներն այնքան էին էին որ հընախոյզները զանոնք գնելու համար մեծաքանակ դումար մը կուտային: Սակայն եթէ հագուստի մասին վանողական էր, դէմքի մասին քաշողական զօրութիւն ունէր այս անձը:

— Ծառայ եմ մեծապատուութեանդ, մեծապատիւ տէր, պոռաց այս երիտասարդն սենեակէն ներս մտնելով և մօտենալով Արիսողոմ աղային:

— Ի՞նչ կայ, ի՞նչ կ'ու զէք, հարցուց Արիսողոմ աղան վախնալով:

— Վաեմափայլ տէր, ձեր զալուստն լսելով փութացի հոս գալ իմ իորին մեծարանացս հաւաստին ձեր ոտքերուն տակը դնելու:

— Ոտքերուս տակը շատ աղէկ դի՛ր, բսաւ Արիսողոմ աղան, որ կը կարծէր թէ մուճակ բերած էր իրին:

— Շնորհակալ եմ, բարձրապատիւ տէր, ըստ

երիտասարդը, զլուխը բացաւ և սեղանին վրայ ելաւ կանգնեցաւ:

Արիսողոմ աղա այս տեսարանին առջեւ բոլորովին շուարած՝ անհամբեր տեսնել կ'ուզէր թէ ի՞նչ պիտի ընէր այս պարոնը սեղանին վրայ:

Երիտասարդն ծոցէն թուղթ մը համեց և աչերն Արիսողոմ աղային տնկելով, բոլոր ձայնովը պոռաց.

— Տիարք և տիկնայք . . .

Արիսողոմ աղա այս ահարկու ձայնէն վախնալով, նստած տեղին երկու կանգուն վեր ցատկեց և չկրնալով ինքզինքը զսպել պոռաց.

— Ո՞վ է աս մարդը, յիմարանոցէն փախած խենդէ է թէ յիմարանոց երթալու յիմար:

— Հայ ազգն, շարունակեց երիտասարդը ձայնը քիչ մը իջեցնելով, այսօր այնպիսի հանդէս մը կը կատարէ որ մեր հայրենիաց ամէնէն քաջ զիւցազնին նուիրուած է . . .

— Միտքդ ի՞նչ է, եղբայր . . .

— Կար ժամանակ մը ուր խստարը լուսոյ դէմ կը կռուէր, տղիտութիւնը զիտութեան դէմ, անցեալըն ապառնին դէմ, հրամայականն սահմանականին դէմ, սուրը զրիչի դէմ, տեկութիւնը սիրոյ դէմ. կրակը ջուրին դէմ, միսը բանջարեղէնին դէմ. իսկ հիմա անցան այն ժաման ակները. անոնք անցեալ են մենք ապանի, անոնք իստար են մենք լոյս, անոնք տղէտ են մենք զիտուն, անոնք սուր են մենք զրիչ, անոնք տեկութիւն են մենք սէր, անոնք կը-րակ են մենք ջուր, անոնք միս են մենք բանջարեղէն, անոնք վարունդ են մենք խնձոր, անոնք փուշ են մենք վարդ, անցան անցան այն դարերը, ուր մարդկութիւնը տղիտութեան օրօրոցին մէջ մէջ մը սողին մէջ մը անդին կ'երթար կուզար . . .

— Միտքդ ի՞նչ է, եղբայրս, ես քեզի բան մը

չըրի, ի՞նչ կ'ուզես ինձմէ, զնա քեզի բարկացնողին
զրուցէ՛ այդ խօսքերը...

— Այո՛, մարդկութիւնը կը չարչարուէր, կը
նախատուէր անգութ բռնաւորներու ձեռքէն և չէր
զիտեր որո՛ւ երթալ և որո՛ւ բողոքել:

— Տէր ողորմեա՛... Տէր ողորմեա՛, բռաւ ինք-
նիրեն Արփառղոմ աղա, քաշելիք ունինք եղեր... ես
կրնամ հիմա վինքը սեղանէն վար առնել, բայց կը
վախնամ որ ծոցէն ատրճանակ մը կը հանէ և կը
զարնէ ինձի, վասն զի խիստ բարկութեամբ կը խօսի:

— Իսկ երբ զիտութիւնն եկաւ, շարունակեց
ատենաբանը, և վանեց տգիտութիւնն ինչպէս լոյսն
խաւորը, սէրն՝ ատելութիւնը, զրիչն՝ սուրը, ապա-
զայն՝ անցեալը, այն ատեն, այն՛, կ'ըսեմ, այն ատեն
միայն հասկցուեցաւ որ մարդկութիւն, ազգ և հայ-
րենիք բառերը բառարանն երբ լեցնելու համար շին-
ուած բաներ չէին, այլ ամէն մարդու մտքին մէջ,
սրտին մէջ, հոգւոյն մէջ երկաթեայ տառերով և ան-
ջինջ կերպավ դրոշմուելու բառեր էին...

— Եղբայր, կ'աղաչեմ, վար իջի՛ր և այնպէս
զրուցէ՛ ցաւկ...

Ատենաբանը կայնած տեղը այնպէս կը դողար,
որ Արփառղոմ աղային սիրտը կը հատնէր թէ կազը
զիտինը պիտի իյնար:

Ըւստի, չուզելով այլևս համբերել, պսսաց ինք-
նակոչ ատենաբանին երեսն ի վեր,

— Վա՛ր իջիր սըկէ:

— Կ'աղաչեմ, մի՛ սաստեր զիս:

— Վա՛ր իջիր, ապա թէ ոչ...

— Մի՛ կոտրեր իմ սիրտս, որ ազգին համար կը
բարխիւ:

— Ինչ ըսելիք որ ունի՞ւ եկուր քովս մարդու պէս
նստէ և ըսէ. հոն անդուանքը ելել ի՞նչ պիտի ըլլայ:

— Կ'աղաչեմ, թող տուր վերջացնեմ, ա՛ չես
զիտեր թէ ո՛րչափ կը յուղուիմ երբ հաս կալ զամ:

— Վար իջի՛ր:

Ատենաբանը բեմէն կ'իջնայ և կ'արթայ աթո-
սի մը վրայ կը նստի:

— Հիմա՛ զրուցէ՛ ինձի, միտքդ ի՞նչ է, կ'ըսէ
Արփառղոմ աղա բարկութեամբ:

— Կաղաչեմ, մի՛ բարկանար:

— Ի՞նչ կ'ուզես, զրուցէ՛, չուտ, հիմայ:

— Բարկութեամբ մի՛ վարուիր հետո, ոտքդ
սուզնեմ, սիրտս լեցուած է, հիմա կը սկսիմ լալ:

Եւ ատենաբանը կ'սկսի լալ:

— Լոլու ի՞նչ կայ, եղբայրս:

— Ծառուղ կը փափաքի զրական ու ինեամբ աղ-
զին ծառայիլ ւ բայց այս ազգը շատ ապէրախու-
թեամբ կը վարուի իւր զրագէտներուն զէմ:

— Ատոր մէջ ես ի՞նչ յանցանք ունիմ:

— Դուք յանցանք չունիք և թերեւս իրաւունք
ունիք... ստանաւ սրճեր ունիմ զրած հայրենիքի վր-
բաւ, սրանչելի կտորներ, պատուական տողեր, սրոնց
մէջ երեւոկայս թիւնը, աւիւնը, խանդն, հուրն ու
րացը ստանաթեւ կը ստանան:

— Շատ աղէկ, տառը համար լալո՞ւ է:

— Մեր ազգն անանց յարգն ու պատիւր չճանչ-
ամը, զանոնք տղայական բաներ կը կարծէ և թող
կուտայ որ զանոնք զրողը անօթի մնայ:

— Ես ի՞նչ ընեմ:

— Կ'աղաչեմ, քաղցրութեամբ վարուէ՛ հետո:

— Ի՞նչ ըրած ունիմ քեզի:

— Զեզի սիրտ աղաչէի որ...

— Ի՞նչ, չուտ ըսէ...

— Մի՛ պասար երեսս ի վար, հոգիդ սիրես, հի-
մայ կը սկսիմ լալ...

Նորէն սկսաւ լոլ զրտղէտը :

— Տէր Աստուած դուն հոմիերութիւն տօւր ին-
ծի , ըստ Սրբուղոմ տղան մէկուսի :

— Ինդիրքս առ է որ կ'ուզէի տպել տալ քիչ
մը տասջ կարդացած ճառս . . .

— Գնա տպել տո՛ւր , քու ձեռքէդ բռնող կա՞յ :

— Պիտի խնդրէի ձեր մեծապատութիւնէն որ
տպագրութեան ստակը դուք տայիք :

— Ինչո՞ւ . . . ի՞նչ պատճառ կայ որ քու ճառիդ
համար ես զրամ տամ : Լսուա՞ծ բան է որ մէկը իրեն
շահուն համար զիրք տպէ և ծախքը Սրբուղոմը տայ ,

— Կը խնդրեմ , սիրս արդէն խոցուած է , դուք
ալ նոր վէրք մը մի՛ բանաք հոս :

— Ինչո՞ւ վէրք պիտի բանամ եղեր , գնո՞ւ բա-
նըդ , եղբայր , փորձանք եղմը զլիսուս :

— Գիտէ՞ք որքան ծանր է զրտղէտի մը ասանկ
խոսքեր լսելը . . .

— Զեմ զիտեր և զիտնալ չեմ ուզեր :

— Բանաստեղծի մը սիրտը շատ փափուկ է , ա-
մենաթեթեւ խօսքէ մը կը վիրտուորուի : Այս նիւթին
զրայ ստանաւոր մը զրած ունիմ . կարդամ , մտիկ ը-
րեք :

— Ոտանաւոր մտիկ ընելու ժամանակ չունիմ :

— Կ'աղաչեմ , ստանաւորիս հետ խստութեամբ
մի վարուիք , ոյն ստանաւորին համար զոր դուք չէք
ուզեր մտիկ ընել , երկու ամիս աշխատած եմ ես .
և եր անոր նախատուիլը տեսնեմ արժանապատուու-
թիւնս կը վիրաւորուի : Կ'աղաչեմ , ստանաւորիս հա-
մար զէշ մի՞ զրուցէք . . . կը խնդրեմ , թոյլ տուէք
ինձ կարդալ զայն անգամ մը . . .

— Ես ստանաւոր մտիկ ընելու չեկայ հոս :

— Եատ լաւ . ողբերգութիւն մը զրած եմ , անոր
զրայէն անցնինք :

— Զե՞ ուզեր . ես անօթի եմ , հիմա կերտելուր
պիտի ուտեմ :

— Եատ լաւ , ուտելիքի վրայ տակնո բանու-
թիւն մը ընեմ :

— Ժամանակ չունիմ մտիկ ընելու :

— Կ'աղաչեմ , այդ խօսքը ուրիշ անգամ մի՛ ը-
ոնք , ատկէ աւելի ծանր խօսք չկայ հեղինակի մը չա-
մար , որ իւր մէկ աշխատափրութիւնն ու բիշի կո բ-
գալու փափաք կը յայտնէ : Կը խնդրեմ , բարձրապա-
տիւ տէր , քաղցրութեամբ վարուեցէ՞ք հեղինակներու
հետ :

— Գլխուս վրայ նստեցնեմ քեզի :

— Առքդ պատիւնեմ , մի ծաղրէք զիս , ինչո՞ւ ձեր
գլխուն վրայ նստեցնեք :

— Ի՞նչ ընեմ հապա , քսակո քեզի՞ տոմ հեղի-
նակներուն հետ քաղցրութեամբ վարուած ըլլուլու
համար :

— Ո՛չ , միայն ճառիս տպագրութեան ծախքը :

— Քա՞ ի՞ սոկիով կը լմնայ զործդ :

— Չորս սոկիով կը լմնայ , բան մը չէ , իմ
մեկնեասս պիտի ըլլաս , ես ալ քու անունդ ստանա-
ւորով մը զրբոյկին ճակատը պիտի զնեմ :

— Ճակա՞տը զնես պիտի :

— Այսո՛ :

— Ինչո՞ւ համար :

— Արգէսպի ամէն մարդ զիտնայ թէ ձեր ստա-
կովը տպուած է այն զիրքը :

— Եատ լաւ , պատասխանեց Սրբուղամ աղան և
քսակէն չորս սոկի հանեց տուաւ : Հեղինակն հազար
յարգանք մատուցանելով զուրս ելաւ :

Սրբուղամ սղան ետեւէն կանչեց զինքը և հար-
ցուց .

— Զի՞ կրնար ըլլաւ որ դրքին ճակատը սպասա-

ւորներուս ալ անունները դնես և յմացունես ովզին
որ Արիսողոմ ազան կավեր, ոչխարհեր, էշեր և ազա
բահներ ունի իւր քաղաքին մէջ :

— Առ ձեր բառահները հավաւերգութեան ճիշդին
կը վերաբերին :

— Զեմ հասկնար :

— Ատանց վրայ ոտանուսոր կը զրուի, եթէ կը
փափաքիք՝ ոտանուսոր մը չինամ :

— Ի՞նչ լնեմ ստանաւորը :

— Երազրի մը մէջ տպել կուտոք :

— Կը տպե՞ն :

— Ի՞նչու պիտի չտպեն, եթէ կէս ոսկի տուու
րիմք քառոսուն ան զամ կը տպեն :

— Շատ աղէկ, սա բառձդղ զրէ :

— Գլխուս վրայ :

— Բայց ազաւոր բան մը րիլայ :

— Շատ լաւ :

— Այնպէս որ տեսնողը հաւանի :

— Հարիւ :

— Վազր առառու կը լիրէ՞ք :

— Վազր առառու ... ի՞նչ կ'ըսէր ... մէկ ամի,
սէն հազիւ կրնամ պատրաստել :

— Մէ՞կ ամիսէն :

— Հազիւ, ոտանաւոր կարդալը դիւրին է, բայց
զրելը զժուար : Գեղեցիկ ստանաւորի մը համբար քի-
չն քիչ երկու ամիս պէտք է :

— Ի՞նչ կ'ըսէք ... :

— Այսո՛, բայց ես կ'աշխատիմ ամիսէ մը լժե՞ն
ցունել :

— Առ ի՞նչ դժուար բան է եղեր :

— Ի՞նչ կարծեցիք հապա, երկու ամիս պիտի
սպասեմ որ մուսաս զայ և ներշնչէ ինձի, որպէսզի
զրեմ, առանց մուսայի ստանաւոր չպրուիր :

— Եթէ այդ մուսան գալու ըլլայ ...

— Անպատճառ կուզայ :

— Զի՞ կընար ըլլալ որ համակ մը զրես և ա-
զակնա իրեն որ չուտ մը զայ և դուն ու երկու ա-
միս չսպասես :

— Անիկա ի՞նքնիրեն կուզայ, նամակի պէտք
չունի, մեծապատիւ աէք :

— Ուր կը նստի . . . շատ հեռո՞ւն է :

— Այսո՛, շատ հեռու է, բայց կուզայ :

— Յամաքէ՞ն թէ ծովէն :

— Զէ՛, մեծապատիւ աէք, չէ՛ :

— Ո՞վ է ուրեմն աս գետնին տակը անցնելու
մարդը . . . ուսկի՞ց պիտի զայ . . . ըսէ որ ճամբայ մը
մտմտանք ու բերել տանք . . . եթէ մէկ երկու ոսկի
տանք՝ այս շաբաթ կուզայ :

— Այսո՛, երկու ոսկի տալուղ պէս գործը կը զիւ-
րանայ և մաւսաս այս շաբաթ վաղելով կուզայ,
պատասխանեց անմուսայ բանաստեղծը, ոսկի բառը
լսելուն պէս :

— Գրէ՛ ուրեմն իրեն, իմ կոզմէս ալ յատուկ
բարեւներ ըրէ՛ և ըսէ որ Արիսողոմ ազան քեզ տես-
նել կ'ուզէ :

— Գլխուս վրայ : Անայք բարեւու, աէք, չնոր-
հակալ եմ ձեզէք, ծառայ եմ ձեր մեծապատուութեա-
նը և կ'աղաչէմ որ ընդունիք . . .

— Ո՞չ, ըստ Արիսողոմ ազա բարկութեամբ
ա՛լ երկար ըրիր, ահա ի՞նչ որ ըսիր ընդունեցի, և
դեռ ի՞նչ կ'ուզես որ ընդունիմ . . .

— Խորին յարգանցա հաւաստիքը, աէք . . . որով
միամ ձեր մեծապատուութեան ամ ն . իս նորհ ծա-
ռայ :

— Շատ աղէկ :

Մեկնեցաւ բանաստեղծն, երկու ոսկիով բե-

րել տու իսոստօն ալով մուսան, զոր ոմանք աւելի տ-
ժան զնով բերել կուտօն: Մուսայի մը օրականն հիւս-
նի մը օրականէն աւելի չէ այժմ:

Արիսողոմ ազա, ինչպէս զիտեցի՞ն ընթերցողներն,
կը մոսնար իր անօթութիւնն ամէն անզամ որ մէկն
անոր խօսք կուտօր անունը լրագրի մէջ անցունելու
և կամ եկեղեցւոյ մէջ ձանուցում ընելու: ի՞նչպէս
նաև իւր քառակին բերանը կը բանար և զրամով կը
վարձատէր ամէն անոնք, որ իրեն կը խոստանային
անունն առաջրդեան մէջ տարածելու: Փաստաիրու-
թիւնն ալ ակասկ մը անօթութիւն է զոր զրամով
կը կշացունեն մարդեց: Լրագիրներու մէջ զրուե-
րու փառասիրութիւնն, զոր ոմանք մոլութէւն կը հա-
մարին և ոմանք առաքինութեան կարդը գասել կը
փառաքին, և որ մէր առազրդեան ամէն գտաներան
մէջ կը գտնուի այսօր, տիրած էր նաև Արիսողոմ ա-
զային վրայ՝ որ բանաստեղծին մեկնելէն ետքը փախու-
նակ իւր անօթութեանը վրայ խորհելու սկսու ստա-
նաւորին վրայ միտք յոդեցի:

— Արդեօք, հարցուց ինքնիրեն, ստանաւորն
ուղածիս պէս պիտի ըլլա՞յ: աս մարդուն մուսան
քանի մը օրէն պիտի զա՞յ: և եթէ չզա՞յ անոր տեղն
ուրի՞չ մը բերելու է . . . :

Այս հարցուններն կ'ուզզեր իրեն երր տան ար-
կինը ներս մանելով ըստ:

— Կերակուրը պատրաստ է, հրամեցէ՛ք, Արի-
սողոմ ազա:

Բայտ տաձիաց ժամը զիշերուան չորսը զարկած
էր:

Ե.

Այն խուցն՝ որուն մէջ Արիսողոմ ազան ապաշ-
խարանք քաշուն էր, ունէր իւր դէմ սենեակ մը որ
խոհանոցին քովն էր և ճաշի յատկացուած էր: Աս-

սենեակը մտաւ Արիսողոմ ազան առաջնորդութեամբ
տիկնոջ, որ սեղանը պատրաստած էր վերջապէս:

Արիսողոմ ազան ճաշի սենեակը մտնելով բարե-
ւեց Մանուկ ազան, որ սեղանին շուրջը աթոռներ շա-
րելու զբաղած էր:

— Սանկ հրամմեցէ՛ք, Արիսողոմ ազա, ըստ
Մանուկ ազա սեղանին վերի կողմը ցոյց տալով իւր
հիւրին:

— Հրամանքնիդ նստեցէք, ևս ալ կը նստիմ,
պատասխանեց հիւրն նստելով իրէն ցոյց տրուած տե-
ղը:

— Ներեցէ՛ք կերակուրն այսչափ ու շացնելուս
համար, ուրիշ իրիկուններ ձեր ուղած ժամուն կըր-
նաք ուտել, այս զիշեր քանի մը պատճառներ թող
չտուին որ սեղանն ժամանակին պատրաստուէր: այս
պատճառն երը վերջը կը պատմեմ ձեղի, ի՞նչպէս էք
տեսնենք, Արիսողոմ ազա, հանգիստ էք, հարցուց
Մանուկ ազան ձայնին աստիճանն իջեցունելով:

— Շատ հանդիսան եմ:

— Ծնորհակալ ենք, մեր բարեկամն ի՞նչպէս է
Տրամփողն:

— Ազէկ է, յատկապէս բարեւ ըրաւ ձեզի:

— Բերողը տանողն ողջ ըլլայ: Եթէ ձեզի զա-
ւոթ մը օզի տամ կը անկէ՞ք, ախորժակ կը բանայ:

— Գաւաթ մը միայն կը խմեմ:

— Շատ լաւ, հրամմեցէ՛ք:

Մանուկ ազան երկնցուց զաւաթն Արիսողոմ ա-
զանին որ ի մի ումալ կլեց զայն, այս նքն օդին, զա-
ւոթը չհասկնա՞ք:

— Անուշ ըլլայ, Արիսողոմ ազա:

— Ծնորհակալ եմ:

— Զեր կենդանութեանը:

— Ողջ եղէ՞ք:

Մանուկ աղան օդին ջրով բարեխառնելէն ետքը
խմեց զայն ի չորս ուժպ:

— Տիկինը մինչեւ որ կերտկութներն տաքցունէ
և բերէ՛ մենք կրնանք խօսիլ և ժամանակ անցունել,
այնպէս չէ՝ Արխաղոմ աղոտ:

— Այս պատասխանեց հիւրն աշնորհի եղանակ
կաւ մը՝ որ կը հասկցունէր թէ տեսիր լաւ էր նոտի
կերտկուր ուտել և ապա խօսիլ:

— Մտիկ ըրէք ուրեմն այսօր մեր զլիուն եկած-
ները Քանի մը շաբաթէ ի վեր թաղականի մը բնա-
րութեան ետեւէ ինկած ենք: Դուք հիմտ ձեր մըտ-
քէն պիտի ըսէք թէ՛ մարդ, թաղականը քուկըն ին-
չուգ պէտք: Անանկը չէ, Արխաղոմ աղոտ, ազդին
գործը ևս չնայիմ, գուն չնայիս, ան չնայի, ով նա-
յի ուրեմն, ինչուս պետք շատ գէշ բան է, անով ամէն
մարդ մէկդի կը քաշուի և ազդին գործերն ալ երեսի
վրայ կը մնան: Իմ զիտցածո՞ւ ամէն մարդ ձեռքէն
եկածին չափ ազդին գործերուն ալ աշխատելու է:
Հատ մըն ալ կը խմէ՞ք, Արխաղոմ աղոտ, ախորժակ կը
րանայ:

— Սովորութիւն չունիմ մէկ զուտթէն տեսիր
խմելու:

— Մեր զաւտթներն պատիկ են, մանուտանդ թէ
Պալսոյ օդն ալ էր վերցունէ:

— Եատ լաւ:

Երկու բարեկամները մէյ մէկ զաւտթի եւս խը-
մեցին իրարու կենդանութեանը, և Մանուկ աղոտն
սկսաւ ատենաբանութեան:

— Այս առառու ըստու, մեր թաղին ազդային
զբոսարանը զացած ժամանակս, ձեզմէ աղէկ չըլլայ,
միը բարեկամներէն Մելքոն, ազային հանդիպեցայ:
Այս Մելքոն աղան նախ Բարթողիմէոս ազային աղ-
ջին առած էր: Բարթողիմէոս աղան ալ ժամանակաւ

ժամանվ կը ցուցնէն եղեր իրեւ բարի մարդ, հիւրու-
սէր մարդ, ազգասէր և բարեպաշտ մարդ, և չուկա.
յին մէջ շատ խանութներ ունէր՝ որոնցմէ տարին
բաւական եկամուտ կ'առնէր: Քանի մը՛ տարիէն Մել-
քոն ազային կինը մեռաւ և Մելքոն աղան համեստա-
գործ Նիկողօսին ազջկանը հետ կարգուեցաւ: Այս
ազջիկն քանի մը եղբայրներ ունի, որոնց մին Ամ-
բակում ազային քայլ զրազրութիւն կ'ընէ: Այս Ամ-
բակում աղան ալ տղայ մը ունէր որ թօւզի խաղու-
լով հօրը շատ ստակը կերտւ և վերջէն նուստաստան
փախաւ: Այս աղան Մարգար եղիսկոպոսին քրօջն
թօսան եղբօրսրդին էր: Միւս եղբայրը չուկային մէջ
ոսկերիչ է, բարձր հասակով, սիրուն մարդ մըն է:
Երբարդ եղբայրը տահնօք շատ պարապ պարտեցաւ,
խեղճութեան մէջ ընկառ, անօթութենէ պիտի մեռ-
նէր, վերջէն թաղական ընտրուեցաւ և մէկ երկու
տարիէն ինքինքը ժողովեց: Չերկեցնեմ իօսքս, Մել-
քոն աղան՝ այդ Նիկողօս ազային ազջիկն առնելէն
ետքը քանի մը տարիներ շատ հանգիստ կեանք վա-
րեց, բայց վերջէն բախտը գարձաւ, ձախորդութիւն
ձախորդութեան վրայ եկաւ և ունեցածը չունեցածը
բոլորովին կորսնցուց: Օր մը առնեմ զինքը հօս բե-
րեմ և տեսնէք թէ ինչ լարի մարդ է: Եղբայր մըն
ալ ունի որ վարպետ ժամագործ մըն է, ատենօք Պէօ-
յիւք: Տէրէ կը նստէր, վերջը քանի մը տարիներ իւս-
կիւտար նստու, ետքէն Քոչմ Քարու երթաւով,
հօն ալ չկրցաւ նստիլ և հիմայ չեմ զիտեր ուր կը
հստի: Բայց շատ վարպետ ժամագործ է: Թորոս ա-
ղան որ և ոչ մէկ ժամագործի կը յանձնէ իւր ժա-
մացայցն, անոր կաւտայ որ մաքրէ: Այս թորոս ա-
ղան կը հանչնա՞ք, ուրիշ տեսակ մարդ է, անոր մէկ
պատմութիւնը ընկեմ քեզի և մտի՛ ըրէ որ տեսնես

թէ աշխարհիս վրոյ ասանկ մարդ մը կը գտնուի
եղեր որ . . .

— Յերեմ ապօւրը, հարցուց տիկինը սենեակին
դռնէն ներս երկնցնելով զլուխը :

— Քիչ մը համբերէ, տիկին, խօսքս լմնցունեմ
վերջը բեր: Այնպէս չէ Սբիսոլամ ազա, խօսք պէտք
է եա: Եթէ մտիկ ընելու ժամանակ չունիք և զը-
լուխիդ կը ցաւցնեմ կոր, ըսէք:

— Աս ի՞նչ խօսք է . . . բա . . .

Սբիսոլամ աղան չկրցաւ շարունակել իւր խօս-
քը զոր ընդմիջեց Մանուկ աղան Թորոս աղային
պատմութեանն սկսելով :

— Այս Թորոս աղան, շարունակեց, մուշտա-
կագործ մընէ, ականջը խօսի, և իւր ընտանիքովը
հանգիստ կեանք մը կը վարէ: Իւր տանը պէտք եղած
պարէնը, կարտափիքն և հանդերձեղէնն իւր ձեռքովը
կ'առնէ և իրմէ զատ ոչ մէկու մը վստահութիւն ու-
նի, ականջը խօսի: Մսավաճառէն միս կ'առնէ, տուն
երթալուն պէս կը կշոէ զայն և անպատճառ քանի մը
տրամ պակաս կը գտնէ միսը, մսավաճառին կ'երթայ,
հետր կոիւի կը բռնուի և քանի մը տրամ պակաս
արուած միսը կ'առնէ տուն կը դասնայ: Ասանկ տա-
րօրինակ մարդ մընէ, ականջը խօսի: Օր մը այս Թո-
րոս աղան, ականջը խօսի, Ժամացոյցին փոշիները
մաքրել տալու համար ժամագործի մը կ'երթայ և հե-
տը սակարկութեան սկսելով՝ վերջառիէ տասն և
հինգ գահեկան կը հաւանի տալ, այն պայմանաւ որ
ժամագործն իւր առջեւը մաքրէ ժամացոյցը, վասնի
Թորոս աղան ականջը խօսի, ինչպէս ըսի և ոչ մէկու
մը վստահութիւն ունենալով չէր ուզեր ժամացոյ-
ցըն ժամագործին յանձնել և երթալ, վախնալով որ
ժամացոյցին մէջէն բան մը կը գողցուի, կամ ժամա-
գործը դիտմամբ կ'աւրէ ժամացոյցն՝ մեծ ծախք մը
բանալու համար, ինչպէս որ կընեն շատ մը ժամա-

զարձներ երբ քանի մը օր անգործ մնան: Ժամագործն
իւր պատւոյն դէմ անարգանք կը համարի Թորոս ա-
ղային առաջարկութիւնն և կը բարկանայ, եթէ զու-
րուուիր ժամագործին աեղ չէի՞ր բարկանար:

— Կը բարկանացի, պատասխանեց Արիսողամ
և իւրեր մէտքը ապօւրին զրկած բլարով բնաւ ա-
կանջ չէր կախեր Մանուկ աղային ըրած պատմու-
թեանը:

— Թորոս աղան, ականջը խօսի, կրտկ կը կըտ-
րի ժամագործին բարկանալուն վրայ, և քանի մը
ծանր խօսքիր կրնէ իրեն, որ ընելու չէր. այնպէս
չէ:

— Այսպէս է, պատասխանեց դարձեալ Արիսո-
ղամ աղան մեղքենաբար, միշտ հաւանութեան պատաս-
խաններ տալով իրեն եղած հարցու մներուն, որպէսպի
խօսքը չերկարի և կերտկարը բերեն:

— Ժամագործը կը վանտէ Թորոս աղան, ա-
կանջը խօսի, Թորոս աղան ալ, ականջը խօսի, խօ-
սութէն դուրս ենել չուզեր, վանտուիլն իրեն պըզ-
տիկութիւն համարելով, զուն ալ բլար չես ելլար
ալ:

— Զեմ ելլար ալ, պատասխանեց Արիսողամ ա-
ղան, որ չէր զիսեր թէ ուսկից չէր ելլար և ի՞չո՞ւ
չէր ելլար, վասն զի, ի՞չ չպէս բախնք, Թորոս ողային
բրած պատմութեան և ոչ մէկ բառը իւր ականջը մը-
տած էր, միայն հարցու մներու կը պատասխանէր:

— Ծեծկըւուքը կ'սկսի, ժամագործն ապտակ մը
կը զարնէ Թորոս աղային, ականջը խօսի, Թորոս ա-
ղան, ականջը խօսի, կից մը կուտայ ժամագործին.
կրծեմ ով ալ բլար՝ Թորոս աղային աեղը ուրիշ
կերպով չպիտի երնար պատասխաննել ժամագործին
ակտակին: Ոտքէ պազնեմ, Արիսողամ աղան ըսէ, ը-
սէ, այնպէս չէ:

— Դաւք ալ հսս դոմաղէսո՞վ կը շինէք, հարցուց մէկէն ի մէկ Արիսողամ տղան:

— Դոմաղէսո՞վ . . .

— Այս', ուրիշ տեղեր դոմաղէսով կը շինեն եղեր,

— Ժամացոյցը :

— Ո՞ր ժամացոյցը :

— Թորոս աղալին ժամացոյցը :

— Թորոս աղան ո՞վ է :

— Մտիկ չըրի՞ր ուրիմն բրած պատմութիւնս :

— Բրի, կատարեալ մտիկ ըրի, և սու Արիսողամ աղան, որ իւր դոմաղէսի հարցումովն հաստատեց թէ միտքն ապուրի, ապուրէն դոմաղէսի, դոմաղէսէն Պոլսոյ մէջ ըրինձի ապուրին ինչ չոլէս շինուելուն զենացած էք. և բնաւ ունկն չէր զրած Մանուկ աղալին խօսքերուն:

Արիսողամ աղան շոտ իրաւունք ունէր իւր տան տիրոջ երկարաձիգ ճառն մտիկ չընելու, մանաւոնդ անօթի փորով.

Աշխարհիս մէջ կան մարդեր որք կը կարծեն թէ իրաւունք ունին մէկու մը քթէն բռնել և ժամերով ան որ զլուխը ցաւցանել: Ուրիշներ ալ կան որ իրենց խօսքերը մտիկ բնել տալու համար մարդ կը փրհարուն. և եթէ չզոնեն պատրաստ են յօժարակամ օրական վարձ մըն ալ տալ, ոմանք ալ ամսականով ուն. Կնդիր կը փառին: Շատ անցամ ինձի ալ պատահած է այս փորձանքը, և ես մտիկ ընել ձեւացնելով՝ իմ գործիս զրոյ խորհած եմ, հաւանութեան պատասխաններ տալով ինձի եղած հարցումներուն. այնպիսի, պատասխանած եմ եթէ այնպիս չի՞ հարցաւէր ինձի. արդարութիւնն ալ այս է պատասխան տուած եմ երբ արդարութիւնն ալ այս չի՞ հարցումն ուզդաւէր ինձի. իրաւունք ունիս ըստ եմ երբ իշաւունք չունի՞մ

հարցումն եղած է, որպէսի խօսքը կարձ կապահի: Դժբախառութիւնն հան է որ գլուխով ցաւցնողն երբեմն այնպիսի հարցում մը կ'ընէ որուն պատասխանելը դժուար է, վասնզի վճիռ տալը քեզի կը թողու: Օրինակի համար, լմացնելէն եաքը ճառն զոր գու բնաւ մակի ըրած չե՞ն՝ կը հարցունէ քեզի:

— Մարկոս աղան իրաւունք ունի թէ Կիրաւկոս աղան:

Ի՞նչ պատասխանելու է. զործին վրայ բնաւ աեզեկութիւն չունիս, որո՞ւն ատլու է իրաւունքը, մանաւոնդ գիտնալու է թէ իրաւունքն որու պէտք է տալ որպէսզի զլուխով ցաւցնողին սիրաը չի ցաւի: Ասոր ալ ես գիւին ճամբան զամծ եմ և ճեմեւել պատասխանները կուամած:

— Գործն անուշտեամբ լմացնելու է:

— Այս', բայց իրաւունքն որո՞ւ քաղն է:

— Ի՞նչ օգուատ, զէշ մարզու հետ զլուխ չելուիր:

— Այս', բայց կ'աղաջիմ, ըսէ՛, երկուքէն ո՞րն իրաւունք ունի:

— Ի՞նչո՞ւ կը սափեկս որ ըսկե, եղբայր, երկու անգամ երկու չորսի պէս յայտնի է իրաւունքին ո՞ւր ըլլալը:

Շտակըն այս պատասխաններով գոհացուցած եմ. բայց սևանք ալ կան որ կարծես զքիկ ոստիկանութեան պիտի յանձնեն եթէ չըսկե թէ՝ Մարկոսն իրաւունք ունի իսկ Կիրակոսն անիրաւ է: Ասոնց ալ ձեռքէն խալսելու համար՝ սափազական գործ մը ունիմ ըսկելով տուր քալեր եմ: Իսկ վերջերս ահանելով թէ այս ընթացքս կը քաջակը շատախօսները, քաղաքավարութիւնը մէկդի դնելով որ մը անսանցմէ մէկան ըսի:

— Պարս'ն, զքեզ երկու ժամ մատիկ ընելու հաւաք երկու սովոր կուզեմ, երկու սովորին լուծու մը պակաս եթէ տառ չեմ ընդունիր:

Մարդը կէս սովոր տուաւ, իսկ ես չընդունեցի և օձիքս խալսեցի: Այս օրերս կը լուծ որ այդ ժարշգը քառասրդ սովորի երկու ունկնդիր եւս վարձած է: Երանի Մասիսին՝ որ իւր ունկնդիրներուն սատկաւալու աեղ անոնցմէ սատկ կ'առնէ:

Արխոսզմ ազան ինծի պէս չվարուեցաւ և, ինչպէս յայանի է, երբ զմատպէսի հարցագնդում ով զգալ տուաւ ատենաբանին թէ իւր ձառն բնուած մը տիկ ըրած չէր՝ իւր անքաղաքակարութիւնը անձիշապէս դարձանելու համար ըստաւ.

— Կատարեալ մատիկ ըրի:

Աղէ՞կ ըրաւ: Յայտնի է որ գէշ ըրաւ: եթէ ես իւր տեղն ըլլայի՝ պարզապէս կ'ըսէի Մանուկ ազային,

«Մանուկ ազա, ինծի նայէ՛, եղբայրս, երրոր մէկը խօսիլ կը սկսի, խղճատանքը մէկդի դնելու չէ: Ութը ժամէ ի վեր անօթի եմ ես և բնու պէտք չունիմ գիտնալ թէ Մարտիրոս ազան որուն ազան է, թէ՝ Գէսրդ ազան որուն հայրն է, թէ ժամագործը Թորոս աշային ազատկ հաներ է թէ Թորոս ազան ալ ժամագործին կից տուեր է:

Այսպէս կը խօսէի բացէ ի բաց ոչ թէ միայն ընկերութեան մը մէջ գլուխ ցաւցնողին, այլ նոյն խոկ այն վարդապետներուն որ չատ խօսելու նախատելու միայն՝ չորս ժամ քարոզ կուտան և կը վիշտաւորուին եթէ ժազովուրդէն մէկը քարոզի ժամանակ եկեղեցին դուրս ելնէ: Եւ արդէն ըստ և մը եկեղեցկապասի մը սր հինգ ժամ քարոզ խօսելէն եաքը եկեղեցին դուրս ելած էր և խուցը կ'երթար:

— Ո՞ւր կ'երթաք, սրբազան, հարցուցի:

— Շատ քրտնած ըլլալով խուցս պիտի երթամ և լութ պիտի փոխեմ:

— Դուք ո՞ւր կ'երթաք, հարցուց ինձի:

— Ես ալ տուն կ'երթամ լութ փոխելու համար, պատասխանեցի իրեն:

Եւ այն օրէն ի վեր եղիսկապան կարձ կը խօսի քարոզին մէջ:

Արխոսզմ ազան չունեցաւ այս համարձակութիւնը և խրախոյս տուաւ Մանուկ ազային որ չարունակէ իւր ձառը գոմաղէստկան հարցման պատասխանելէն ետքը:

— Գոմաղէստ հոս կը գործածենք ապուրի մէջ, րիլազի մէջ, և աւրիշ մոեղէն քանի մը կերակուրներու մէջ, բայց բնուած երբե՛ք ժամացոյցի մէջ:

— Շնորհակալ եմ, ապուրի մէջ կը գործածուի ըսել է, ես ալ ատ գիտնալ կը փափաքէի:

— Ապուրը գոմաղէստով կը սիրէք թէ ոչ:

— Գոմաղէստ կը սիրեմ:

— Շատ ազէկ: Դառնանք հիմայ մեր խօսքին... ո՞ւր մնացինք... հա՛, Թորոս ազային վրոյ էր: Տարօրինակ մարդ մըն է աս Թորոս ազանջը խօսի, չատ պատմութիւններ ունի, ուրիշ գիշեր մըն ալ զանոնք կը պատմեմ և ժամանակ կ'անցունենք: Երկար չընենք, աս տուաւ հանդիպեցայ Մելքան ազային...

— Բերի սր տաք տաք ուտինք, ըստ ափկինը ներս ժանելով և ապուրը բերելով:

— Այս՛, այս՛, ուտինք, վանդի շատ անօթի եմ, ըստ Արխոսզմ ազան:

— Հրամակեցի՛ք...

— Շնորհակալ եմ, ըստ Արխոսզմ ազան և դգուրը բերանք տանելու չմնաց մէկէն ի մէկ վեր ցատկեց:

— Կարծեմ թէ շատ առք էր, ներեցէք, Արիստոլու ազա, ըստ արկինը:

— Քիչ մը ջւր ուս լերանդ, Արիստոլու ազա, աւելցուց Մանուկ աղան:

— Վնաս չունի, վնաս չունի...

— Տիկին, ինչու համար ուշագրսութիւն չէք ըներ կերակուրներս, առքութեանը կամ պալութեանը, ըստ էրիկն կնոջ:

— Ալ այս գիշեր մեր պակասութիւններուն աչք դոցելու է Արիստոլու ազա:

— Վնաս չունի, բան մը չէ:

— Ապուրը մինչեւ որ պաղի՝ այսօրուան գիտքը պատճեմ գոնէ, ըստ Մանուկ աղան:

— Մանուկ աղա, Արիստոլու աղային գլուխը մի՛ ցաւցներ այս գիշեր, թերեւո չախորժիր:

— Ժամանակ անցունելու համար պիտի խօսէի որ զրոնու և չնեղուի:

— Աւրիշ գիշերուան թող, այս գիշեր յագնած յոդնած կրնոյ քեղի մտիկ ընել:

— Կարծեմ թէ Արիստոլու աղան սիրով մտիկ կ'ընէ ազգային գործերը և բնաւ ձանձրութիւն չի զգար:

— Այս՛, սիրով մտիկ կ'ընեմ, պատասխանեց հիւրը, բայց տիկինին ըստին պէս վաղը գիշերուան թաղաւոր, վասնզի այսօր շատ յագնած եմ:

— Շատ լաւ, շատ լաւ, ինչպէս որ կուզէք այնպէս ըլլայ, բայց մեր թաղին թաղականին գործը շատ զուտքալի է: Մելքոն աղան եթէ հսու բւրար և պատճէր՝ խնդալին կը ճաթէինը:

— Ապուրը պաղեցաւ, հրամմեցէ՛ք, ըստ արկինը:

Արիստոլու աղան այս հրաւէրն առնելուն պէս գործով աղուրին վրայ յարձակեցաւ:

— Օդի մրն ու կը խցէ՞ք, Արիստոլու ազա:

— Ծուրհակուլ եմ, չեմ աղիր:

— Տիկին, Արիստոլու աղուրին գինի լիցու՞ր:

— Մանուկ աղա, այս դիչեր այլանդակ խօսքիր կ'ընեմ, աղուրի վրայ դինի կը խօսքիր:

— Ինչպէս չխմտիր, ահանենք պիտի հաւնի՞մեր գիտին:

Տիկինը գուրս ելաւ և խաչած միս բերելով աղուրին վրայ դրաւ:

Արիստոլու աղան այնպիսի ախորժակով մը կ'ուտաէր որ մաի կարները առանց ծառելու կը կլլէր:

— Փառք քեզ Աստուած, այս գիշեր ալ կը ըշշացանք, բայց Արիստոլու աղան փարը քահանայի մը պէս լիցներին ետքը, և երեսը խաչակնքելով ուցած ձայնով «Հայր մեր» բաելով սեղանէն ելաւ և լուացուելու համար ջուր փնտոեց:

— Կերակուրէն վերջը կը լուացուի՞ք, հարցուց արկինը հիւրին:

— Եթէ ջուր ըլլար...

— Մենք ասկորութիւն չունինք, բայց ձեզի քիչ մը ջուր բերեմ և լուացուեցէք:

Արիստոլու աղա լուացուեցաւ և ձեռքերը չորս ցնելու առեն հարցուց ախկինին թէ՝ ո՞ր սենեակին մէջ պիտի պատճէր:

Տիկինը ձրագով երկրորդ յարկը սենեակ մը առաջնորդեց հիւրն և վար իջաւ:

Այս պանկելու սենեակին փաքը էր և անոր ձիչտ չափը մոււած կ'ըլլանք եթէ ըսենք որ Արիստոլու աղային չասակին երկայնութիւնն ունէր: Անկաղինը շինուած էր այն միակ պատուհանին առջև որ փաղոցի վրայ բացաւած էր: Աթու մը, քառակուսի պղափիկ նկատն մը, փոքրիկ հայելի մը, ջուրի

շիշ մը և գուաթի մը, վրձին մը այս սենեակին կառ
բասիքը կը կազմէին:

Արիսողու աղաս սենեակին ներս մանելաւ պէս
ձեռները բացու և նորէն խոռք տուաւ Ասուածոյ
որ վերջապէս խալսեցու փորձանքներէն և առանձին
մնաց: Բանակն արծոկուող մը չէր կարոզ աւելի ու
բախութիւն զգալ: Փառաբանութիւնն առարակուն
պէս հանուեցու և ինքզինքն անկողնոյ մէջ նե-
տեց:

— Ասկէց եաքը ընելիք գիտեմ, ըստ ան-
կողնոյ մէջ, և ոչ մէկու նեա պիտի ահսնուիմ, վա-
սըն զի ևս այս պալսեցիները շտա չսիրեցի, տանիք
կամ դրանդ ամսնելու կը նոյին կար կամ երկու
ժամ գլուխող շաւցնելու: Խոչըւս պէտք իմին, և
եկու ևմ հաս կին մանելու և երթալու: որուն պշ-
ջիկն որ սիրեմ կ'ուզեմ, եթէ ստո՞ն՝ կ'ասնեմ, գար-
ծիս կ'երթամ, և եթէ չտան, և եթէ չտան, բայց
ինչո՞ւ չտան, ինձեւ աղէկին պիտի տան, և եթէ
վաղը ուս լրակիրն իմ անունս ալ վաստարապէս
գրէ՝ ոյն ասեն չտուեն պիտի աղաչեն ինձի որ ի-
րենց աղջիկն ատնեմ, մէկէն տեսլին ինչ պիտի
քում, անոնց մէջէն պարկիշտ աղջիկ մը կը գա-
տում, խօսքիտը կ'ընեմ, և նշան կուտամ, կը
կարգուիմ:

Այս սրաշումները տալով կը քնանայ Արիսողու
աղան:

Զ.

Արիսողու աղան աղուոր քուն մը քաշեց նոյն
գիշերը, վասնզի շատ յոդնած էր, և թերեւս հետեւ
եալ օրն ալ չէր բանոր աչերն եթէ սիզոցի վաճա-
ռականներն առաւօտուն իրենց անարկու ձայներու
վըն չխառվէին անոր քունը, մանուան ոյտ կարմնի,
որ ոչ միայն յագնած ժարդերու համաստառնն է

այլ շտա մշանջենոկան ցուերու տուամանակեայ
զարժաննն է: Երանի՛ անոնց որ կը քնանան և ուշ
կ'արթննան կամ բնաւ չեն արթննոր, վասն զի ա-
նոնք բնաւ չեն զգար կամ զանէ քիչ կը զգան այն
ցաւերն որք հալ ու մաշ կ'ընեն մարդու: Բայց Պու-
սոյ մէջ քնաննոր աղասամթիւն ալ չկայ, գիշերնե-
րը պահապաններն այնքան աւժով գետին կը զար-
նեն իրենց վայսերն և առաւօտուն փազցի վաճա-
ռականներն այնքան բարձր ձայնավ կեզանակեն
իրենց ոպրանքներն որ քունն կը չւարի կը մնայ
թէ ո՞ր կողմ փախչի: Եթէ վերջին գասասանին
օրը Գարսրիէլ հրեշտակապետը չյաջողի խոր փազովն
մեսեալներն արթնցնել՝ ևս պիտի տաջարկեմ որ
որդ պաշտօնը Պոլոսյ վազցի վաճառականներուն
կամ գիշերացին պահապաններուն յանձնուի: Արի-
սողու աղան ար վազցի վրայ սենեակի մը
մէջ կը պակէր, ստիպուեցու կանուխ արթննու:
Աչերը բանալուն պէս անկողինէն ելու, սնառուկը
բացու և ձերտակեղէնները փախեց, յետոյ լուաց-
ուեցու և հաղուեցու:

Ցան արկինն որ իմացած էր հիւրին ելած ըլ-
լուն՝ վեր ելու, և զարդարուն սենեակ մը հրամցը-
նելով զայն իմաց տուաւ թէ մէկն կը սպասէր վա-
րը և զի՞նքը անոնիլ կ'առզէր:

— Թո՞գ հրամէլ, ըստ Արիսողու աղան:

— Ցան լաւ, կ'առաջեմ, բուք ինձի, խանուէն
կաթո՞վ կը խուէք թէ տանոց կաթի:

— Կաթ կը խոհեւ տանց խանուէք:

— Կաթ բերեմ ուրիմի:

— Այսո՛, կաթ բերէ՛ք:

Տիկինը վար զայց:

— Ցեսներո՞ ա՞վ է սու մարդը, ըստ ինքնի-
րին խօսքը մարդը, թերեւս աղջիկ ունի կարգելու
և իւ Պոլիս վար իմանալով՝ տուաւուն կանուխ

հասու խօսելու հկանքէ : Բայց ևս մինչեւ որ չպատշեմ աղջկան ինչ բնութեան աէր ըլլալը՝ խօսք չեմ տար . նախ ամէն բան հասկնալու հետ, աղջիկը քննելու հետ, վերջեն հօրս հարցունելու հետ, վասն զի իմ սիրելս բայտական չէ, պէտք է որ հայրս ալ սիրէ իմ կիսու, ոչ թէ միայն հայրս, այլ ամէն մարդ հառնելու է . . .

— Յարեւ, վակամփություն աէր, բառու երկանուածեաց և վակառուն երխասարգ մը սենեակ ժանելով և արգագարց Արխանուն աղացին վաղելով անոր ձեռները սպակելու համար :

Արխանուն աղա տեղէն ելու և ձհաները յանձնեց այդ երխասարգին որ ուզածին որս սպակ և թութուէ զանոնք հազար ու մէկ յարկանքներ մասսացանելով :

— Խառնէք՞ք, Արխանուն աղա, կ'աղաչեմ, չի վայլիր որ ոսք ելնէք, բառու երխասարգն ափրոշը գարձնելով իրեն յանձնուած ձեռներն և կարտուելով ևս ես գնաց թիկնաթափ մը վրայ նոտու :

Արխանուն աղան բազմոցին վրայ բազմեցու :

— Արդարեւ մէր սպարաքն էր երէկ գալ և ձեր գալուստը չնորհաւորիր, բայց ուշ իմ աշտանոք ձեր գալն առար համար յատկապէս ձեր ներզագալիքնը կը ինդքինք, բառու երխասարգն ձեռներն իրար շփելով :

— Այօր գալով պակասութիւն մը ըլուծ չէք ըլլալը որ ներզագալիքն խնդրէք :

— Զեր քաղաքավարութիւնն է որ այնպէս խօսէ կուտայ ձեզի, բայց մինք մէր պակասութիւնն միշտ կը ձանցնանք: Արդարեւ մէծ պակասութիւնն է մէր ըլուծը, ձեզի սպէս երիւելի մարդ մը մայրաքաղաք դայ և պատկերանան մը անդիշութիւն բայցի իրթայ, որակուստ թիւն-

ներու պակասութիւնն է որ և ոչ մէկ կերպով մը կրնոյ պակասութիւն ըլլալէ դադրիլ:

— Ամենեւին պակասութիւն մը չէ, եթէ բընու չդադրիլ, դարձեալ պակասութիւն մը չէր համարուէր ինձի համար:

— Եսու վեհանձն էք:

— Ամենեւին վեհանձն չէր:

— Թագ այնպէս ըլլայ, տար համար հիմ վիճաբանութեան մանելու հարկ չեմ աեսներ, միտքն ինքինքն ու ձեր արագագութեան առկ կը դընեմ և ձեր հրամաններուն կը սպասեմ, եթէ կ'աւզելք հաս քաշել տաւէք, եթէ կը վախաքիք ձեր զրահներուն պատահ համեցեք և հան հանենք, ինչ ձի համար միւսնայ բանն է, դաք ինչպէս որ կը սիսորձիք՝ տիսպէս ընկել պատրաստ եմ:

— Ի՞նչ պիսի քաշել տանք . . . իմ ականերս ողեկ են:

— Գիտեմ որ ակաները աղէկ են, ինչպէս նույն դաք ալ աղէկ էք, ևս կը վախաքիմ ձեր լուսանկար պատկերը քաշել:

— Ես մինչեւ հիմա պատկերու բնու քաշել առած չաւնիմ և քաշել տալու հարկ մըն ու չեմ աեսներ, վասնզի ամէն օր հայելի կը նայիմ և ինք զինքու կը աեսնեմ:

— Եթէ ձեր պատկերը մէկու մը զրկիլ ու զէք՝ հայելին կրնաք զրկիլ Արխանուն աղա:

— Հայելին ինչու զրկիմ, ևս կ'երթամ:

— Եսու աղէկ կը խօսիք, բայց ևս մինչեւ որ ձեր պատկերը չնունեմ չեմ կրնար հանգիստ ըլլալ, ինձի համար պակասութիւն մըն է ձեր պատկերը չնունելու, թագ որ ձեզի համար ալ այնպէս է:

— Ի՞նչո՞ւ:

— Լուսած բան է որ ձեզի պէս երեւելի ժարդ
մը Պոլիս զայ և պատկեր քաշել չառյ. աշխարհ
արտրատ ձեր վրայ պիտի խնդացնէք:

— Ի՞նչո՞ւ:

— Պատճառը յաջանի է, մեծ ժարդերու ընտ-
կանաբար մեծ բարեկամիներ կ'ունենան, զայք մեծ
ժարդ մըն էք և այսօր կամ վաղը պիտի սկսիք մեծ
ժարդերու այցելութիւններն ընդունիք: Ասո՞նցէ
շատերն իրենց պատկերներէն մէկ մէկ հաս պիտի
նուիրեն ձեզի, և զուգ ու պիտի ստիպուիք ձերի-
նեն մէկ մէկ հաս առլ անսնց:

— Եւ եթէ չամ կը խնդացն իմ վրայ:

— Խնդալն ալ խօսք է, ընկերութիւններու
մէջ ժամի վրայ կ'առնեն ձեզի:

— Զարմանալի բան...

— Լուսած բան է որ ձեզի պէս ազնուական մը
պատկերը հանել չառյ. մեծ ամօթ է...

— Մ'ո՞ծ ամօթ...

— Այս', չամ մեծ ամօթ է, անվարափ պարափ-
լըն այնքան ամօթ չէ, որքան իրեն պատկերն չու-
նանալը:

— Ես չէի պիտեր:

— Բազարկերթութիւնը և լուսաւրութիւնը
պարափ կը գնեն մեր ամէնուս վրայ որ մեր պատ-
կերներն աւնենանք:

— Լրագիրները պիտի որե՞ն որ Արիսովու ա-
զան իւր պատկերը քաշել առած է:

— Լրագիրներու վերաբերեալ խնդիր մը չէ
առ...

— Բաեւ է թէ եկեղեցիներու մէջ ծանուցում
ալ չպիտի ըլլայ:

— Ծանուցումի ի՞նչ հարկ կայ: Արիսովու ա-
զան կը ծաղրէք զիս...

— Ծագրի՞ւ տար չամ գէճ և՛ եռ ի՞նչ ի-
րաւունք աւ ամի ուրիշ մը ծագրելու...

— Մ'ի՞ բարկանաք...

— Զէ, կը բարկանամ, ես ընաւորութիւն մը
ունիմ որ ամէն բան շիտով կ'ուզեն:

— Ծամ լու: ի՞նչ գիրքով հանել կ'աւզեք ձեր
պատկերը:

— Միաք չունիմ պատկերս քաշել առաւ, վա-
սըն զի անօգուտ բան մը կ'իրեւոյ ինձի:

— Ի՞նչ կ'ըսէք, տակից առելի օգատկար ի՞նչ
կայ: Եթէ ձեր բարեկամիներն մէկուն այցելութիւն
մը առալ աւզեք՝ և առանակ չունենաք՝ ձեր մէկ
պատկերը կը զրկէք կը յմնայ կ'երթայ: Եթէ կար-
գուուծ էք՝ ձեր ամուսնուն կը զրկէք որ ձեր բացու-
կայութեանն առար վրայ նայելով կարաք
կ'ոսնէ: Եթէ ամուսնութ չէք՝ շամ ազջիկներ ձեր
պատկերը կը ահսնեն և ձեր ո՛վ ըլլալը կը հանկը-
նան, որպէս ընկերութիւններուն մջ ձեր ահսնը կը
խոսւի: Լուսանկար պատկեր մը այս օրուան օրս
հացէն առելի պէտք է մարդուս կ'ազածեն որ հա-
ճուղուիք և ժամ առաջ երթանք ձեր պատկերը
քաշենք:

— Ազջիկներն ի՞նչուն և ո՞ւր պիտի ահսնեն
իմ պատկերս...

— Զէ՞ որ ձեր բարեկամիներուն պիտի առաք, ա-
հսնք ալ իրենց առանք պատկերներու յասուեկ գիրք-
իք մը մէջ պիտի անցունեն և ամէնուն պիտի ցու-
ցընեն:

— Ցաւցնելով ի՞նչ պիտի ըլլայ:

— Ի՞նչ կ'ուզեք որ ըլլայ... միշտ կը յիշ-
ուիք...

— Եթէ չյիշուիմ ի՞նչ կը կարանցնեմ, հո՞գս
էր իմին թէ զիս պիտի յիշեն, կ'ուզեն յիշեն, կ'ու-

զեն չըիշեն, ևս անտանկ դատարկի բաներու պատկի չեմ
տար և քու խօսքերսւդ ալ չեմ հաւատաբ:

— Ասիկա պղափիկ ենսիւլը մըն է:

— ենսիւլըն ո՞վ է:

— Տէ՛ր, գիտէք որ արիսր մը վիրաւորեցիք
ծանրապէս:

— Ե՞ս վիրաւորեցի:

— Այս՛ գուք...

— Պատիւր քաշել չառլաւս հոնար պրագարչ
տութեա՞ն սիստր... ևս մինչեւ հիմա մէկը վիրաւորած չեմ:

— Այսօր զիս վիրաւորեցիք:

— Գնա՞մ սասիրանութեան իժաց տուր, պարտակ
խօսքեր ժամի ընկեր ժամանակ չունի:

— Ասաիկանութեա՞ն երթալու հարկ չկայ, կը
խնդրմ որ ձեր բերնէն ելած խօսքը հաշտեցնէք
ձեր քաղաքավարութեանը հետ:

— Ես կասի մէջ չեմ մաներ, գնա՞մ զուն հաշտեա-
ցուր եթէ կախ ընսպներ կան:

Մանուկ ազան Արխանզ ազային նախաձաշը
կը բերէ և եռաւանի սեղանի վրայ դնելէն վերջը,

Հրամակեցէք ձեր կաթը խմեցէք, կ'ըսէ:

Արխանզ ազան աթառ մը կ'առնէ, սեղանին
տանիւ կը նախ և կը սկսի կաթը խմելու:

— Բո՞չ որսցեցիք նայինք, Արխանզ ազային
պատիւրը կէ՞ս մէջքէն պիտի քաշէք թէ սոքի վր-
աց, կը հարցնէ Մանուկ ազան:

— Ոչ կէս մէջքէն ոչ ալ սոքի վրաց, կը պա-
տախանէ Արխանզ ազան:

— Աթառի մը վրայ նախած ամբո՞ղջ պիտի քա-
շէք:

— Ոչ:

— Պատկա՞ծ պիտի հանէք:

— Ոչ:

— Յայնարի՞:

— Ոչ:

— Ա՞սչուս սյոշեցիք աւրեմի:

Առաջեցինք որ մեր պատկերը բնու քաշել
չառնոր:

— Աս չըլլար, ունիկո մեց պղափկութիւն
է, Արխանզ այս, հիմա պղափկութիւն բանէ մինչեւ
մեծելոք գնամ, ամենն ալ ասսին քանի մը անդամ
պատկերնին քաշի կատառն, երկու ամսու արանիքն
անգամ իրենցն աւնին, միայն իրենց մօրը արդան-
դին մէջ զանուպները չունին իրենց պատկերը,
եթէ անսր ալ դիւրին մէկ ճամբանզանին անսնցն
ալ պիտի հանեն:

— Ես չկրցի համոզել Արխանզ ազան, որ կար-
ծեց թէ զիսքը խարելու համար եկած ևմ հաս, ըստ
պատկերանուը:

— Զէ, չէ, մեր պատիւրանան անտանկ մորդ
չէ, տիւլցուց Մանուկ ազան:

— Բո՞ր թէ Արխանզ ազային պէս մեծ և երե-
ալի ժարգ, մը իրեն պատկերն անպատճառ անհետու-
րու է:

— Այս անեպայն է, և քանի մը տեսակ: Օ-
րինակի համար, ատաներկու հաս պղափկ, ատակեր-
կու հաս սոքի վրայ, ատակերկու հաս աթոսի վրայ
բազմած, ատաներկու հաս քավասի նախած, ատակե-
րկու հաս չիտակ նախած, ատակերկու հաս սոք սոքի
վրայ վրած, ատակերկու հաս ձեռք ձեռքի վրայ,
ատակերկու հաս գլուխի ձեռքին կոթնած, ատակերկու
հաս ձեռքը սեղանի մը վրայ վրած, ատակերկու հաս
պատկած, ատակերկու հաս ձեռքը գուազան բանած,
ատակերկու հաս ինսպամերիս, ատակերկու հաս տիսուր
ողէմրով, ատակերկու հաս ալ ոչ ինսպամերիս և ոչ

ալխուր դէմքով։ Այս՝ Արիսովով աղա, առ ըստծներէս համ մը եթէ ուսկան ըլլայ՝ ձեր պատույն վնասկուգուց։

— Իրա՞ւ կ'ըսէք, հարցուց Արիսովով աղա։

— Սուս իշուելու բնաւ պարատկանութիւն չունիք, եթէ առնոք չունենան քու վրայ աղէկ աչքակ չին նայիր, բայսը մէծ ժարգերն առնոք աւնին։

— Մէծ ժարգերն անի՞ն, աղէկ վիսէ՞ս։

— Այս աւնին։

— Պզարկներն այսչափ չունին, անոնք կամ երեք համ և կամ շատ շատ վեց համ հանիւ կուտան։

— Բնու ժարէս չէր անյնիք որ պատկերին այսչափ կարեւորութիւն կը արաւի համ։

— Այս, կարեւորութիւնը ճիգու պատկերներուն կը արաւի, և սրբան աղէկ քաշուոծ ըլլան այնքան առելի կա մասրութիւն կ'առնեն։

— Քանի որ ամէն ժարգ իւր պատկերին անի, իւ մէծ ժարգ քլլալու ինչէ՞ն պիսի հասկաւի, միայն մէծ ժարգերը քաշել առալու եին որ այն ասէն։

— Բայց մէծ ժարգերունը ուրիշ անոնկ է յաշչոր գիրքավ և փայլուն թուղթի վրայ կը հանին։

— Զի՞ կրնար ըլլալ որ սպասուարներու ալ առջեւ բարիւ բանած հանենք։

— Շատ աղէկ կ'ըլլայ։

— Իրա՞ւ կ'ըսէք։

— Այս։

— Օրինակի հումոր ևս ապարակներ ալ ունիմ, սրանց մէջ շատ մը կովիր, ոչխարներ, ձիեր, սուզիր, բազեր կան, անոնք ալ կարելի չէ՝ պատկերին մէկ կովը դնել։

— Ասանք կարելի չէ, բայց սպասուարներդ կրնաս առնելի այնպէս չէ, պարսն Պերենիկի։

— Այս, այնպէս է, պատասխանեց պատկերահանը։

— Զի՞ կրնար ըլլալ որ, հարցուց Արիսովով աղան, պատկերին առկը գրուի որ այս մարդն ապարակներ, ձիեր, կովիր, էշեր ունի։

— Աս զդրուիր, կրնաց զդրուի՝ բայց մինչեւ այսօր սպասութիւն եղած չէ։ Աակայն ի՞նչ հարկ կայ զանոնք գրելու, արդեն ամէն մարդ շաւասկ կ'իմանայ։

— Զիւ վրայ նստած կրնա՞նք հանիլ։

— Այս, պատասխանեց Պերենիկի։

— Զի՞ն վաղցնելով սուկայն։

— Աս գժուար է։

— Շատ լու, վաղը կը նայիր։

— Եթէ կ'ուզէք՝ մերենան հսու ըերեւ վաղը։

— Այս, այս ըերեւիք, կրնաց Մանակ աղան, վասնղի չվտյլիր որ Արիսովով աղան ձեր սենեկը գայ։ Մէծ ժարգերը միշտ իրենց առներուն մէջ քաշել կուտան պատկերնեն։

— Գլխուու վրայ, ըստ Պերենիկն և ձեռները չիել սկսելով սաքի վրայ ելաւ և կայտառքը սկըսու այնպէս որ խօսք մը ըսել կ'ուզէք և կը քաշ առէր։

Յայտնի է թէ այն ժարգն որ բան մը ըսել կ'ուզէ և կը քաշուի, անպատճառ սուսկ պիտի ուզէ։

— Վաղը մերենան հսու ըեր, ըստ Արիսովով աղան։

— Շատ լու, պատասխանեց պատկերահանը միշտ կուտառելով և ձեռները չիելով։

— Վաղը մերենան հսու ըեր բախնք ո՛ւ, կրնաց Արիսովով աղան տեսնելով որ պատկերահանը չեր թար։

— Այս, հասկցայ, մերենան վաղը հսու պիտի

բերենք, պատոսիանել նորէն Դերենիկը, — բայց
սպառութիւն մը աւելինք մենք որ... ներեւէք ու-
կայն:

— Բաէք:

— Առջը կ'աշխած, ձանոր զգոյ ձեղի:

— Ծանր չպարբաճի:

— Սպառութիւն մը աւելինք որ եթէ մերինան
մէկու մը առնը առնիլ հարկ ըլլոյ՝ կանիսիլ զու-
մար մը կ'առնենք... ոչ թէ վաստավիւն չունե-
նալնուս համար՝ այլ սպառութիւն մը յարդելու
համար:

— Աս ի՞նչ գէշ սպառութիւն է...

— Վերջապէս սպառութիւն մըն է:

— Ծառ լուշ... երկու սոկի կը բառէ:

— Այս', կը բառէ:

— Արխազամ աղան երկու սոկի տուառ պատ-
կերանանին որ գուռը բանուն և աներեւութանան
մէկ ըրառ:

Է

Կան մարդեր որ ցցաւնել կ'օւզեն ինչ որ չու-
նին. կան ալ որ ցցաւնել չեն ուզեր ինչ որ աւելին:
Արիսոզու աղան մերջիններէն էր, կը վախտքէր որ
աշխարհ իմանայ աղարակներ ունենալը և իւր վա-
խարն իրականացներու համար սատկ ալ չեր խնա-
յիր: Այսպէս, երբ ըսին իրեն թէ մեծ մարդերն ի-
րենց պատկերներն աւնին՝ հաւանեցաւ որ ինք ալ
իրենն ունենայ, բայց կառկածերով թէ խարաւոծ
ըլլոյ և պարապ տեղը ստուկէ ելլայ՝ Դերենիկին
մէկնելէն անմիջապէս հարք հարցաւց Մանուկ աղա-
րին:

— Եթէ պատկերս քաշել չտամ՝ դիս մարդու
մեր չե՞ն դներ:

— Յաւ լիցի, բայց քանի որ ձեր աստիճանի
մարդերը իրենց պատկերները հանել տուած են,
ձեզի ալ կը վայլէ որ անսնց պէս ընէք: Երբ մէկն
ձեր պատկերն անհնալ վախտքի և դուք պատու-
խանէք թէ պատկերս քաշել տուած չեմ...

— Ի՞նչ կ'ըլլոյ:

— Բան մը ըլլոյ... բայց...

— Բայց ի՞նչ... աղարակնի՞րս կ'առնեն ձեռ-
քես:

— Ամենեւին:

— Աչխարներս, կովկը կը յափշտակի՞ն:

— Բնու... բայց խառարեալ մարդու անզ կը
դնեն ձեզի, չեն ըներ այն պատին զոր կուտան
մեծ մարդերս:

— Հանգայ, ի՞նչպէս հանել տալու և՛ ուրեմն
պատկերս որ ապրակսոյ չմնայ, թէ պատիկ մարդ չեմ,
վասնպի ըսիք թէ պատկերն ալ իրենց պատկեր-
ներն կը հանեն:

— Չեր պատիկ մարդ չըլլու հասկցնելու հա-
մար մեծ պատկեր հանելու էք, թիկնաթուի մը
վրայ նստած:

— Նար հազարանուր հագնելու և՛, այնպէս
չէ:

— Այս':

— Փառացնցու ալ կախելու և՛ հարկաւ:

— Տարակսոյ չկայ:

— Սանի ծխախաղ քաշելով և երկու մարդ ալ
դէմս բարեւ բանելով և մէկն ալ հանելս ձիս ըրո-
նելով:

— Այս', այս':

— Կես ուրիշ ի՞նչ պէտք է վաստար երեւ-
նար համար:

— Աշխափ բառական է:

— Կուզեի որ սպասուարներէս երկուքն ոլ չախելով գիտացէս վանաէի և անսնք ալ գլուխնին ծառծ դուրս ելնէին վերջապէս սանկ բաներ չի կը կրշնար ըլլալ . . . կամ թէ մէկը ծեծէի . . . օրինակի համար, մեր ագորակներուն վերակացուին երեսն իւեր պատայի . . . «մա՞րդ», քեզի քանի անդամներ հրամացեցի որ մշակներուն հետ քաղցրութեամբ վարուիս, կովերուս հետ սիրով երթաս, վար ու ցանը ժամանակին ընկա, քանի որ տառնք չըրիր, ևս ալ քեզի կը վանահամ»: Վերակացուն ոլ թաշկինակամն աչերը սրբելով ոտքերուս իշնայ ապաչէ և պաղատի, բսելով՝ «զաւակներուս սիրոյն համար ներե՛ յանցոնացա, տայչափ տարիներէ յետէ ձեր հացը կ'ուահեմ, գուք իմ բարերարս եք, ևս զնիզ գրիերուս մէջ այնչափ գրկած ու պատցաւցած եմ երբ դեռ պղտիկ էիք» . . . վերջապէս որւոր նման բաներ չե՞նք կրնոր դնել պատկերին մէջ:

— Ատոնց վրայ վազը կը խարհնիք, մենք չի-
ժամ սկսէինք մեր երէկուան պատմութեան որ կի-
ստա մնաց: Մելքոն ազան զիս աեսնելուն պէս . . .

— Կամ թէ սանկ կոնակի վրայ պատկիմ և սպասուարներս ոլ բանիօնս քաշեն . . .

— Զիս աեսնելուն պէս ժամեցաւ ինծի և . . .
— Նարկիլելով աւելի ժամանուր չըլլար . . .

— Մօնեցաւ ինծի և ձեռքերս բնելով ըստ . . . եթէ տյոօր չաշխատինք՝ մեր չուզած մարդերը թաղական պիտի ընարուին»:

— Ասնկ տառը կանգուն երկայնութեամբ մարբուն մը . . .

— Անսնք վաղաւան գործ են, Արիսողան աղա, թող տուէք որ սա պատմութիւնս լինյնէ: Մելքոն աղան թեւէս բոնելուն պէս քաշեց զիս աղղային ընթերցաւառն, ուր երիտասարդներ նսաած թուղթ կը խաղային:

— Ես ալ կ'ըսեմ որ մարբունը եթէ կարձ ըլ-
լայ՝ աղուար կ'երեւայ պատկերին մէջ:

Կեանքքիս մէջ հարիւր անգամէն աւելի հանդիպած եմ այս ահարանին, ուր երկու գերա-
սաններ խօսքն իրարու ըերնէն յափշտակելով՝ իւ-
րաքանչիւրը կը փափաքի տառջ իւր խօսքը մաֆի
բնել առլ: Այս՝ հարիւր անգամ ներկայ դանուած
եմ երկու անգամ ընկերութիւններու մէջ և իննը-
սունը ութը անգամ Սպղային երեսփախանական ժո-
զավոյ մէջ: Հարիւր մէկերարդ անգամն էր այս և
սպասանան կը գրկէր զիս ըսելու այս երկուքն մէ-
կան: «Թող տուր գիտաշինիդ լինցնել իւր խօսքն
և վերջը խօսէ՛»: Յայց որովհետեւ ուրիշ անգամներ
այսպէս խօսած ըլլալուս համար մէկուն կամ մէկու-
լին սիրով կառրած եմ, որունցի չէղոքութիւն պա-
հեր թող տուր իրենց փախասացութիւն ընել և սպա-
սել ահանելու թէ ինչպէս պիտի վերջանաց այս ահ-
սպասան որ Սպղային երեսփախանական ժողավոյ
մէջ գրիթէ միշտ կոխուլ կը վախճանի:

— Երաւաւնք ունիք, ոլտասախանեց Մանուկ
աղան, կարձ մարբունը շատ աղէկ կ'երեւայ պատկե-
րին մէջ . . . բայց և այնպէս ժաքուր և շխակ ըլլա-
լու է թաղական ընարաւոզ մարդ մը:

— Դուք աղէկը կը ձանչնա՞ք:

— Իմ ձանչնալս մինուկ օգուտ չըներ, քուէ-

արկութեամբ կ'ընտրուի:

— Քուէարկութեա՞մը:

— Այս, ըստ Մանմանակրութեան, քուէարկու-

թիւնը կ'ընտրէ:

— Ի՞նչ կ'ըսէք, թաղեցին քուէ՞ պիտի տայ

հիմա աղէկ մարբուն մը ընտրելու համար:

— Թաղականի վրայ է մեր խօսքը:

— Թաղակա՞նն ուսկից հանեցիր, մարդունի վը բայ է մեր խօսք:

— Մի՛ բարկանաք, Արքասով աղա, աշնալեռ բայ:

— Ինչո՞ւ բարկանամ ալխարի... վաղը երթանք համ մը տանենք:

— Գաւնենք:

Այս պահուն սենեալին դուռը բացուեցաւ և կնկան մը գլուխը երեւացաւ:

Այս կինը ծուշան կը կաչուէր և իւր արհեսան ալ սիրոյ միջնորդաւթիւն էր, այրերան կին կը զանէր, կիներուն այր կը ժամանարէր և զանոնք իրարաւ հետ ամուսնացնելով իւր աշխատաւթեան վարձքը թթնողունէր: Երբեմն ալ այրը կինէն կը զանէր և գարձեալ իւր աշխատաւթեան փոխարէնը կ'առնէր: Տարիքն եթէ իրեն հարցնես, երեսունը վեց է, իսկ եթէ հարցնես ինծի, որ միշտ սովորութիւն ունիմ կնկան մը խոստվանու տարիքին վրայ առան աւելցնելի քառասունը վեց է: Ծաղկի հիւանդաւթիւնը իւր նշանները ձգուծ է անոր երեսը: Այս և երկար դէմք մը, որուն կէսը կը կաղմէր ծնօտը, և որուն մէջանեղը երկնցած էր քիթ մը սրբարձր և ճախ յանդ մը ունէր, կը կրէր իւր վըրայ երկու փոքրիկ և սեւ աչեր որ ամէն վայրկեանին չըստ կողմը կը պարտէին: Հաղիւ երկու ժամ լայնութեամբ ճակատ մը ունէր, ընքուիները հիւանդաւթիւնէ թափուծ էին:

Տիկին ծուշան գլուխը զանէն ներս խօթելէն ետքը դուռը բացաւ և ներս մատւ, ըսելով:

— Եթէ գաղանի խօսք մը ունիք՝ դուրս ելլեմ:

— Ոչ, պատասխանեց Մանուկ աղան, թաղականի վրայ կը խօսէինք:

— Գեանին տակը անցնի այն թաղականի խըն-

գիրն, ըստ տիկին ծուշան և ծանրութեամբ գլուխըն Արքասով աղային ծոելով դնաց բազմոցի մը վրայ նստելու:

— Բարի եկաք, տիկին, ըստ Մանուկ աղան:

— Բարի տեսանք: Դուք ալ բարի էք եկեր, Արքասով աղա, քաղաքնիս ի՞նչպէս դատաք նայինք, հաւնեցաք:

— Հաւնեցայ, շատ աղեկ է:

— Այս կողմերը ի՞նչ գործ ունիք, հարցուց Մանուկ աղա, դարձեալ նշանառուք մը կայ, ի՞նչ կայ:

— Հրամմեր էք, սա դիմացի տունը եկայ և անդամ մըն ալ ձեզի հանդիպիմ ըսի: Սա անթառամին աղջիկը դիմացինիդ աղուն կ'ուզեմ շինել, գործը լմացածի պէս էր, բայց տիկին Մարթան իւր աղջիկը տալ սւզելուն համար Անթառամին աղջկանը վրայօք խել մը խօսքեր ըստ է մանչուն, ան ալ քիչ մը պաղած է: Այսօր եկայ որ զինքը տեսնեմ և համոզեմ, բայց դուրս ելած ըլլալուն՝ վաղը պիտի դամ:

— Աղջիկ մըն ալ մեր Արքասով աղային չդըտնա՞ս:

Արքասով աղան ժպտեցաւ:

— Տիկինն արդէն իմացուց ինծի վարը թէ Արքասով աղան կարգուած չէ և ես ալ չխակը անոր համար վեր ելայ, պատասխանեց տիկին ծուշանը ձերմակ թաշկինակովն քիթը սրբելով:

— Անանգ միաք մը ունիմ, ըստ Արքասով աղան տեղէն ելնելով և սիկար մը հրամցնելով տիկին ծուշանին:

— Եթէ անանկ միաք մը ունիք՝ քեզի ալ կըրնանք ձեր ուղածին պէս աղջիկ մը դանել, քսան ապարէն ի վեր այս գործին մէջն եմ, ամենքն կը

ձանչնամ։ Հրամանքնիդ ի՞նչպէս աղջիկ կ'ուզէք,
անդամ մըն ալ հասկնալու եմ ես։

Մանուկ աղան աեսնելով որ Արփսողոմ աղան
տիկին Շուշանի հետ խօսքի բռնուեցաւ, գուրս եւլու
ուրիշ անդամի պահելով թաղականի պատմութիւնը
զոր չէր կրցած աւարտել։

— Ազուոր աղջիկ մը կ'ուզեմ, պատասխանեց
Արփսողոմ ազա խնդալով։

— Գիտեմ որ աղուոր աղջիկ կ'ուզես. ուզած
աղջիկդ հարուստ ըլլալու է։

— Այո՛։

— Պարկեշտ։

— Հարկու։

— Տասնըլից տասնեւութ տարեկան։

— Ճիշտ։

— Դաշնակ զարնել գիտայ։

— Գիտնալու է։

— Աղէկ պարէ։

— Հրամմեր էք։

— Շատ լաւ. ասանկ աղջիկ մը կայ ձեռքիս
տակը, բայց այս տեսակ աղջիկները գործ չեն տես-
ներ տունը, առառունէ մինչեւ իրիկուն ծունկ
ծունկի վրայ կը դնեն և կ'երգեն, կը պարեն և
կամ բոլոր օրը կը պարաին. հիմակուընէ ըսեմ,
վերջէն ինձի պատճառ չբռնես. աղէկներն ալ կան,
բայց դանելը շատ դժուար է։ Քու ըսած աղջիկնեւ-
րուդ մէջ անանկներ ալ կան որ իրենց ուզած
մէկը կը սիրեն և շատ անդամ անոր հետ գեղ
մը կը փախչին և դուն ալ կը սպասես որ
կինդ գայ։

— Ի՞նչ կ'ըսէք։ Եթէ այնպէս է չեմ ուզեր։

— Բայց կան ալ որ վրադ կը խենդենան։

— Եթէ այսպէս է՝ կ'ուզեմ։

— Բայց կան ալ որ ամիս մը իրենց սիրածին
հետ կ'ապրին և քու անունդ բնաւ չեն տար։

— Եթէ այնպէս է, չեմ ուզեր։

— Բայց կան ալ որ վայրկեան մը քովէդ
չեն բաժնուիր։

— Եթէ այսպէս է՝ կ'ուզեմ։

— Ասոնք ըսելուս համար ինձի բան մի՛ ը-
սեր, վասնդի կան անանկներ ալ որ թող կուտան
իրենց կինը ուրիշի մը հետ սիրահարութիւն ընել
և աղջկան հօրմէն քիչ մը դրամ առնելով վաչք գո-
ցել։

— Իրա՞ւ կ'ըսէք, անանկ էրիկ մարդ կը
գտնուի՞ աշխարհիս վրայ։

— Մազէս շատ։

— Եւ այն ամսակ էրիկ մարդերու և կինե-
րու երեսը ո՞վ կը նայի։

— Ամէն մարդ. կինը կ'արդարացնեն ըսելով
թէ՛ սատանայէ խաբուած է. էրիկն ալ կը սըր-
քացնեն ըսելով թէ՛ խեղճը չգիտեր իւր կնոջ բըռ-
նած ընթացքը։

— Է հիմայ կը ձաթիմ... չեմ ուզեր չեմ ու-
զեր, թող միայ, իմ քաղաքս կը կարգուիմ։

— Բայց և այնպէս անանկներ ալ կան որ քե-
զի համար իրենց հոգին անդամ կուտան։

— Անանկ մէկն եթէ գտնեմ՝ կը կարգուիմ։

— Ես ալ անանկ մէկը պիտի գտնեմ քեզի.
իմ հարցունելս սա է որ ձեր ինչ տեսակ աղջիկ
ուզելը հասկնամ։

Ես ալ իրաւունք կ'ուտամ տիկին Շուշանին.
վասնդի ամէն օր այնպիսի ամուսնութիւններ կը
տեսնենք, որոնք մարդուս զարմանք կ'ուտան։
Ստեն մը հետաքրքրութեան համար կարգուած
մարդու մը սիրոյ կրկնատումարը գրեցի, և տարե-
գլխուն հաշուեկինը հանելով տեսայ որ այդ մար-

դը սնանկացած իր բարոյականութեան մէջ։ Բարեւ-
ըս կտրեցի իրմէ և սակայն մեծ զարմանքավ ահ-
այ որ այդ մարդը մեծ պատիւ կը գանձ ընկերու-
ափւններու մէջ և իբրեւ բարսյականի տէր անձ մը
թմէն կողմ յարդանք կը գտնէ։ Հետաքրքրութիւնու-
աւելցաւ, հաշուեկշիռ նորէն աչքէ անցուցի և դի-
տեցի որ կինն զօր ես այդ մարդուն ընկեր նըշա-
նակած էր Մայր հաշույն մէջ, դրամազլուխի կողմ
անցած է էրկանը տեսարակին մէջ։ Եթէ օր մը սի-
րոյ տոմարակալութիւն մը հրատարակիմ՝ մեծ
յուզմունք պիտի պատճառեմ հաշուագէաներու մէջ։
վասնզի ես շատ էրկի մարդիկ դիտեմ որսնք կինն
իրենց սիրոյ հաշույն մէջ ընդիանուր ծախսի կողմ
կ'անցունեն. շատերը կարասիքի հաշուոյն տակ կը
գրեն. ոմանք ընդիանուր ապրանքի կարդը կ'անցու-
նեն ոմանք վնարելի բուղբերու և ոմանք ընդու-
նելի բուղբերու հաշույն մէջ կը նշանակին։ Խիստ
քիչ են այն նախանձելի ամուսնութիւններն որոնց
մէջ կինը էրկանը ընկեր կ'արձանագրուի ոիրոյ
տեսարակին մէջ։

— Կարգուիլը շատ անոյշ բան է, յարեց սի-
րոյ միջնորդն, քեզի յարմար աղջիկ մը զամք,
ամէն օր արքայութեան մէջ ես . . .

— Ես ալ ասոր համար է որ կարգուիլ կ'ուզեմ։
— Կինդ ընաւորութեանդ չյարմարեցաւ, ա-
մէն օր գժոխքի մէջ ես, կրակներու մէջ կ'երիս։

— Ես ալ ասոր համար է որ կարգուելու կը
վախնամ։

— Նայեցէ՞ք, ձեզի բան մը ըսեմ աղա, հըրա-
մանքնիդ հարկաւ մեծ տեղէ մը աղջիկ կ'ուզէք առ-
նել, վասնզի դուք ալ մեծ մարդ մըն էք։

— Այս', այս, մեծ տեղէ կ'ուզեմ։

— Ես ալ քեզի մեծ տեղէ մը աղջիկ կը գըտ-

նեմ. բայց հրամանքնիդ ֆրանսերէն գիտէ՞ք։

— Մեծ տեղէ աղջիկ առնելու համար անպատ-
ճառ ֆրանսերէն գիտնալու է։

— Այս', վասնզի մեծ տեղի աղջիկներն ֆր-
անսերէն կը խօսին, և երբ կին մը իւր էրկանը
չդիտցած լեզուով ուրիշի մը հետ խօսի՝ տակէն նա-
խանձ կ'ելնէ։

— Ես ալ կը սորվիմ ֆրանսերէն։

— Բացի ասկից երջանկութիւնը շատ քիչ կը
գտնուի այն ամուսնութեան մէջ ուր կնիկն էրկ-
էն աւելի բան դիտէ։

— Այսպէս է, ես ալ այն կարծիքէն եմ։

— Հրամանքնիդ եւրոպական եղանակներէն
բան մը կը հասկնա՞ք։

— Ամենեւին բան մը չեմ հասկնար և մանա-
ւանդ թէ կը ձանձրանամ։

— Ի՞նչ պիտի ընես ուրեմն եթէ կինդ ժամե-
րով դաշնակի առջեւն անցնի և այդ նուագրանի
վրայ եւրոպական խաղեր զարնէ։

— Թո՛ղ չեմ տար, ես ձանձրոյթ կ'իմանամ։

— Ան հաճոյք կը զգայ։

— Կին մը ի՞նչ իրաւունք ունի իւր էրկանը
գլուխը ցաւցնելու։

— Էրիկ մը ի՞նչ իրաւունք ունի իւր կինն
զուարձութենէ զրկելու։

— Եթէ գործը մինչեւ աս տեղուանքը պիտի
գայ, չեմ կարգուիր։

— Ես կրնա՞մ սովորիլ։

— Ինչո՞ւ չէ, մանաւանդ թէ աւելի դիւրին
է քեզի դաշնակ զարնել սորվիլ քան թէ կնկանդ
գաշնակ զարնելը մոռնալը։

— Եթէ այսպէս է ատոր ալ ձամբան դաւանք
ըսել է։

— Ասոնք ըսելուս պատճառը այն է որ ես հոգիս սեւցնել չեմ ուզեր, ամէն բան առաջուց կ'ըսեմ որ վերջէն ինծի պատճառ չբռնեն: Իմ ձեռքիս տակ ամէն դասէ աղջիկ կայ: բարձր դասէն, միջին դասէն և ստորին դասէն: այս երեք դասէն ալ ծախու ապրանք ունիմ, հրամանքնիդ ձեր քսակին հետ խորհրդակցեցէք և ինծի ըսէք սա դասէն կ'ուզեմ: Յայտնի է որ բարձր դասը շատ սուզ է, միջինն նուազ սուզ և ստորինն աժան:

— Ես շատ աժան չեմ ուզեր:

— Շատ լաւ, աղջիկը ձերմա՞կ գոյն ունենայ

թէ քէչ մը թուի:

— Ձերմակ կ'ուզեմ:

— Աչքերը սե՞ւ թէ կապոյտ:

— Եկու տես որ սեւն ալ կը սիրեմ կապոյտն ալ...

Կամ մին պիտի ըլլայ կամ միւսը: վասնզի չկրնար ըլլալ անանկ աղջիկ մը որուն մէկ աչքը կապոյտ ըլլայ և միւսը սեւ:

— Կապոյտ ըլլայ թո՞զ:

— Շատ լաւ: Հասակն և մազե՞րը...

— Երկար, երկար:

— Մէջքը...

— Մէջքը բարակ ըլլայ, բայց տկար չեմ սիրեր, կ'ուզեմ որ քալած ժամանակը միսերը շարժին: Կը հաւեկնամ, այսչափ հերիք է, ճիշտ ուղածիլ պէս աղջիկ մը կայ որ շատ ալ պարկեշտ է և իրեն էրկանը համար հոգի տալ կ'երեւայ:

— Ես ալ անանկ մէկը կ'ուզեմ:

— Թերեւս վազը քու անունդ իրեն ըսելուս պէս գրադ սէր կապէ: Պատկերդ տուր որ իրեն անդամ մը ցուցեմ:

— Պատկերս վազը հանել պիտի տամ:

— Վա՞զը... վազը հանել տալու որ ըլլաք ուզեմ օրէն կ'առնէք և ութը օր սպասեն՞ք:

— Ինչո՞ւ սպասենք, վազը կ'երթանք, մե՞ծ տեղէն է աղջիկը:

— Այո՞:

— Հայրը հարս՞ւստ է:

— Շատ հարսւստ է, բայց հարսառթիւնը չը ցուցներ:

— Շատ խանութներ ունի՞:

— Քսանի չափ:

— Տո՞ւն:

— Քառասունի մօտ:

— Շատ աղէկ, վազը չէ միւս օր կ'երթանք այդ աղջիկը տեսնելու:

— Գլխուս վրայ, ցերէկին կուգամ և մէկտեղ կ'երթանք: Մնաք բարով, Արխողով աղա, սիրադ հանգիստ բանէ, ես քեզ չեմ խարիք, ուրիշներու կրակէ շապիկ հագցնողներէն չեմ: Կեցիք բարով. վազը չէ միւս օր:

Տիկին Շուշանը կը մեկնի:

Ը.

Մանուկ աղան որ վարի սենեակն էր և խանուէ կը խմէր, տիկին Շուշանին վար իջնալն տեսնելուն պէս խանուէի դաւաթն թողուց և Արխողով աղային քովը գնաց:

— Այսպէս, ըստաւ, Մելքոն աղան թեւէս քաշեց և մէկակղ ընթերցատունը մտանք: Այդ ընթերցատունը ժամանակաւ դինետուն էր, Աստուած ողորմի հոգուն, Կոմիկ աղան կը բանէր, աղէկ մարդ մըն էր. հիւանդութիւն մը եկաւ վրան, շատ բժիշկներ նայեցան, ձար մը չկրցին գտնել և խեղճ մեռաւ...

Մանուկ աղային կինը՝ լրադիր մը ի ձեռին
ներս մտաւ և լրադիրը Արփառղամ աղային տալով.

— Մեծապատիւ էֆէնտին յատկապէս բարեւ ը.
բած է ձեզի, ըստ և դուրս ելաւ:

Արփառղամ աղա աճապարանոք բացաւ լրադիրն
և կարդաց.

«Վանէն հետեւեալը կը գրեն մեզ»: Այս չէ,
վարինը կարդանք, ըստ և կարդաց:» Մեր բարեւ
կամիերէն մին Մուշէն հետեւեալը դրկած է մեզի
ի հրատարակութիւն»: Աս ալ չէ միւսը նայինք.
«Քուրիկ Տ'Օրիխան»ի մէջ հետեւեալ առղերը կը տես-
նուին.» միւս երեսը անցնինք: «Թայլիթ թղթակիցը
հետեւեալը հեռագրած է յիշեալ լրադրին»: Ասոնց
մէջ իմ անունս չկայ... սա կտորը նայինք...
«Մայրաքաղաքիս ազնուական դասուն անդամ մըն
ալ աւելցաւ այս օրերս: Երեւելի վաճառական և
բազում աղարակներու տէր, աղգասէր, լեզուագէտ,
ազնուասիրտ և վեհանձն Արփառղամ էֆէնտի որ մեր
աղգայնոց ծանօթ է, երէկ Տրապիզոնի՝ շոգենաւով
մայրաքաղաքս եկաւ և ուղղակի Բերա ելաւ Ծաղ-
իկ փողոց թիւ 2 առւնը: Արփառղամ էֆէնտիի պէս
մէկու մը մայրաքաղաքս գալն անշուշտ մեծ ուրա-
խութիւն պիտի պատճոէ մեր բարեմիս աղգայ-
նոց»: Արփառղամ աղան Մելքոն աղային դառնալով
տես, ըստ, ի՞նչ դրած է ինծի համար, և բարձր
ձայնով անդամ մըն ալ կարդաց:

— Մեծապատիւ էֆէնտին բարեւ կ'ընէ եղեր,
ըստ տիկինը նորէն ներս մանելով, բաժանորդա-
գին պիտի տաք եղեր:

— Հիմա, ըստ Արփառղամ աղան և առւաւ բա-
ժանորդագինը տիկինը որ վազելով վար իջաւ:

— Սա մարդը գէշ չի գրեր կոր հէ, հարցուց
Արփառղամ աղան:

— Այո՛, գէշ չի գրեր:

— Պատուական լրադիր մըն է:

— Աւելի պատուականը կրնայ ըլլալ:

— Տիկինը դուռը բանալով Արփառղամ աղային
նամակ մը և խոչոր ծրար մը յանձնեց ըսելով.
Մեծապատիւ էֆէնտին մասնաւոշապէս կը բարեւէ
զձեզ:

Արփառղամ աղան նամակը բացաւ և հետեւեալը
կարդաց.

«Մեծապատիւ էֆէնտի

Զեր Մեծապատուութեան մայրաքաղաքս գալն
իմանալով փութացի ձեր գալուստը շնորհաւորե-
լով լրագրէս տասն օրինակ զրկել: Բաջայոյս եմ որ
պիտի հաճիք ձեր բաժանորդութեամբը քաջա-
լերել՝ լրագիրս, որով պիտի խրախուսէք զիս որ
խմբագրական տաժանելի տապարէզին մէջ աղգին
ծառայութիւններ ընելու կոչուած եմ:

Մնամ յարդանոք

Խմբագիր—Տնօրէն

.....ԼՐԱԳՐՈՅՑ

(Սորագրութիւն)

— Տասը հատն ի՞նչ ընեմ....:

— Կշանալով կը կարդանք....:

Տիկինը նորէն ներկայացաւ և ծրարով մը
նամակ մըն առւաւ Արփառղամ աղային որ բանալով
ակսաւ կարդալ:

«Մեծապատիւ էֆէնտի,

Զեր հանրածանօթ աղգասիրութիւնը քաջալե-
րութիւն առւաւ ինձ լրագրէս տասնընինդ օրինակ
զրկել ձեզ: Բազցը է ինձ յաւսալ որ պիտի բարե-
հաճիք զանոնք ընդունիլ և պաշտպան կանգնիլ
լրագրութեան որ մեր մէջ ընթերցասիրութեան չը

տարածուելուն պատճառաւը գյրախառաբար գէշ վիշտակի մէջ կը գտնուի:

Մնամ յարդանօք
Խմբագիր-Տնօրէն
..... ԱՐԱԳՐՈՅ
(Սուրագրութիւն)

Արիսողոմ աղան նամակը ձալլելու վրայ էր տիկինը ներս մտաւ:

— Մեծապատիւ էֆէնաին օիրոյ բարեւներ կը նէ եղեր ձեզի, ըստ և նամակով մը գիրքեր ներկայացուց Արիսողոմ աղային որ նամակը բացաւ և սկսաւ կարդալ.

«Մեծապատիւ էֆէնաին

իմ մտքիս ճնունդն եղող քերթուածները հըրատարակած ըլլալով արժան դատեցի անոնցմէ քառասուն օրինակ ձեզ զրկել: Կը յուսամ որ չնորհ կ'ընէք զանոնք ընդունելու և կերպով մը քաջալերութիւն աալու ինձ որպէսզի միւս քերթուածներու ալ Քիչ օրէն հրատարակութեան տամ:

Ինդքելով որ ընդունիք իմ խորին մեծարանաց հաւասարիքը, միամ ձերդ մեծապատութեան խոնարհ ծառայ:

(Սուրագրութիւն)

Արիսողոմ աղան նամակը գոցեց և քովը դըրաւ:

Տիկինը գարձեալ ներս մտաւ:

— Մեծապատիւ էֆէնաին բարե՞ւ ըրած է դարձեալ. հարցուց Արիսողոմ աղան:

— Ոչ, բեռնակիրներէն մէկը եկած է և կը բողէքը կ'ուզէ:

Արիսողոմ աղան քսան դահեկան հանեց առւաւ:

Տիկինը գուրս ելաւ, գուռոր գոցեց:

Ընթերցատան մէկ անկիրնը քանի հադեւ:

Նստած լնարելի թաղականներու ցուցակը կը պատրաստէին ըստ Մանսուկ աղա իւր պատմութեանը թելն ձեռք առնելով: Անոնք մէր կողմէն չէին և կ'աշխատէին որ իրենց ուզած կաշառակեր մարդերը թաղական ընարեն:

— Տղուն մէկը եկաւ սա գիրքերը ձգեց գընաց, ըստ արկինը նորէն մանելով, մեծապատիւ էֆէնատին շատ բարեւ կ'ընէ եղեր և այսօր կամ վաղը պիտի գայ եղեր զձեզ տեսնելու:

Տիկինը գրքերը սեղանի մը վրայ դրաւ:

— Ի՞նչ ընեմ այսափ գիրքերը, գրավաճա՞ռ պիտի ըլլամ ես: Չեմ գիտեր, ալ անկից վերջը եթէ բերող ըլլայ մի ընդունիք, Արիսողոմ աղան հսս չէ ըսէ՛ և ճամբէ՛:

— Աս ալ չըլլար, դուն խմբագիրները չես ճանչնար, անոնց մէջ կը գտնուին այնպիսիներ որ երբ իմանան թէ իրենց ընկերներէն մէկուն լրագիրն առած ես և իրենցը չես առեր՝ վրադ կը յարձակին ու չլսուած խօսքեր կ'ընեն:

— Եթէ այնպէս է ընդունէ՛ որչափ լրագիր որ բերեն. ի՞նչ ընենք, բոնուեցանք անգամ մը. եթէ զիրք բերեն մի՛ ընդունիք:

Տիկինը գլուխը ծոելով դուրս ելաւ:

— Թէպէտ և այդ մարգիկն իրենց ուզածները թաղական ընելու կ'աշխատէին բայց իրենց մէջ ալ անմիաբանութիւն կար, ակնավաճառն իւր առաջին յաճախորդը կ'ուզէր թաղական ընարել, հացագործն կ'ուզէր թաղական ընարել այն մարդն որուն առնը օրը առաջ կուտար. գերձակն թաղական տեսնել կը փափաքէր այն երիտասարդը որուն վըրայ չարաթը երկու անդամ հագուստ կը ձեւեր և կը կարէր. համեստագործը քուէ տալ կ'ուզէր այն հարուստին, որուն մէկ երկու համէտ կը շինէր

ա արին. խմբագիրն իւր բոլսր բաժանորդները թաղական խորհրդոյ մէջ տեսնել կ'ուզէր. վաստաբանը իրեն շատ դատ յանձնողին քուէ կուտար. բըժիշկն իւր ամէնէն ծանր հիւանդին և դինեպանն ալ ամէնէն շատ օղի և դինի խմողին կ'ուզէր յանձնել թաղին գործերը: Ահա այսպէս իրենց մէջ...

Մանուկ աղան դարձեալ չկրցաւ շարունակել իւր պատմութիւնը, վասնզի ուրիշ հիւր մը ներս մանելով ընդհատեց անոր խօսքը:

Այս հիւրը մաքուր հագուած երիտասարդ մընէր, իւր կլոր և ձերմակ դէմքը շրջանակուած էր դեղինով խառն սև մօրուքէ մը որ շատ չէր վայելիր: Պատկերներ կան որ առանց շրջանակի աւելի գեղեցիկ կ'երեւան. թէպէտ և կան ալ որ գեղեցիկ երեւնալու համար շրջանակի կը կարօտին: — Եթէ բնութիւնը չարգիլէր կիներու շրջանակի մէջ անցունել իրենց դէմքերն՝ այսօր որչափ կիներ մօրուք պիտի ունենային: — Այս երիտասարդը ներս մանելուն պէս հանեց իւր սև և երկար գըլխարկն և բարեւեց սենեակին մէջ դանուող երկու բարեկամները:

Մանուկ աղան անմիջապէս դուրս ելաւ բարկութեամբ մընալով.

— Այս տարիքն եկած եմ և սասանկ բան գըլուխս եկած չէր. թո՛ղ չեն տար որ երկու խօսք ընեմ, հազիւ թէ բերանս կը բանամ, մէկը կու գայ, կըսկսի խօսիլ և իմ խօսքս բերնիս մէջ կը մնայ:

— Արիսողոմն աղան հրամանքնի՞դ էք, հարցուց հիւրն բազմոցին վրայ նստելէն ետքը:

— Այո՛, ես եմ:

— Ենորհակալ եմ որ Արիսողոմ աղան գուքէք. ձեր գալուստը լրագրի մէջ կարդացի և շատ ուշախացայ, որ ազգերնուս մէջ ձեզի պէս ազնիւ սիրա-

կրող ազգասէրներ պակաս չեն, վասնզի այն ազգը որ ազգասէր չունի իւր մէջ՝ ազգ չէ:

— Այս:

— Փոխագարձաբար այն ազգասէրն ալ որ ազգ չունի՝ ազգասէր չէ:

— Ծիտակ է:

— Այս երկուքն իրաբու հետ այնպիսի սերակապակցութիւն մը ունին որ իրարմէ բաժնելուդ պէս երկուքն ալ կը կորսուին:

— Այնպէս է:

— Ազգ մը որ իւր աշխատաւորները չքաջալեւ բեր, աւելցուց հիւրն միշտ ծանր և լրջագոյն եղանակաւ մը, ազգերու կարդ անցնելու բնաւ իրաւունք չունի:

— Ծատ աղեկ կը խօսիք:

— Եւ երբ աշխատաւոր մը վարձքը չ'ընդունիր իւր ազգէն, բնականաբար կը վհատի և երբեմն կը խօսիի երթաւ ինքզինք ծովը նետել:

— Աս աղայութիւն է:

— Եերեցէ՛ք, Արիսողոմ աղա, եթէ մեր այս տուազին ակսութեանը քիչ մը համարձակ կը խօսիմ ձեզի հետ:

— Հոգ չէ:

— Ծառադ վեց տարի եւրոպա մնացած եմ և բժշկութիւն սորված եմ:

— Ադէկ արուեստ:

— Գիշերները քունս ծախելով՝ կարդացած ու գրած եմ սրպէս զի քաղաքս դառնամ և ազգիս ծառայութիւն ընեմ:

— Մարդ ալ իւր ազգին ծառայութիւն ընելու է:

— Երկու տարի է որ հսու կը դանուիմ և մինչեւ այսօր հազիւ չսրո հիւանդ նայած եմ, հասկը-

ցիր թէ ի՞նչպէս կը քաջալերուին հոս բժիշկները:

— Յաւալի բան... այս տեղացիները հիւանդը ըլլալու սովորութիւն չունի՞ն:

— Ունին, բայց հոս հիւանդները ազգային զգացում չունին, Հայաստանի վրայ գաղափար չունին:

— Ի՞նչ կ'ըսէք:

— Այս՝ երբ հայ մը հիւանդ ըլլայ՝ օտար ազգէ բժիշկ մը կը բերէ իւր տունը առանց գիտնալու թէ հայու ցաւն հայը կարող է միայն բժշկել, առանց համոզուելու թէ օտարը չէ կարող հայու ցաւուն դարման ըլլալ: Այսօրուան օրս երկու հազարէն աւելի հայ բժիշկ կայ, ասոնց մէջէն հինգ վեց հատը, մանաւանդ երկու երեք հատը պատուական կեանք կ'անցունէ և անդին մնացածը ամէն օր բերանը բաց կը սպասէ որ հիւանդ մը ներկայանայ իրեն և ստակ առնէ:

— Գէշ վիճակ:

— Ի՞նչ ընեն ազգային բժիշկներն երբ ազգային հիւանդներն օտարներու կը դիմեն... ո՛հ, օտարասիրութիւն, գոչեց բժիշկն աչերն երկինք վերցնելով, ե՞րբ պիտի երթաս մեր քովէն:

— Օտարասիրութիւնը աղէկ բան չէ:

— Մանաւանդ թէ բժիշկները քաջալերելու չափ հիւանդութիւն ալ չկայ մեր ազգին մէջ. և այն ազգին մէջ որ հիւանդութիւնը տարածուած չէ՝ պարապ բան է եւրոպայի բժիշկներուն չափ ձարտար բժիշկներ յուսալ, ինչպէս նաեւ այն ազգն որուն մէջ ընթերցասիրութիւնն տարածուած չէ իրաւունք չունի տալանդաւոր և հանձարեղ հեղինակներ ունենալու. ատաղանդն և հանձարն առանց քաջալերութեան կը մեռնին:

— Շատ իրաւունք ունիք:

— Զէք կարող երեւակայել, Աբխազոմ աղա, թէ սրչափ յաւահատած եմ. հազար անգամ զղջացած եմ. երկու հազար անգամ անէծք կարդացած եմ բժիշկ ըլլալուս համար, ուր էր թէ բժիշկ ըլլալուս անդ հիւանդութիւնը բժշկութենէն աղէկէ, վասնզի տգիտութիւնն գիտութենէն աւելի կը քաջալերուի... թեթեւութիւնը ծանրութենէն աւելի յարգ կը գանէ, մոլիներն առաքինիներէն աւելի պատիւ կը վայելեն. ձմարիտ Աստուած, ուխտ ըրած եմ որ եթէ օր մը երեւելի ազգայիններէն հիւանդ մը նայիմ՝ անոր անունը լրագիրներու մէջ բարձրացունեմ:

Այս խօսքին վրայ Աբխազոմ աղա արթնցաւ, տյախնքն փառասիրութիւնն արթնցաւ: Ի՞նչ անուշ բան է թերութիւններ հաւաքել միամիտ մարդերու վրայէն: Խորածանկներն երբեմն վարպետութեամբ այնքան կը կեղծեն իրենց թերութիւններն որ անոնց հաւաքելները կը չուարեցնեն. վասնզի անոնք երբեմն միամիտ և երբեմն խորածանկ կը ձեւանան, ժամ մը տգէտ, ժամ մը գիտուն, մերթ անաչառ, մերթ աչառու, մերթ կեղծաւոր, մերթ անկեղծ, և երբ ազգային նշանաւոր, հանձարեղ և հերանոյշ Ծերենցը ասոնցմէ մին նկարագրելով անբնական անձ մը կը ներկայացնէ՝ ամէն կողմէ կը բանսարկուի թէ Ծերենցը տակաւին Մանուկենց է անձեր ստեղծելու արհեստին մէջ, թէ միեւնոյն անձին վըրայ Աղամին և Նեռն, սատանան և հրեշտակն, Զոյցին և Հոմերոսն, արականն և իգականն միանգամացն կը ներկայացնէ: Ի՞նչ յանցանք ունի ներմակերես Ծերենցն երբ իւր ներկայացնելիք անձերն խորածանկ են: — Ներեցէք, Աբխազոմ աղա և տէք բժիշկ, եթէ ձեր խօսակցութիւնն ընդմիջեցի. ի բնէ

քիչ մը անհամբեր եմ. երբ խօսքին կարգը դայ
չեմ կարող ինքզինքս բռնել, որչափ ալ այս բնաւու-
րութեանս պատիժը կրած ըլլամ և կրեմ—: Այս՝
Ծերենցն կը ներկայացնէ անձերն ոչ թէ ինչպէս որ
են, այլ ինչպէս որ կ'երեւին. Ծերենցն այս մասին
որչափ ալ երկնցնէ իր մազերն՝ իրաւունք ունի,
վասնզի ունինք հեղինակներ որոնք Ծերենցն աւե-
լի երկար մաղ ունին և կը ներկայացնեն իրենց ան-
ձերը ոչ թէ ինչպէս որ են, այլ ինչպէս որ կ'ուզեն-
իրենք որ ըլլան անոնք: Ասոր համար է որ կին-
հեղինակներն երբ Հայկ կամ Վարդան կամ Արտա-
շու ներկայացնել ուզեն՝ Վիքթօք Հիւկօյի խօսքերը
կամ Մոլթքէի կարծիքները կը կնին անոնց բերնին
մէջ: Ասոնք կը կարծեն թէ երբ Ադամը իւր ժամա-
նակին յատուկ պարզութեանը մէջ ներկայացնեն
կը կորսնցնեն իրենց տաղանդը, եթէ ունին, կամ
կը վնասեն իրենց հանձարին զոր ունենալ կը կար-
ծեն, կամ, վերջապէս կը զրկուին այն համբաւէն
զոր վաստկի կ'երազեն: Ո՞վ ըսած է այս ոզբեր-
գակներուն թէ աւելի գժուար է մէկուն պատկերն
ճշտութեամբ նկարելն քան թէ երեւակայութեամբ
անլնական պատկեր մը գծելն, ո՞վ պառացած է ա-
սոնց ականջն ի վար թէ նկարիչ մը պատկերներ
ստեղծելու սկսելէ առաջ՝ պատկերներ ընդօրինակե-
լու է:— Ոչ ոք: Եւ ո՞վ կը յանդգնի այս փափուկ
ժամանակին մէջ ուրիշի մը զործն անաչափաբար
քննադատելու: Մեր քննադատները, քիչ բացառու-
թեամբ, ակնոց ակնոցի վրայ կը դնեն զործի մը
մէջ գեղեցիկ կտորներ վնասելու համար, և ոչ թէ
տեսնելու համար, վասնզի տեսնուած բանը չփնտուիր:
Ասոնք բնաւ տարբերութիւն չունին գրաքննիչնե-
րէն որոնք ոււէ հրատարակութեան մը մէջ միայն

ագեղ կաշրներ կը փնտուին: Զեմ աեսած քննադատ
մը որ ագեղ հրատարակութեան մը կոկորդէն բըռ-
նէ, սղմէ և սպանննէ զայն. սպանննելու չէ, դործ
մը գեղեցիկացնելու աշխատելու է կ'ըսեն, անոր
գեղեցիկ կողմերը ցոյց տալով միշտ և ագեղ կէտերը
հեռուանց ցցունելով խիստ քիչ անգամ: Ո՛չ, պա-
րոն քննադատներ, ո՛չ, իրաւունք չունիք, սպան-
նեցէ՛ք ագեղ գործերն և վասահ եղէք որ պիտի գե-
ղեցկանան անոնք: Մարդեր կան որ կը գեղեցկա-
նան երբ մեռնին: Ես որ այսափ խստութեամբ կը
խօսիմ ուրիներու երկերու վրայօք՝ զը կարծէք թէ
քաղցրութեամբ կը վարուիմ մուրացկաններուս ան-
ձերուն հետ՝ որոնց բերնէն ելած խօսքերն միայն
բառ առ բառ կը գրեմ հոս, տառնց իմ կողմէս կէտ
մը աւելցնելու յանդգնութիւնը տնենալու: Բնաւ
երբէք, մանաւանդ թէ կ'զգամ որ իմ անձերս ալ
ունին շատ թերութիւններ զորս օր մը պիտի հար-
ուածեմ: Նոյն իսկ մեծ թերութիւն մըն է որ պատ-
միչ մը իւր պատմութեան թելը կարէ և իւր ըն-
թերցողներն երկու ժամ խնդիրէն դուրս խօսքերով
զբաղեցնէ: Բայց ի՞նչ ընեմ, այս թերութիւնս իմ
տառելութիւնս է: վասնզի այս թերութեանս շը-
նորհիւ է որ կրցած եմ քանի մը ընթերցողներու
աէր ըլլալ, թերութիւն մը որ թերութիւններ ուղ-
ղելու պաշտօնն ունի: Այսափ բացաբռութիւն ալ
թերութեանս համար: Դառնանք ուրեմն մեր պատ-
մութեան:

Սբիսողմ աղան ինչպէս ըսինք, ականջները
տնկեց երբ իմայտ որ բժիշկն եթէ հիւանդ մը
գանէ անոր անունն ըրագիրներու մէջ պիտի հըրա-
տարակէ, ուստի անմիջապէս տկարութիւն ունենալ
աւզեց:

— Աղէկ եղաւ որ, ըսաւ բժշկին, այսօր հոս

եկաք, վասնզի քանի մը օրէ ի վեր վրաս գէշութիւն
մը կամ:

- ի՞նչ կը զգաք, հարցուց բժիշկը:
- գէշութիւն մը կը զգամ:
- Ո՞ր կողմդ:
- Ո՞ր կողմս:
- Այս':
- Ամէն կողմս:
- Ախորժակդ ի՞նչպէս է:
- Աղէկ է:
- Կերածդ շուտ կը մարսիս:
- Կը մարսեմ:
- Գիշերները հանդիսա կը քնանա՞ս:
- Շատ հանդիսա, բայց վրաս գէշութիւն մը

կը զգամ:

- Գլուխդ երբեմն կը ցաւի՞:
- Այս':
- Վրադ սանկ թուլութեան պէս բան մը
- Ճիշտ:
- Երբեմն դողալ մը սանկ
- Այս' այս', դողալ մը սանկ (մեկուսի)

կեանքիս մէջ դողացած չունիմ:

- Դողալէն վերջը տաքութիւն մը
- Տաքութիւն մը:
- Տաքութիւնէն վերջը քրաինք մը
- Քրաինք մը:
- Առաւները լեզուիդ վրայ լեզիութիւն մը:
- Այս', լեզուիս վրայ լեզիութիւն մը:
- Հասկցայ, բան մը չէ, կ'անցնի, ինքինքդ
մուցուցած ես:

— Ինձի ալ այնպէս կուգայ որ ինքինքս մը-
մուցուցած եմ:

— Շատ բժիշկներ կան որ այս հիւանդութիւ-

նը չեն հասկնար, սխալ դեղեր կուտան ուրիշ հիւ-
անդութիւն կը հրաւիրեն:

— Ուրախ եմ որ դուք աղէկ հասկցաք, դեղ
մը տուէք որ շուտ մը անցնի:

Բժիշկը ծոցէն հանեց թերակալը կամ սետրնը
— երկուքն որն որ ուղէք՝ կրնաք գործածել, ա-
զատ էք նաև ոչ մին գործածելու և ոչ միւսն—
թուղթ մը քաշեց անոր մէջէն և մատիտով քանի
մը բառ գծելէն ետքը թուղթին վրայ՝ Արփսողոյ
աղային տուաւ զայն ըսէլով.

— Ասիկա կարմիր ջուր մըն է, ժամը մէկ
անգամ կը խմէք անկից խահուէի գաւաթով. թէ-
պէտ և քիչ մը լեղի է բայց աղդոււ է:

— Շատ աղէկ:

— Մոոցայ հարցնելու թէ բնութիւնդ ի՞նչպէս
է:

— Բնութիւնս . . . շիտակը խարդախ մարդե-
րէն չեմ ախորժիր, ամէնուն հետ աղէկ կը վար-
ուիմ

— Ամէն առառ դուրս կելլա՞ք, հարցուց բը-
ժիշկն խօսքին ձեւը փոխելու ստիպուելով:

— Հոս գալէս ի վեր երկու առառ դուրս չկըր-
ցի ելնել:

— Իրա՞ւ կ'ըսէք:

— Սուտ խօսելու ի՞նչ պարտք ունիմ:

— Ուրեմն դեղ մըն ալ գրեմ:

Բժիշկը դեղագիր մըն ալ գրեց և Արփսողոյ
աղային առւաւ:

— Նախ այս դեղը պիտի առնես, ըսաւ բժիշ-
կը, որպէսզի վաղը առառ դուրս ելլես և վերջը
միւս ջուրը պիտի խմես:

— Եթէ այս դեղէն խմեմ՝ վաղը առառ ան-
պատճառ դուրս կրնա՞մ ելլել:

— Այս', անպատճառ:

— Աս ի՞նչ ազուսր դեղ է... հազար թէ որ
դարձեալ հիւրեր դան և զիս խօսքի բոնեն:
— Հիւրերդ ի՞նչ վնաս ունին:
— Ի՞նչպէս վնաս չունին, երկու առառւ է որ
դուրս ենել կ'ուզեմ և թաղ չեն տար, կու դան եր-
կու ժամ գլււխ կը ցաւցանեն: Բայց վաղը առառ-
անպատճառ պիտի ելլեմ, վասնզի պատկերս քաշել
պիտի տամ:
Բժիշկը դարձեալ հարցման ձեւը փսխեց հար-
ցընելով:
— Փորդ ի՞նչպէս է:
— Ամէնուն փորին պէս փոր է:
— Պօինդ է:
— Ո՞վ գիտէ... իրաւ որ օր մը օրանց հետա-
քրքրութիւն ունեցած չեմ հասկնելու համար թէ
պի՞նդ է թէ ոչ, ս՞վ պիտի նայի անանկ բաներու:
— Արիսովամ աղա, ամէն օր մեծ գործ կ'ը-
նե՞ս, հարցուց վերջապէս բժիշկը ձարը հատնելով:
— Այս, այս, ամէն օր մեծ գործ կը տեսնեմ:
Ո՞վ մեծագործութիւն...
— Շտա լաւ, պատասխանեց բժիշկն, ես վաղը
առառւ նորէն կու դամ ձեզ տեսնելու:
— Կ'ըլլոյ:
— Մնաք բարով, հոգ մի ընէք, ձեր տկարու-
թիւնը քանի մը դեղով կ'անցնի:
— Շնորհակալ եմ:
Բժիշկն գլխարկն առնելով մեկնելու վրայ էր
երբ Արիսովամ աղան: բաւ անսր.
— Գրելիքդ չմոռնաս:
Բժիշկը խորհիլ սկսաւ թէ ինչ էր գրելիքը և
չուտ մը յիշելով պատասխանեց.
— Այս', այս', միտքս է, լրագրի մը մէջ
պիտի գրեմ ձեր անունը: Մնաք բարով:

— Երթաք բարով:
Բժիշկը մեկնելուն պէս Արիսովամ աղան ըստ
ինքնիրեն.
— Վախցայ որ բժիշկը կ'ըսէ թէ «դուն հի-
ւանդութիւն մը չունիս» և շինծու հիւանդ ըլլալս
յայտնի կ'ըլլայ: բայց պարապ աեղը վախցած եմ,
վասնզի անիկա ոչ թէ միայն չհասկցաւ հիւանդ
չըլլալս, այլ ըստ նաև թէ քանի մը դեղով կ'անցնի
հիւանդութիւնդ: ին, պարսն բժշկներ, դուք բան
մըն ալ չէք հասկնար, և մամբ իրաւունք ունէք
բնաւ բժիշկ չկանչելու: Ես բան մը չունիմ տէր բը-
ժիշկ, շարունակից, անունս լրագրի մէջ գրել տա-
լու համար հիւանդ եղայ...
Այս վերջին խոստավանութիւնը քիչ մը խեն-
դութիւն երեւցաւ Արիսովամ աղային որ խղճը-
տանքը հանդարակեցնելու համար ըստ ինքնիրեն.
— Լոոզն ալ պիտի կարծէ թէ հիւանդ չեմ և
շինծու հիւանդ եղած եմ. քանի մը օրէ ի վեր է որ
անհանգստութիւն մը ունիմ, ոչ կրնամ ուտել և ոչ
քնանալ, հազ մըն ալ ունիմ որ գիշերները չքնա-
ցըներ զիս:
Ո՞վ փառասիրութիւն, իրա՞ւ է որ գուն եր-
բեմն խելացիները խենդ և խենդերը խելացի կը-
նեմ...
❖.

Արիսովամ աղան բերանը քիչ մը բան դնելու
համար վար իջաւ. բայց երբ ահսաւ որ քանի մը
հոգիներ նոր եկած էին զինքը տեսնելու՝ անոնց
ձեռքէն խալսելու համար առնեն դուրս ելաւ. եթէ
այդպէս չըներ և ամէն այցելութիւններն ընդունե-
լու ըլլար՝ ժամանակ պիտի չունենար ոչ ուտելու
ոչ քնանալու և ոչ ալ արթննալու:

Աբիսողոմ աղան լեռ Պոլիս չեկած, իմացած էր
թէ Բերա գաղիական ճաշարան մը կար և երեւելի
յարդերը հոն կ'երթային ճաշելու, ուստի տունէն
դժւրս ենելուն պէս միտքը դրաւ յիշեալ ճաշարա-
նըն երթալու:

Հազիւ թէ քանի մը քայլ առաւ՝ յիսուն տա-
րեկան նիշար և պատուծ հազուստներով մէկը դէ-
մըն ելաւ.

— Կարծեմ Աբիսողոմ աղան հրամանքնիդ էք:

— Այս՛, ես եմ:

— Քանի մը վայրկեան ձեզի հետ տեսնուիլ
կը փափաքէի:

— Էյ:

— Նոր եղանակով դասագիրք հանած եմ, ա-
նոնցմէ հարիւրի չափ ձեզի տալ կ'ուզէի. ներկցէ՛ք
համարձակութեանս. ի՞նչ ընենք, այս համարձա-
կութիւնը մեզի տուողն ազդն է որ չքաջալերեր իւր
դասատուներն և թող կուտայ որ անոնք խեղճ
վիճակի մէջ ապրին. ա՛հ, եթէ այսօր դասագիր-
քերը չկարենամ քշել՝ տպարանապետը բանաը պիտի
դնէ զիս. դեռ տպագրութեան և թուղթի ծախքը
վճարած չեմ իրեն և ամէն օր կ'սպանայ ինծի:

— Դասագիրքն ի՞նչ պիտի ընեմ ես:

— Զեր բարեկամներուն կուտաք. կ'աղաչեմ,
ինդիրքս մի՛ մերժէք, վեցական դահեկանէն վեց
հարիւր դահեկան կ'ընէ և այդ գումարն ալ ձեզի
համար մեծ բան մը չէ:

— Գաղիական ճաշարանը ո՞ր կողմէն կ'երթը-
ուի:

— Ասկից կ'երթցուի, սիրով կ'առաջնորդեմ
ձեզի հոն:

— Ենորհակալ կ'ըլլամ:

— Կը քալենք և կը խօսինք: Դասատուներն

ազգին ծառաները համարուած են և ամէնուն երե-
սէն ինկած, մինչդեռ անոնք ազգին տէրերն են:
Ազգ մը անոնցմով առաջ կ'երթայ, բայց ի՞նչ օ-
գուտ, մեր մէջ քաջալերութիւն չկայ: Դասատու
մը աշօր դպրոցի մը պաշտօնի կը կոչուի և քանի
մը օրէն կը ճամբառի, վասնզի հոգաբարձուներէն
մէկուն գետնէն բարեւ չէ տուեր: Եթէ քանի մը
ամիս պաշտօն վարէ և ամսական ուզէ՝ կը վռնաը-
ւի ամսական ուզած ըլլալուն համար, և միշտ
սա խօսքերը կը լսէ. «Ազգին սատակովը կ'ապրիք,
ազգին վրայ բեռ եղած էք, գացէ՛ք, կորսուեցէ՛ք»:
Ահ, Աբիսողոմ աղան, չէք գիտեր թէ ինչ կը քաշեն
Պոլսոյ դասատուները. խեղձութեան զէնիթը բար-
ձրացած են. չեմ կարծեր որ ասոնք իմանալէն ետ-
քը դասագիրքէս հարիւր օրինակ չառնէք:

— Զէ, մօտեցանք: Միայն դասատուները չեն
որ այդ վիճակին մէջ են. խմբագիրները, հեղինակ-
ները, տպարանապետները, գրավաճառներն, վեր-
ջապէս անոնք որ գիրքով կ'զբաղին՝ թշուառու-
թեամբ կը դրազին: Յառաջդիմութիւն կը պոռանք
և ետ ետ կ'երթանք և լոյս կը պոռանք և դէպի
խաւար կ'երթանք, աջ կը գոչենք և դէպի ձախ
կ'երթանք. տպագայ կ'ըսենք և դէպի անցեալ կը
վազենք. ոհ, մեծ մեծ խօսքեր, իսկ մեծ գործ...:

Ոհ մեծագործութիւն...:

Ոհ մեծախօսութիւն...:

— Կերակուրները ի՞նչպէս են այն ճաշարա-
նին:

— Աղէկ են: Հարիւր դասագիրքը տունը դրկե՞մ
թէ...:

— Պատասխանը քանի մը օրէն կու տամ...:

Երկու բանակիցներն խօսելով հասան ճաշարա-
նին առջեւ:

— Հրամմեցէ՞ք, մտէ՞ք, Արիսողոմ աղա: Արիսողոմ աղա կը մանէ ճաշարան և չորս կողմը հայելիներէ ուրիշ բան չահանելով.

— Սխալ եկանք, կ'ըսէ, հսու հայելի կը ծախեն:

— Զէ, չէ:

Երկու բարեկամներն կը նստին սեղանի մը առջեւ:

Մանչուկը կը բերէ կերակուրներու ցուցակը:

Արիսողոմ աղա թուղթը կ'առնէ, վրան կը նայի, կը դարձունէ, ետեւի կողմն ալ կը նայի և սեղանին վրայ կը դնէ:

— Ի՞նչ պիտի ուտէք, կը հարցունէ գասաւուն:

— Միսով կերակուր կ'ուտեմ ես:

— Դաստանն մանչուկը կը կանչէ և կերակուր կ'ապսպրէ թէ Արիսողոմ աղային համար և թէ իրեն համար:

— Ահա այսպէս, Արիսողոմ աղա, դաստաններուն այս վիճակը լսելով չե՞ս ցուեիր:

— Չցաւիլն ալ խօ՞սք է:

— Կը վայլէ՞ ազգի մը այսպէս մուրացկանի պէս ապրեցնել իւր վարժապետները:

— Չը վայլեր:

— Եթէ կ'ուղէք՝ գիրքերն այս տունը ձբգեմ:

— Հիմակունիմակ թո՞ղ մնայ, ուրիշ օր մը կը խօսինք ատոր վրայ

Մանչուկը կերակուրները կը բերէ. Արիսողոմ աղան երեսը խաչակնքելով երկու պատառ կ'ընէ և կը կլլէ իրեն բերուած խորոված միսը. ետքը բարեկամին դառնալով կ'ըսէ.

— Կառը մը միսով մարդ կը կշտանա՞յ, գրուցէ սա անպիտանին որ քիչ մը շտակել բերէ:

Մանչուկը կը կանչուի և փիլավ կ'ապսպրուի: Այս միջացին միջանասուկ և գիրուկ երիտասարդ մը կը մանէ ճաշարան ի ձեռին ունենալով ծրաբ մը և ուղղակի Արիսողոմ աղային առջեւ կու գայ:

— Կարծեմ, կ'ըսէ, Արիսողոմ աղան ահանելու պատիւը կը վայելեմ:

Արիսողոմ բան մը չհասկնալով նոր եկաղին երիսը կը նայի անբարբառ: Քովի բարեկամն ալ ձայն չհաներ:

— Կարծեմ, կը կրկնէ, այն մեծ մարդուն առջեւը գտնուելու բարեբատութիւնն ունիմ որ մայրաքաղաքս եկած է մեկենաս անուանուելու համար:

Արիսողոմ աղան որ այս ձնւերուն աեղեակ չէրդդալը կ'առնէ և կը սկսի ուտել բիլավն զոր նոր բերած էր մանչուկը: Մեղանակիցն ալ նոր գրադէտի մը գոլն իր գործոյն արգելք համարելով՝ չուզեր անոր պատասխանել:

— Կարծեմ, կ'երեքինէ, այդ աղնիւ անձին քովը գտնուելու բախտը կը վայելեմ որուն անունը քանի մը օր առաջ լրագրի մը մէջ կարդացի:

Արիսողոմ աղան որ բիլավով կը զբաղէր՝ դարձեալ պատասխան չտար և նոր եկողը կ'ստիպուի պարզել իւր խօսքն ըսելով.

— Արիսողոմ աղան հրամանքնիդ էք կ'արծեմ:

— Այս, ես եմ:

Նոր եկողն աթոռ մը կ'առնէ և կը նստի:

Մանչուկը կու գայ հարցնելու վերջէն եկողին թէ ի՞նչ կ'ուղէ ուտել:

— Եղի մէջ հաւկիթ, կը պատասխանէ ձեռքի ծրաբը քովի աթոռին վրայ դնելով:

Արիսողոմ աղան բիլալն ալ կը հացունէ և
կառկարայի ձուկ կ'ապսպրէ:

— Ես, Արիսողոմ աղա, կ'ըսէ նորեկը, մեծ
պատիւ, մեծ բախտ կը համարիմ ինծի ձեզի պէս
բարեսիրտ անձի մը սեղանակից գանուիլս: Մառադ
ազգային գրագէտներուն ամենայետինն եմ, գրե-
թէ քիչ մըն ալ բանաստեղծ եմ, քանի մը ողբեր-
գութիւններ գրած եմ և կ'ուզեմ որ անոնց իւրա-
քանչիւրէն քսանական օրինակ ձեզի նուէր ը-
նեմ . . . :

— Օ՛օօ, Արիսողոմ աղա, կ'ըսէ երբորդ մը,
ինդում երեսով Արիսողոմ աղային մօտենալով,
բարի եկած էք:

— Բարի տեսանք:

— Ես ազգային փաստաբաններէն եմ և ձեր
գալն լսելով փութացի իմ խոնարհ յարգանքներս
ձեզի մասուցանել և միանգամայն յայտնել թէ ձեր
քատերն ինծի յանձնէք:

— Ես դատ չունիմ:

— Եթէ դատ չունիք՝ ինչո՞ւ ուրեմն եկաք
կոս:

— Ուրիշ գործի մը համար:

— Անկարելի է որ ձեզի պէս մարդ մը դատ
չունենայ, ոչ միայն անկարելի է այլ անպատճու-
թիւն ալ է. ձեզի պէս մէկը հարիւրներով դա-
տեր ունենալու է և ձեր չնորհիւ քանի մը փաս-
տաբաններ ապրելու են: Եթէ դուք դատ չունե-
նաք՝ անդին աղքա՞տը պիտի ունենայ:

— Մէկու մը հետ դատ չունիմ:

— Զարմանալի բան, մէկու մը դէմ դատ բա-
նալու ալ միտք չունիք:

— Բնաւ դատ բանալու պատճառ մը չունիմ:

— Դատ բանալի համար անպատճառ պատճառ

մը ունենալու է. մէկու մը դէմ դատ կը բանաք
կը լիննայ կ'երթայ:

— Ե, ի՞նչ կը շահիմ:

— Դուն չես շահիր բայց փաստաբանող կը շա-
հի, քեզի համար ազօթք կ'ընէ: Մեծ մարդերն հի-
մա այդպէս կ'ընեն. փաստաբաններն ապրեցնելու
համար իրենց դէմն ելլողներուն դէմ պատույ դատ
կը բանան:

— Ես անանկ խայտառակութիւններ չեմ սի-
րեք:

— Ես կտաակ ըրի, Արիսողոմ աղա, բայց կա-
տակը մէկի դնենք և լրջօրէն խօսինք, ըստ
փաստաբանը ծանր կերպարանք մը առնելու. լր-
սեցի որ չոգենաւուն մէջ մէկու մը հետ քիչ մը ա-
ռեր տուեր էք և այն մէկը ձեր պատոյն դէմ ծանր
խօսքեր ըրեր է:

— Ամենեւին:

— Թէ դուք ալ անոր քանի մը խօսք ըրեր
էք . . .

— Բնաւ:

— Թէ վերջը ծեծկը ուռարքի ելեր էք . . .

— Անանկ բան մը բնաւ եղած չէ:

— Թէ դուք անոր գլխուն զարկեր էք . . .

— Սուա է:

— Թէ անկիա ալ ձեզի տպատկ մը տուեր է . . .

— Բոլորովին սուա:

— Թէ երրորդ մը մէջ մտեր է . . .

— Երկրորդ չկայ որ երրորդ ըլլայ:

— Թէ քու թեւէդ քաշեր է . . .

— Սիալ:

— Թէ անոր ալ ձեռքը բոներ է:

— Սուա . . .

— Թէ ասանկով զձեզ բաժներ է . . .

— Բնաւ տեղը չկայ:

— Թէ դուք այս բաժանումէն գոհ չըլլալով դատ
բանալ ուզեր էք:
— Որչափ սուտ:
— Թէ վարպետ փաստաբան մը փնտուր էք...
— Ամէնն ալ սուտ:
— Թէ զիս կանչել տալ ուզեր էք...
— Ամէնեւին:
— Որպէսզի ձեր դատը պաշտպանեմ. և ես տլ
ասոր համար եկայ:
— Ատանկ բան մը չկայ:

Այս խօսակցութեան միջոցին երկու երեք հու-
գի եւս կու գան ամէնն ալ Արիսողամ աղային կամ
գիրք նուփրելու կամ լրագրի մը բաժանորդ գը-
րելու դիատորութեամբ և այս ամէնը պատուա-
կան ճաշ մըն ալ կ'ընեն իրենց առաջարկութիւն-
ները հերկայացնելով:

Արիսողամ աղան հազար անէծք կարդալով
ճաշարանն եկոծ ըլլալուն վրայ՝ մանչուկը կը
կանչէ և հաշիւը կ'ուզէ:

Մանչուկը անմիջապէս կը բերէ հաշիւն որու-
գումարն էր քառասուն ֆրանք զսր տաճկերէն գը-
րամի կը թարգմանեն և կ'ըսեն Արիսողամ աղային
հարիւր եօթանասուն և վեց դահեկա՞ն.

— Հարիւր եօթանասուն և վեց դահեկա՞ն...
ես այնչափ բան չկերայ:

— Այս, դուք չկերաք, բայց ձեզի եկող հիւ-
րերն ալ կերան, ըստ փաստաբանն որու կը վերա-
բերէք այս դատին պաշտպանութիւնը:

— Իրաւ որ մեծ պղափկութիւն եղաւ որ Արի-
սողամ աղան վճարէ մեր ձաշը. ըստ մին:

— Այս', ես ալ շատ ամօթով մնացի, մեր
պարտականութիւնն էր անոր կերակուր հրամցնել
կրկնեց երկրորդ մը:

— Ներեցէք մեր անքաղաքավարութեանն, ը-
ստ չորրորդ մը, ուրիշ անգամ մենք ձեզի կը հը-
րաւիրենք ձաշի:

Արիսողամ աղան առանց պատասխանելու ըս-
տակները համ բեց և ձաշարանէն դուքս նետեց ին-
քրզինքը, որոշելով որ մէյ մըն ալ ձաշարան չմանէ:

Ժ.

Հետեւինք ուրեմն Արիսողամ աղային՝ որմէ
վայրկեան մը չբաժնուեցանք մինչեւ հս և բաժ-
նուելիք ալ չունինք մինչեւ պատմութեանս վախ-
անը: Ազնիւ ընթերցողն մինչեւ հս տեսնելով գը-
րեթէ միօրինակ տեսարաններ, որք բնաւ յարա-
բերութիւն չունին իր որու հետ, քանի մը անգամ
մտքէն անցուց անշուշտ թէ ինչո՛ւ միայն Արիսո-
ղամ աղային օձիքը բոներ կ'երթանք և միւս ան-
ձերն՝ անգամ մը ներկայացնելէն եաքը,
բոլորովին կը մասնանք: Այս պահասութիւնը,
եթէ երբեք պակասութիւն է մեր վրայ գրելու չէ
այլ նիւթին բնութեանը: Ամէն նիւթ բնութիւն
մը ունի: Նիւթ կայ որուն բնութիւնն է լալ. նիւթ
կայ որուն բնութիւնն է խնդալ. նիւթ կայ որուն
բնութիւնն է հայողել. նիւթ կայ որուն բնութիւ-
նըն է յուղել. գարձեալ նիւթ կայ որուն բնութիւ-
նըն է արձակ, ինչպէս նաև կայ որուն բնութիւնն
է ոսանաւոր, վերջապէս նիւթ կայ, որուն բնու-
թիւնն է կրկնութիւն...: Եւրաքանչիւր նիւթ իրեն
յատուկ ընդհանուր բնութիւնն զատ ունի նաև
մասնաւոր բնութիւններ: Եւ որովհետեւ մենք հս
ձաշարանութեան դաս տուու պ սշան չունինք
համառօտիւ մեր միաքը բացարենք և անցնինք.
Մոլիէրի Միզանքրօբն ալ կատակերգութիւն է Լէ
ֆաւոն ալ, բայց ասոնց իւրաքանչիւրն իրարմէ
այնքան առբեր մասնաւոր բնութիւններ ունին

որ Մալիկը չէր կարող լի ֆատօի տեսարաններով
Միզանբօք մը շինել ոչ ալ Միզանբօքի տեսարանն-
ներով լի ֆատօն դրել։ Կարծիմ կրկնութիւն է ը-
սել թէ ես ու ուրիշ վէպերու տեսարաններով չէի
կարող գրել Մեծավատիւ Մուրացկաններու սրանց բը-
նութիւնն է աներեւոյթ ըլլար, Արիսողոմ աղային
անդամ մը ներկայանալէն եաքը։ Կը խոսապվանիմ
որ եթէ սոյն նիւթը Ովրատիսս առնէր՝ երգիծանք
մը կը շինէր և եթէ Մոլիկը ձեռք անցունէր՝ կա-
տակերգութիւն մը կը յօրինէր, բայց մենք՝ որ
ապրելու պէտք սւնինք, սահպուած ենք ժամանա-
կին յարժարիւ շատ անդամ բանրալօնէն բանկան
և երգիծանքն վէպ շինելով։ Այս համառօտ բա-
ցարութենէն եաքը դառնանք Արիսողոմ աղային։

Արիսողոմ աղան, ինչպէս կը յիշէ ընթերցողն,
տուն դարձաւ շարունակելով իւր բարկութիւնն
զոր զգացած էր ճաշարանի մէջ ունեցած ինքնա-
հրաւէր սեղանակիցներուն վրայ։ Տուն դառնալուն
պէս իմաց տրուեցաւ որ քանի չափ նամակներ
զրկուած էին իրեն։ Վեր ելաւ, նամակները մէկիկ
մէկիկ բացաւ, կարգաց, պատուեց և գետինը նետեց։
Սենեակին մէջ քանի մը անդամ դառնալէն եաքը
յանկարծ կանգ առաւ և պոռաց։

— Ասոնք զիս քթէս բոնելով կողոպտել կ'ու-
զեն։ Սա քաղաքը գուլէս ի վեր վայրկեան մը ինք
իր գլխուս չմնացի։ Հազիւ մէկը կ'երթայ, միւսը
կու գայ, ստակ կ'ուզէ, ես այս տեղ ամէնուն ըս-
տա՞կ տալու եկայ։ Ի՞նչ աներես մարդեր են...
այսչափ աներեսութիւն ո՛չ լսուած բան է ոչ ալ
տեսնուած։ Եթէ վոնակմ ըսես՝ ո՞ր մէկը վոնակելու
է։ ո՞ր մէկուն հասնելու է, օրականով չորս հինգ
հոգի վարձելու է որ ուրիշ գործ չունենան, միայն
եկողները վոնակն...։ Եթէ վոնակելու ենես՝ այն

ատեն ալ բոլոր քաղաքին մէջ պիտի բամբասեն
զիս ըսելով թէ անքաղաքավար մարդ է, թէ ստակ
չունի։ չեմ ալ ուզեր որ վրաս դէշ խօսուի... աս
ինչ վարձանք եկաւ գլխուս, աէր Աստուած... բա-
րով խերով ստք չկոփէի սա քաղաքը։ Գլուխ ելնե-
լու բան չէ, չուտավ աղջիկ մը գտնելու է, չոդե-
նու մանելու և փախչելու է, ասոնք պիտի սնան-
կացնեն մարդը...։ Բաշուելու բան չէ աս...։ Ճա-
թելու բան է, աշխատէ, արիւն քրափինք թափէ,
քիչ մը ստակ վաստիկ' և հոս եկուր վարժապետնե-
րուն բաներուն ցրուէ, ո՞ւր լսուած բան է աս...։
— Կարծիմ այս իրիկուն բարկացած էք, ը-
սաւ Մանուկ աղան սենեակին դուռն կամացուկ մը
բանալով և ներս մտնելով։

— Բարկութիւնն ալ խօ՞սք է։ իմ տեղս եթէ
ուրիշ մէկը ըլլար՝ մինչեւ հիմա բարկութիւնէն ճա-
թած էր։

— Ի՞նչ եղաւ հոգիս։

— Ի՞նչ կ'ուզես սր ըլլայ, վայրկեան մը հան-
գիսա չեն թողուր, ուր կը նստիմ, վրաս կը թա-
փին ստակ կ'ուզեն։ փողոց կ'ելլեմ չորս կողմու կը
պաշարեն ստակ կ'ուզեն։ ճաշարան կ'երթամ, բո-
լորտիքս կը շարուին ստակ կ'ուզեն։ և ես ասոնց
ձեռքէն խալսելու համար տունէն փողոց, փողոցէն
տուն կը վազեմ։ կ'ուզակմ, ասոնց ձեռքէն խալը-
սելու համար ո՞ր ծակը մտնեմ, ըսէ՛ ինծի։

— Իրաւունք ունիս. ես չե՞մ հասկնար, ինծի
ալ թող տուի՞ն որ սա թաղականին գործը պատ-
մեմ։

— Քսան նամակ գեռ հիմտ պատսեցի։

— Ի՞նչ ըսած էին այդ նամակներուն մէջ։

— Էսած էին թէ հետս գալ կ'ուզէին տանս մէջ
վարժապետութիւն ընելու համար, թէ՝ գիրք մը
ինձ պիտի նուիրեն եղեր, և ասոր համար քսան

սակի տալու եմ եղեր, թէ լրազրի երկու բաժանորդ
գրուելու եմ եղեր, թէ՝ . . . ի՞նչ դիմամ, ո՞ր մէ-
կը համրեմ, ո՞ր մէկն ըսեմ, դիմանալու բան չէ:

— Անոնք ալ ազքատ են խեղձերն, ի՞նչ ը-
նեն:

— Ապրելու համար թո՛ղ ուրիշ գործ մը փըն-
արսեն, արհեստ մը սովորին, վերջապէս ընեն ինչ
որ կ'ուզեն, ես ի՞նչ յանցանք ունիմ որ կու դան
գլուխս կը թախուին եղբայր, ունեցածս չունեցածս
անո՞նց տամ:

— Ի՞նչու անսնց տաս:

— Մարդս քիչ մըն ալ ամաչելու է . . . չնանչ-
ցած մարդուս երթամ և բարեւ, Ասաւածոյ բարին,
ինծի ստակ տուր ըսեմ . . . դուն կրնա՞ս ըսել:

— Ասաւած ան օրը չցցունէ:

Սենեակին գուռը նորէն բացուեցաւ և քսանը
հինգ տարեկանի մօա միջանասակ պատանի մը գող-
դոշուն քայլերով ներս մատւ և նամակ մը յանձ-
նեց Արխողութ աղային որ նամակը չբանալով հար-
ցուց բարկութեամբ:

— Ի՞նչ կ'ուզեն, մարդ:

— Մէջը գրուած է, պատասխանեց պատանին
թոթավիլով:

— Դուրսը մէջը քեզի ըլլայ, ի՞նչ կ'ուզես ը-
սէ:

— Վաղը իրիկուն ներկայացում մը պիտի
տամ իմ հաշոյս համար և ձեր ազնուութեան օթեա-
կի մը տոմսակ բերի:

— Ես չեմ ուզեր, պատասխանեց նամակը պա-
տանայն երեսը նետելով:

— Բոնութեամբ գործ ալ չըլլար, ըստւ Մա-
նուկ աղան:

— Տասը տարիէ ի վեր, ըստւ պատանին, թա-
տերական բեմին վրայ կը քալեմ . . .

— Թող նստէիր պոռաց Արխողում աղան:
— Ես ազգին ծառայութիւն կ'ընեմ:
— Աղայութիւն ընէիր թո՛ղ, ինչուս պէտք ի-
մին, ատոնք պարապ խօսքեր են:
— Իրաւունք ունի, ատոնք պարապ խօսքեր
են կրկնեց Մանուկ աղան:

— Տասը տարիէ ի վեր է որ բարոյական դպպ-
ոցի մը մէջ ազգին վարժապետութիւն կ'ընեմ:

— Ի՞նչ փոյթ ինծի:
— Ի՞նչ փոյթ անոր, արձագանք տուաւ Մա-
նուկ աղան:

— Եւ իրաւունք ունիմ կարծեմ, ինծի համար
տրուելիք ներկայացման ձեզի պէս ազնիւ մէկն ալ
հրաւիրել:

— Ես պէտք չունիմ:
— Ան պէտք չունի, կրկնեց Մանուկ աղան:
— Եթէ դուք օթեակ մը չէք ընդունիր, որո՞ւ
ուրեմն տամ օթեակի տոմսակներն:

— Ուր ուզես հոն տար, ատ իմ խառնուելու
բանս չէ:

— Ատ իր խառնուելու բանը չէ տղաս, ըստւ
Մանուկ աղան:

— Կ'աղաչեմ մի մերժէք այս տոմսակն, եթէ
մերժելու ըլլաք՝ զիս փողոցներու մէջ խայտառակ
ընելու պատճառ պիտի տաք:

— Գնա՛ բանդ, ես ձանձրացայ, այդ տեսակ
խօսքեր մտիկ ընկելէ,

— Ան ձանձրացաւ այդ տեսակ խօսքեր մտիկ
ընկելէ, յարեց Մանուկ աղան:

— Ա՛ն, եթէ ասկից ձեռնունայն ետ դառնամ
իմ մահս պիտի տեսնեմ:

— Թեզի մտիկ ընկելու ժամանակ չունիմ:

— Քեզի մարի ընելու ժամանակ չունի, ըստ
Մանուկ աղան:

— Մէկ սոկիի բան է, ընդունեցէ՛ք զայն կա-
զաշեմ, մեծ յուսով եկած եմ հոս, պարագ ետ մի՛
դարձնէ՛ք զիս:

— Դուրս ե՛ւ գնա՛, Աստուածդ սիրես, քի՛զ
մտիկ պիտի ընենք հոս:

Սենեակին դուռը նորէն բացաւեցաւ և մաղե-
րուն մէջ ճերմակ ինկած յիսունը անցած մարդ մը
ներս մտաւ յանկարծ և իւր խօսքերն Արիսողմ ա-
ղային ուղղելով.

— Ձե՞ս խպնիր դուն, հարցուց:

— Ինչո՞ւ պիտի խպնիմ, պատասխանեց Արի-
սողով աղան չուարելով:

— Ինչո՞ւ խեղճ տղան երկու ժամէ ի վեր հս-
կը սպասցունես:

— Ո՞վ կը սպասցունէ. ո՞վ կ'ուղէ որ սպասէ.
կը վոնաեմ չերթար:

— Կը վոնաես, բայց առանց մէկ սոկի պարա-
քէդ տալու:

— Ով պարաք ունի անոր:

— Դուն ունիս. եթէ ան չըսէր ինծի թէ-
քեզմէ առնելիքն այս իրիկուն պիտի առնէր և ին-
ծի պիտի տար՝ ես չէի տպեր այդ տամսակներն և
ներկայացման աղղերը: Երկու ժամ է որ վարը դը-
րան առջեւ կ'սպասեմ որ իջնայ և պարաքը տայ և
դուն հոս կը խաղցնես խեղճը:

— Աս ի՞նչ է. ես անոր պարաք ունենամ...
ամենեւին...

— Ամենեւին, ըստ Մանուկ աղան:

— Ես անպատճառ առնելիք ունիմ չըսի քեզի,
պարսն տպարանապետ, ըստ գերասանը, այլ ըսի
թէ օթեակի տոմսուկ մը պիտի տամ, սոկի մը պիտի
առնեմ:

— Ի՞նչու ուրեմն խաբեցիր զիս, ստախօ՛ս:

— Որպէս զի ծանուցումները ետ չմնան:

— Ես քու խաղալի՞քդ եմ:

— Ան քու խաղալի՞քդ է, ըստ Մանուկ ա-
ղան:

— Ի՞նչու խաղալիկս ըլլաս:

— Թշուառական, խայառառակ, անամօթ, անե-
րի՛ս...

— Ատոնց ամէնն ալ դու ես:

— Դու ես:

— Ես չեմ, դու ես:

Ես չեմ՝ դու եսի վրայ ծեծկըւուք մը կը ծագի
գերասանին և ապարանապետին միջեւ, և Արիսո-
ղով ու Մանուկ աղաները մեծ գժուարութեամբ կը
յաջողին զանոնք իրարմէ բաժնել:

— Վար իջէ՛ք, պօսաց Արիսողով աղան զա-
նոնք գանելէն ետքը, վար իջէ՛ք և հոն կոռւեցէ՛ք:

— Դուն մեր կուոյն խառնուելու ի՞նչ իրա-
ւունք ունիս, դուն զիս չես կրնար վոնաել, ես
առնելիքս կ'ուզեմ և ինծի պարապական եղողն ուր
որ գանեմ հոն կրնամ մանել:

— Դուն վար իջիր, ըստ գերասանին Արիսո-
ղով աղան:

— Ի՞նչպէս իջնամ, տեսար որ աչքիդ առջեւ
ինչեր ըրաւ:

— Մինչեւ որ ան չիջնայ ես քայլ մը չեմ
առներ, կրկնեց տպարանապետը:

— Մինչեւ որ ան չինուանայ ես չեմ կրնար փո-
ղաց ելնել, ըստ գերասանը:

— Մենք իջնանք ուրեմնի, Մանուկ աղա, ըստ
Արիսողով աղա:

Դերասանը Արիսողով աղային ծունկերուն
փաթթուելով աղաչեց որ սոկի մը փսիս տայ դոնէ:
Արիսողով աղան շատ ընդդիմացաւ բայց յե-

տոյ տեսնելով որ անսնց ձեռքէն ուրիշ կերպով
փրկութու ձար չկայ՝ ակոաները կրծտելով հանեց
բարկութեամբ ոսկի մը տաւաւ տպարանապեախն որ
շնորհակալութիւն յայտնելով դուրս ելաւ: Դե-
րասանն ալ ներում խնդրելով վար իջաւ և գնաց:
— Ասոր ի՞նչ կ'ըսես Մանուկ աղա:
— Ըսելիք չմնաց, Արիսողոմ աղա:
— Հրամանքդ վար իջիր, դուռն գոցէ՛ և ա-
պսպէ որ չբանան դուռն:
— Շատ լաւ:
— Որպէս զի այս գիշեր գոնէ հանգիստ անցու-
նենք և մեր ի՞նչ ընկլիքին վրայ խորհինք:
— Իրաւունք ունիս:
— Շուտ ըրէք, վասն զի հիմայ մէկիկ մէկիկ
կու գան:
— Հիմայ կ'երթամ:
Թորոս աղան վար գնաց իրեն արուած հրա-
մաները կատարելու և Արիսողոմ աղան գլուխը
բարձի մի վրայ դրաւ քիչ մը հանգստանալու հա-
մար:

ԺԱ.

Արիսողոմ աղան քանի մը ժամ քնացաւ բազմոցի
վրայ: Սակայն դասելով այն ձայներէն զորս կը
բառնար քունին մէջ՝ կը հասկցուէր թէ խմբագիր-
ներն, բանաստեղծներն և դասաւուներն քունի
մէջ ալ հանգիստ չէին թողուր զինքն որ կը պոռար
մէրթ քնթ մէրթ. «Գացէ՛ք, կորսուեցէ՛ք, ստակ չու-
նիմ ա՛լ առլու»: Երեք ժամու չափ այսպէս յուզ-
ուած մրափելէն ետքը մէկէն ի մէկ աչերը բացաւ
ա՛ն գոչելով: Կարծես խմբագիր մը անոր կոկորդէն
ուբխմելով խղուել կ'սպանար զինքն եթէ չբարեհա-
ձէր իւր թերթին բաժանորդ գրուելու: «Տէր ո-
գործեա» պոռաց աչերը չփելով. հանգիստ քուն մըն
ալ չունինք:

Յետոյ ոտքի ելլելով կազը վառեց և կանչեց
Մանուկ աղան որուն քիչ մը կերակուր ապսպեց:
Քառորդէ մը բերուեցաւ կերակուրն, որուն յաջոր-
դեց խանվէն որուն ետեւէն եկաւ քունը: Հանուե-
ցաւ Արիսողոմ աղան և անկողինը մտաւ քնանալու
համար: Հարկ չէ կրկնել թէ նոյն գիշերն հանդարտ
քուն մը չունեցաւ: Առաւօտուն կանուխ ելաւ ան-
կողինէն, երեսը լուաց, հագուեցաւ, տունէն դուրս
ելաւ և շիտակ պր. Դերենիկին գործատունը գնաց
լուսանկար պատկերը քաշել տալու համար: Գործա-
տունը դեռ բացուած չէր և Արիսողոմ աղան բերա-
յի փողոցներուն մէջ կը շրջէր որպէս զի ժամանակ
անցնի և գործատունը բացուի: Ժամը չորսին (ըստ
առաջկաց) բացուեցաւ գործատունը և Արիսողոմ աղան
սանդուիէ մը վեր ելլելով մտաւ սենեակ մը որ
լուսանկար պատկերներով զարդարուած էր և ուր
Դերենիկ նստած կը կարդար:

— Բարի եկաք, Արիսողոմ աղա, սանկ հրամ-
մեցէք, ըստ ալր. Դերենիկ, սեղանին վրայ գնե-
լով լրագիրն:

Եւ յետոյ գրագրին գառնալով նշանացի հրա-
մայեց անոր որ խանուէ մը բերեն:

— Ժամ առաջ քաշենք սա պատկերս, որովհե-
տեւ սահիպողական գործեր ունիմ, քանի մը մեծ
մարդոց այցելութիւն պիտի ընեմ:

— Շատ լաւ:

— Կ'ուզեմ որ պատկերս փառաւոր կերպով
քաշուի: Կ'ուզեմ թիկնաթոսի մը վրայ նստիլ, առ-
ջեւս ունենալ երկու սպանաւոր, մէկ աղախին այն-
պէս ըրէք որպէս թէ ազարակի մը մէջ ըլլամ, աս-
դին վարուցան, անդին կովերէն կաթէ կթեն, աս-
դին ոչխարներն արածեն, անդին ցանեն, անդին
քաղեն, ասդին հերկեն, անդին մածուն շինեն,

ասդին ձմերուկ փրցունեն, անդին կարագ շինեն,
ասդին սագերը ծովու մէջ լողան, անդին անտա-
ռին մէջ փայտ կարեն, ասդին սայլերով ցորեան
փոխադրեն, անդին վերջապէս ինչ որ կ'ըլլայ ա-
գարակի մը մէջ աեսնուի պատկերիս մէջ:

— Այդ մաէնը կարելի չէ կատարել, միայն թէ
քանի մը սպասաւորներ կրնում կայնեցնել քավդ:

- Ինչո՞ւ ըլլար:
- Որովհետեւ անկարելի է:
- Մեծ մարդոց համար ի՞նչպէս կ'ընէք:
- Անոնք աթոռի վրայ նստած կամ ոտքի վը-
բայ քաշել կուտան իրենց կենդանագիրը:
- Ի՞նչպէս ուրեմն կը հասկցուի անոնց մեծ
մարդ ըլլար:
- Պատկերն մեծկակ ու փայլուն կ'ըլլայ:
- Իմինս ալ անանկ պիտի ըլլայ ուրեմն:
- Այս':
- Ոտքի՞ վրայ թէ նստած:
- Ինչպէս որ կ'ուզէք:
- Դուք ի՞նչպէս կ'ուզէք, ի՞նչպէս հանեմ նէ
աղէկ կ'ըլլայ:
- Ձեզի համար ոտքի վրայ կը վայլէ:
- Շատ աղէկ, սպասաւորներն ալ դէմս:
- Այս':
- Ես զանոնք չախելու պէս կ'ըլլամ, անոնք
ալ առջեւնին կը նային:
- Սքանչելի:
- Ծեծելու պէս կ'ըլլամ զանոնք և վերջը
բարկութիւնս իջած կ'ըլլայ:
- Աղէկ խորհած էք:
- Հագուստներս ինչո՞ւ են:
- Էնափիր:
- Ուրիշ ժամացոյց մըն ալ ունիմ, անիկա
ալ կրնա՞նք մէկ կողմերնիս կախել:

— Մէկ ժամացոյց բաւական է, աւելին աւե-
լորդ է:

— Այս հագուստներուս համար յիսուն ոսկի
տուած եմ, անոնց խումաշին աղէկ և ընտիր ըլլա-
լըն ի՞նչպէս պիտի հասկցուի պատկերէս:

- Հոգ մի՛ ըներ կը հասկցուի:
- Էնապ՞որ պիտի ցուցնես:
- Հանդիսա եղէ՛ք:
- Զկարծուի սակայն թէ երկու ոսկինոց հա-
գուստ է հագածս:
- Այդ մասին անհոգ եղէ՛ք:
- Շատ լաւ.
- Ես կ'երթամ անդիի սենեակն նախնական
պատրաստութիւններս ընելու, քանի մը վայրկեա-
նէն հրամանքնիդ ալ հրամմեցէք:
- Շատ աղէկ:
- Եթէ կ'ուզէք մինչեւ որ անդիի սրահը
մտնէք, սափրիչ մը կանչել անոնք որ մողերդ ու
պիտիկը սանրէ, չոկէ ու չակոտէ:
- Աղէկ:
- Գործարանի պաշտօնեաններէն մին վաղելով
կ'երթայ սափրիչ մը բերելու:
- Քանի մը վայրկեանէն կու գոյ սափրիչն որ
գլուխն ծուելով և ես ես երթալով յարդանքներ կը
ճառնեցանէ Արխոնդ աղային:
- Եկուր սա մազերս չոկէ նայինք, կ'ըսէ Ա-
րիսողու աղան:
- Պարաքերնիս է, կը պատասխանէ սափրի-
չը:
- Աղէկ մը շակէ, որսվհետեւ պատկերա հանել
պիտի ամամ:
- Գլխաւս վրայ: Ար:
- Ես շատ կարեւորութիւն կուտամ գլխուն:

— Ինչո՞ւ չտաք, Վաեմապատիւ տէր... : Ա՛խ
եթէ դուք չտաք ո՛վ տայ: Ա՛խ... երանի թէ ես ալ
ուրիշ մտմառք չունենայի և...

— Շտկուէ նայինք:

— Դիտեմ որ ես յանցաւոր եմ ձեզի բարի
եկամի չգալուս համար, բայց ինչ ընհմ... պարա-
գաները թուղ չտուին որ կարենայի կատարել այդ
պարտականութիւնս և այսօր երես ունենայի
աղաչելու ձեր վսեմութեան որ...

— Վերջը կը խօսինք, սա մազերս սանտրէ...
մարդը կ'ըսպասէ ինծի:

— Վնաս չունի, անիկա կ'սպասէ: Աղաչելու
ձեր վսեմութեան որ, եթէ կարելի է, յիսուն վաթ-
ուուն սոկի մը... ես ալ աղգային սափրիչ մըն եմ:

— Ի՞նչ ըսել է յիսուն վաթսուն սոկի...

— Կը խնդրեմ, մի՛ բարկանաք, յիսուն վաթ-
ուուն սոկի փոխատուութիւն մը ընէիք ինձ, որպէս
զի այդ գումարն Բարիզ զրկէի տղուս որ այդ գու-
մարով պարտքերը տար ու բժշկութեան վկայակա-
նը առնէր գար ու քանի մը տարիէն վաստիէր ու
տոկոսովն ձեզի հատուցանէր: Բայց ի՞նչ օգուտ որ,
այսօր երես չունիմ ասանկ առաջարկութիւն մը ձե-
զի ընելու, որովհետեւ բարի եկամի չեկայ ձեզի:
Եթէ բարի եկամի եկած ըլլայի ձեզի՝ համարձակու-
թիւն կ'ունենայի ձեզի աղաչելու որ սա խնդրան-
քըս կատարէիք, բայց քանի որ բարի եկամի չեկայ
ձեզի, դուք ալ իրաւունք ունիք խնդիրքս մերժե-
լու, թէեւ աղգային արհստաւոր մը ըլլամ:

— Հիմայ ատանկ խօսքեր մտիկ ընելու ժա-
մանակ չունիմ, ինչ որ պիտի ընես նէ ըրէ... աս
ի՞նչ տարօրինակ քաղաք է, բարեւ Աստուծոյ բա-
րին փարա տուր... մէկու մը բարեւ տալու չէ...
Տէր ողորմեա... Տէր Աստուծոյ մեղայ... ամէն բան
սահման մը ունի էֆէնտիմ... հասկցայ... ժամ ա-
ռաջ փախչելու է այս քաղաքէն:

— Կ'երեւի թէ էֆէնտիմ բարկացուցած են՝ ը-
սու ներս մտնելով տարիքը յիսունին և վաթսու-
նին մէջ կորսուած քահանայ մը:

— Աս չքաշուիր Տէր Հայր:

— Ողջոյն, օրհնած, թէպէտեւ դուք զիս չէք
ձանչնար, բայց ես ձերին ո՛վ ըլլալն չատ աղէկ
գիտեմ... ի՞նչպէս է, պատուական Աֆերնիդ աղէկ
է:

— Ծիտակը աղէկ չէ:

— Աստուծով չընէ. Աստուծով քիչ ատենէն ա-
ւելի աղէկ կ'ըլլայ: Ձեզի հետ քիչ մը առանձին մը-
նուլ կ'ուզէի: (Սափրիչին) Քիչ մը դուրս կ'ելլա՞ք:
Ես քեզի համար ալ կը խօսիմ, էֆէնտիմ կը հաս-
կրնամ ինդիրքդ և ես ալ կը բարեխօսեմ որ ի նը-
պատ քեզի բան մը ընէ. էֆէնտիմ, սափրիչնիս աւ-
գիտէք ա, աղգայիններէն է, անոր ալ երակներուն
մէջ Հայկայ արիւնը կ'եռայ, անտես ընելու չէ զա-
նոնք ալ... (Սափրիչը կ'երբալ): Ձեզի հետ մասնա-
ւոր և առանձին տեսակցութիւն մը ընել ուզելուս
պատճառն սա է որ հրամանքնիդ կարգուիլ կ'ու-
զէք եղեր... և ինչո՞ւ չկարգուիք: Իմացայ նէ՝
շատ ուրախացայ, և ինչո՞ւ չուրախանայի: Ձեզի
պէսներն կարգուելու են որ աղգերնուս մէջ հա-
րուստ տղաք շատանան: Աղուոր աղջիկ կը փնտոէք
կոր եղեր... և ինչո՞ւ չփնտոէք, ես ալ ձեր տեղն
ըլլայի նէ՝ ես ալ կը փնտոէի... ստակ կ'ուզէք կոր
եղեր քիչ մը... ինչո՞ւ չուզէք, առանց ստակի
կարգուիլն ալ չիսակը աղէկ բան մը չէ: Արդ ես
իմ ձեռքիս տակն ունիմ անտանկ աղջիկներ որ թէ
աղուոր են և թէ հարուստ:

— Ծնորհակալ եմ, օր մը կը նայինք, տչքէ
կ'անցունենք զանոնք: Եթէ կ'ուզէք քիչ մը սպա-
սեցէք սա պատկերս քաշել տամ ու երթանք: Եթ-

տակը խօսելով ես ուրիշ գործ չունիմ հոս, աղջիկ փնտոելու եկած եմ, քանի մը օր պիտի մնամ, եթէ կրցի գտնել՝ կարգուիմ պիտի հետն ու առնեմ պիտի երթամ, եթէ չգտնեմ գարձեալ պիտի երթամ, որովհետեւ հոս հանդիսա չեն թողսւր զիս վայրկեան մը, ալ ձանձրացայ:

— Իրաւունք ունիք, ժամանակներն ալ զէշ են էֆենտին, դրամական տագնապ, տագնապ գըրամական, ամենուրեք կը տիրէ: Ազգին ալքատները շատ են: Ի՞նչ որ է, կը սպասեմ ձեզի ու միտսին կ'երթանք:

— Սա անսպատանն ոլ մազերս շակելու համար եկաւ ու... այս միջոցին Պ. Դերենիկ ներս կը մանէ ու:

— Հրամացեցէք, կ'ըսէ, սրահը:

— Բայց մազերս...

— Հոդ չէ, ես կը սահարեմ:

— Բայց պելուրս...

— Վնաս չունի, ես կը շակեմ:

Պ. Դերենիկ Արքունում ազան կ'առաջնորդէ լուսանկարի սրահը:

Քահանան առանձին կը մնայ և կը սկսի մտքովը հետեւեալ խորհրդածութիւնները ընել: Բայց ի՞նչպէս կրնանք մաքով եղած խորհրդածութիւններն գուշակել: Դէմքէն անշուշադէմքերը շատ անդամ կը խօսին: Ի՞նչպէս հարսւստներուն նոյնպէս աղքատներուն լեզուն շատ անդամ անոնց դէմքին վրայ է: Մէկու մը դէմքը նայելով կրնանք ըսել:

— Այս մարդն ինձմէ սատկ ուզելու եկած է կու այս մարդն ինձի սատկ տալու եկած է:

— Քահանային դէմքն ալ կ'ըսէք: «ի՞նչ ձամբայ բանեմ որ սա ձմեռուան ածուխիս ու փայտիս ստակն սա մարդէն փրցնեմ:

Քահանան այս խորհրդածութեանց մէջ էր սափրիչն ներս մտու նորէն ու քահանային ըստ:

— Տէր Հայր, գործս աւերեցիր, եթէ ներս չմանէիր քանի մը սոկի պիտի փրցնէի ես այդ մարդէն, առւսզ է կ'ըսեն կոր, առւսզ բոլոր խրմագիրներուն և դասատուներուն ստակ առւեր է:

— Եղբայր, անոնք չե՞ն մի որ պատճառ կ'ըլլան կոր որ մեզի պէս աղքատները չեն կրնար կոր օտարականներէ ստակ փրցնել: Հիւր մը եկած մի, բոլոր խմբագիրները ու դասատուները վրան կը թափին կոր... անիծեալ գարշելիներ... :

— Ի՞նչ պիտի ընկնք հիմա:

— Ես քեզի համար կը բարեխօսեմ, դուն ալ ինձի համար միջնորդէ, զոնէ մէյ-մէկ կտոր բան փրցնենք սա մարդէն:

— Ծատ աղէկ:

— Հիմա հոս պիտի գույ, ես անոր ականջն ի վար կ'ըսեմ որ այս սափրիչը գոն ըրէ, սրսվհետ շատ հարսւստ տուներ կը մանէ կ'ելնէ, և կրնայ եթէ սոզէ գործդ տւրել:

— Գործը ի՞նչ է:

— Հարուստ աղջիկ մը կը փնտոէ կոր:

— Աղէկ: Ես ալ կ'ըսեմ որ քահանային զտամէկու մը մի՛ զտամէիր:

— Ծատ աղէկ:

— Աս աղէկ ձումբայ է:

— Միամիաին մէկն է:

— Այս՝ գիւրաւսւան է, բայց կոզոստեր են, մհնք շատ ուշ հասանք:

Արքունում աղան զտարթ դէմքով կը դասնայ ունեակն ուր քահանան սափրիչին հետ կը խօսէր:

— Եերեցէ՛ք, Արքունում աղան, կ'ըսէ սափրի-

չըն, ձեզի այդ խնդրիքն ընելուս համար. սակայն ես կը կարծէի թէ կրնայի իմ կողմէս ես ալ ծառաշխաթիւն մը ընել ձեզ:

— Արիսողոմ աղա, պէտք է գիտնալ որ, կը-սէ քահանան, մեր սափրիչ էֆէնտին գրեթէ մայ-րաքաղաքիս բոլոր հարուստ տուները կը մտնէ, բո-լոր աղջիկները կը ճանչնայ:

— Ի՞նչ կ'ըսէք:

— Այս՝ ինքն ալ բարի մարդ մըն է, կատա-րեցէք խնդիրքը, մեղք է:

— Արժանապատիւ հօրմէն մի զատուիք եթէ անանկ միաք մը ունիք. Տէր հօր ձեռամբ կարդուած երիտասարդներն միշտ գոն մնացած են: Ուրախ եմ որ ձեր գործը Տէր հօր պէս բան ի բուն և գոր-ծունեայ քահանայի մը ձեռքն ինկած է. վատահ եղէք որ երջանիկ պիտի ըլլաք ձեր ամուսնու-թեան մէջ:

— Բայց դուք ալ պիտի օգնէք ինձի, աէք սափրիչ, կը յաբէ քահանան:

— Ես ի՞նչ բանի կարող եմ...

— Ձեր աջակցութիւնն ալ պէտք է...

— Կ'ընեմ ի՞նչ որ կարող եմ ընել:

— Ենորհակալ եմ: Արիսողոմ աղան օտարո-կան չէ, աղգային է, կարգուելու համար եկած է հոս, մեր պարաքն է օգնել իրեն:

— Հարկաւ, Արիսողոմ աղային հետ ասելու-թիւն մը չունիմ ես, մահաւանդ թէ ինքը շատ բա-րի ու առաքինի մարդ մըն է:

— Երեսին խօսիլ չըլլայ, ընաիր մարդ մըն է:

— Պատուական մարդ է:

— Վրան նայիս նէ կ'ըսես որ քիուրութիւնը վրայէն կը վազէ կոր:

— Ո՞վ կը պնդէ հակառակը, ես անոր թըշնա-մին չեմ:

— Այսինքն թէ որ քեզի ալ հարցուի նէ՝ բա-րի վկայութիւն տաս:

— Անչուշտ:

— Արիսողոմ աղան զիլ մարդ չէ, քեզի կը վարձատրէ վերջը:

— Գլխուս վրայ, գլխուս վրայ, Ա՛խ, սա աը-դուս վկայականն առնուէր անգամ մը:

— Հինգ օրէն եաքը, Արիսողոմ աղա, հինգ օ-րէն եաքը պատրաստ են պատկերնիդ, ըսաւ Պ. Դերենիկ ներս մտնելով:

— Շատ աղէկ, պատասխանեց Արիսողոմ աղան ու գործարանէն վար իջաւ ընկերակցութեամբ քա-հանային ու սափրիչին:

ԺԲ.

Տիկին Շուշան՝ զոր ընթերցողն մոռցած չէ անչուշտ՝ Արիսողոմ աղային առնէն տեղեկացած էր թէ... քահանան Արիսողոմ աղան գտնելու հա-մար Պ. Դերենիկի գործատունն դնացած էր: Ուստի որսն քահանային յափշտակել չտալու համար հեւա-լով կը վազէր դէպի Պ. Դերենիկին գործատունը, ուր կը հասնէր ճիշտ այն վայրկեանին յորում քահանան սափրիչն վարպետութեամբ ճամբելէ յե-տոյ Արիսողոմ աղային կը բարեխուսէր հետեւեալ կերպով. «Ներեցէք որ քիչ մը ուշացայ ճշմարտու-թիւնն ձեզի յայտնելու սափրիչի մասին: Այս սափրիչը աներես մարդ մըն է, բալոր Պոլիս եկող ներուն օձիքէն կը բանէ և անոնցմէ ստակ կորպե-լու կ'աշխատի: Անպիտանին մէկն է, իմ պարագս է, որպէս խոստովանուհայր, զգուշացնել զձեզ այս կարգի մարդերէն որք միմիայն քանի մը ոսկի յափշտակելու նովաստակաւ կը մօնենան հարուստնե-րուն: Որքան կ'ատեմ այդ մարդերը:

— Շնորհակալ եմ ձեր բարեսրառութենէն և
մարդասիրութենէն:

— Երես մի տաք այդ մարդոց:

— Ոչ:

— Տէր Պապա, գուռ ի՞նչ գործ ունիս Արիսոն-
զոն աղային հետ, կը հարցնէ տիկին Շուշանն, որ
ի՞նչպէս ըսինք, հեւալով հասած էր:

— Պղափկ գործ մը:

— Ոչ, բնաւ գործ պիտի չանենաս գուն ա-
նոր հետը, գուռ ձեր պարտքը կատարեցէք և թող
տուէք որ մենք ալ մերինը կատարենք, ալ խըպ-
ուցէք քիչ մը: Երթանք Արիսոնը աղա:

— Ոչ, գուռք խպնեցէ՞ք քիչ մը, մենք Արիսոն-
զոն աղային հետ պղափկ գործ մը ունինք, երթանք
Արիսոնը աղա:

Եւ քահանոն Արիսոնը աղային ձախ թեւէն
կը քաշէ:

— Տէր պապայի մը չվայլեր ըրածդ:

— Լոէ՛:

— Պղափի լում:

— Թող տուէք թեւերս:

— Թող չեմ տար, կը պատասխանէ տիկին
Շուշան, իմ իրաւունքս է:

— Ոչ, իմ իրաւունքս է:

Քանի մը հարիւր գահնեկան տոնելու համար
կ'ուզեն որ խեղճ մարդք թշուաս ընկա, գուն աղ-
ջիկ չես ձանչնար:

— Մի պատար, պիտի թողաւմ որ կողովակ՞ք
այս աղնիւ մարդն, այնպէս չէ՞:

— Ի՞նչո՞ւ կոիւ կ'ընէք, ամօթ չէ՞ . . . ես չեմ
ուզեր աղջիկ:

— Պղլար, կը պատասխանէ Տիկին Շուշան,
մենք քեզի աղջիկ մը պիտի գահանք, բայց թէ որ
աէք պապային ձեռքով աղջիկ վնասես, գիտցած
եղիր որ պատիւդ մէկ ստակի կ'ըլլայ:

— Ինդհակառակն, քահանայի ձեռամք աղջիկ
փնտողն է պատուառորը: Երթանք Արիսոնը աղա:

— Թող չեմ տար:

— Երթանք, Արիսոնը աղա:

— Թող չեմ տար որ երթայ, ես անսր աղջիկ-
ներ պատրաստած եմ, աղջիկ տեսի պիտի երթանք:

Այս տեսաբանն անդի կ'աւնենար պ. Դերենի-
կի գործատան առջեւ և անցնողներէն պղափի
խումք մը հանդիսականի պաշտօն կը վարէր անդ,
երբ Մանուկ աղան ստիպուած Արիսոնը աղան ան-
պատճոս գանելու, եկաւ հոն, տեսու Արիսոնը ա-
ղան՝ որուն մէկ թեւէն քահանան և միւս թեւէն
տիկին Շուշան կը քաշէր և մէկդի քաշելով զայն,
քանի մը ծանր խօսքեր ուզզեց քահանային և տի-
կին Շուշանին և հեռացուց զանոնք:

— Ահ, ըստ Մանուկ աղան Արիսոնը աղա-
յի գառնալով, յանցանքը ձերն է, ամենուն երես
կու տաք, ասսնք միմիայն քեզմէ օգտուելու հա-
մար կը մօտենան քովդ:

— Իրա՞ւ կ'ըսէք:

— Ի՞նչո՞ւ սուտ պիտի զրուցեմ: Կարգուի՞լ
կ'ուզես, լու, ես գտնեմ քեզի աղջիկներ, ընտրէ՛,
և ուզածդ տա:

— Աղէկ ըսիր:

— Պատուառոր ընտանիքէ աղջիկներ ցուցնել
տամ քեզի:

— Ցուցուր:

— Միջնորդով աղջիկ փնտուելու ժամանակը
անցած է հիմա:

— Այդպէ՞ս է:

— Մինչեւ անդամ ամօթ է:

— Ամօթ է նէ չուզեր:

— Ես քեզի աղջիկ կը հաւնեցնեմ։
 — Շնորհակալ եմ։
 — Տուր ինծի սըկէց յիսուն սոկի։
 — Ատ ի՞նչ ըսել է։
 — Տուր դուն ինծի յիսուն սոկի։
 — Ինչո՞ւ տամ։
 — Ալլահ, Ալլահ, տուր կ'ըսեմ կոր նէ՝ հար-
 կաւ բան մը գիտեմ կոր, աէր ողորմեա, պիտի
 առնեմ չպիտի փախչիմ եա։
 — Չպիտի փախչիս, բայց . . .
 — Կը վախնա՞ս կոր ինծի յիսուն սոկի տո-
 ւու, արգէն այնքան գումար մը պահանջող եմ ես
 քեզմէ, ձեզի համար այնքան ծախքեր ըրած եմ։
 — Այնքան ծախքեր . . . ի՞նչ ծախքեր են ա-
 նոնք . . .
 — Մէկիկ մէկիկ չպիտի գրենք ա', տիկինը
 գիտէ։ Բայց թողունք այդ խնդիրը հիմայ։
 — Ոչ, չթողունք այս խնդիրը. յիսուն սոկի
 . . . քանի՞ օր եղաւ որ . . .
 — Մէկու մը պարտք առնի, այսօր եկաւ նե-
 ղը խոթեց զիս և եթէ այդ գումարը չփճարեմ, տու-
 նէն պիտի հանեն մեզի։ Ասիկա ինծի համար ա-
 մօթ է քեզի համար ալ պատուարեր բան մը չէ.
 տուր սա յիսուն սոկին, հաշիւը կը կարդադրենք
 վերջը։
 — Ի՞նչ խայտառակութիւն է աս։
 — Աղջիկ զանամ նէ՝ միջնորդչէք չպիտի ու-
 ղեմ ես քեզմէ. տուր սա յիսուն սոկին։
 — Ինչո՞ւ տամ . . . ի՞նչ ըրի ես քեզի . . .
 — Կը ցաւիմ որ խօսք չէք հասկնար կոր, քե-
 զի ինչ կ'ըսեմ կոր քեզի ինչ կ'ըսեմ կոր նէ ան ը-
 րէ. ինչո՞ւ չես տար կոր սա յիսուն սոկին։
 — Չեմ տար, տունէդ ալ կ'ելնեմ, կ'երթամ։

— Չեմ տար, տունէդ ալ կ'ելնեմ, կ'երթամ։
 Եւ խօսելով դէպի տուն կը քարէին։
 — Յիսուն սոկին ալ մեծ րանժը ըլլար որ չէք
 ուզեր կոր տալ, իրաւ որ ես ձեզմէ չէի յաւսար։
 — Յուսացէք։
 — Չեր քիպարութեանը չէի ձգեր որ յիսուն
 սոկիի խօսքն բնէք։
 — Մնաուկներս կ'առնեմ կ'երթամ հու։
 — Կրնաք երթալ, բայց յիսուն սոկին տալէն
 համբ։
 — Չեմ տար։
 — Կուտաք։
 Կը հասնին Ծաղիկ վազաց, ուր եկած էին
 նաեւ քահանան, սափրիչն և տիկին Շուշան։
 — Գնացէք, մէկգի դացէք, երեսնիդ տեսնել
 չեմ ուզեր, պառաց Արիսողոմ աղան տեսնելով գտ-
 նոնք։
 Յետոյ գուռը զարկաւ, ներս մտաւ և սկսաւ
 սնառուկները կապել ի զարմացումն տան տիկնոջ։
 — Ինչո՞ւ կը ժողուըռուիք կոր Արիսողոմ աղան,
 հարցուց տան տիկինը։
 — Երթամ պիտի, պիտի երթամ։ Միտքս փո-
 խեցի չպիտի կարգուիմ։
 — Բարկացուցի՞ն ձեզի։
 — Ոչ։
 — Ինչո՞ւ ուրեմն բարկացած էք։
 — Բարկացած չեմ։
 — Քեւզում Արիսողոմ աղան, Մանուկ աղան
 յիսուն սոկի պիտի ուզէր քեզմէ, ուզէ՞ց։
 — Ուզեց։

— Սիսալմունք մըն է եղեր:
— Սիսալմունք է եղեր:
— Այո՛, յիսուն սոկի չպիտի ըլլայ այլ հո-
րիւր յիսուն սոկիւ Սա բարսւթիւնն ըրէ՛ մեզի:
Դուն քիպար մարդ ես: Մենք ալ քաւ սայէյէդ
պարտքէ կ'ազատինք:

Արիսողոմ աղան սնտուկներն կապելն, փողոց
ցատկելն, երեք բեռնակիր բերելն ու սնտուկները
դուրս հանելն մէկ կ'ընէ:

Սափրիչը, քահանան, արկին ծուշան և Մա-
նուկ աղան կը հետեւին իրեն մինչեւ... հիւրանո-
ցին դուռը, ուսկից կը մանէ Արիսողոմ աղան և կը
հեռանան իրեն հետեւողները, բացի Մանուկ աղա-
յէն որ կ'ընկերանայ Արիսողոմ աղային հաշիւները
կարգադրելու համար:

Այն օրէն ի վեր Արիսողոմ աղան տեսնող չե-
զաւ, միայն թէ քանի մը շաբաթներ նոյն հիւրա-
նոցին դրան առջեւ կը տեսնուէին խմբագիրք, հե-
ղինակք, բանասանեղծք իրենց թեւին տակը թղթեայ
ծրարներ ունենալով:

Այսպէս ուրեմն կարգուելու նպատակաւ Պոլիս
եկողն աղջիկ մը իսկ տեսնելու ժոմանակ չունեցաւ
և ինչպէս կ'ըսեն, բուրդ ու բապուն փախաւ մայ-
րաքաղաքէս: Բայց անջնջելի յիշտատակ մը թողոց
գրական մարդոց մաքին մէջ:

Երբ երկու երեք հեղինակք մէկտեղին «ինտոր
փախցուցինք սա Արիսողոմ աղան» կ'ըսեն ու կը
խնդան քէջ մը:

Իսկ երբ դրամական տագնաապի մէջ գտնուին
«Աստուած», Արիսողոմ աղա մը զրկէ մեզի» կ'ըսեն
և իրենց միաքով ու կը յուելուն, «խնդրեցէք զԱ-

քիսողոմ աղան և ամենայն ինչ յաւելցի ձեզ»:
Մեծատաւններն ալ կը յիշեն Արիսողոմ աղան
երբ գրական մարդ մը անսնց մեկենասութիւնը
խնդրէ:

— Արիսողոմ աղա չենք մենք կ'ըսեն:
Իսկ մենք որ ներկայացած չենք Արիսո-
ղոմ աղային, կը հրատարակենք սոյն գործն, ոչ
այնքան մեղադրելու նպատակաւ ազգային խմբա-
գիրներն, հեղինակներն, բանասանեղծներն և այլն,
որքան ներկայացնելու համար ապագայ սերնդեան՝
ժամանակիս գյական մարդոց ողբալի կացութիւնն,
և գրականութեան մասին ազգային մեծատուննե-
րու սարսափելի անտարբերութիւնը:

(Վերջ)

“ՄԱՍԻՍ,,

ՏՊԱՐԱՆ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԿԼ ՄՏԱՆՉԱԿ

ԱՄԷՆ ԼԵԶՈՒԿ, ՑՊԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՄԱՏՈՒՄ, ԱԺԱՆ ԵՒ ՃԱՇԱԿԱԽՈՐ

ԿԱՏԱՐԵԱԼ ՃԵՏԱՊԱՀՈՒԹԻՒՆ

ՓՈՂՈՑ ՎԵՍՏԱՀ ԹԻՒ 21. ՍՊՅԵՆ. (Պուլկարիա)



50170

“ՄԱՍԻՍ”, ԳՐԱՏԱԿՈՒԹԻՒՆԵՐԸ

| | Լ. ել. |
|---|-----------|
| 1.— Ասուր-Նազիր-Աբալ | Կ. ՄԵՀԵԱՆ |
| 2.— Մեծապատճեն Մուրացկանները Յ. ՊԱՐՈՆՆԵԱՆ | 30 |
| 3.— “Մասիս”, Տարեգիրք Ա. Տարի Ա. ՍԵԽԱՆ | 100 |

ՄԱՍԻՍԻ ՏԱԿ է

ԹԱՇԿԱԳԻՐՆ ՀԱՄԲՈՅՑԻ

Կառակերգութիւն մեկ առար



ԱՐՏԱՍՈՎԱՄԱՆ՝ 10 Ֆր. Ֆր.

Դիմել՝ ԳՐԱՏԱԿՈՒԹԻՒՆ ԱՐԱՐԱՏԻ. — Վեսլեց 21, Սոմիա (Պուլկարդիա)